Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

2-50

342

34n
10533

ԵԶՆԻԿ

ՄԱՏԵՆԱԳԻՐՔ

ՓԱՐԻԶ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

PARIS. Typ. arm. de Walder rue Bonaparte 44.

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ
Ա. Ա.

Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՏԵԱՌՆ Տ. ՄԱՏԹԷՈՍԻ

ԵՒ

Ի պատրիարքութեան

ՏԵԱՌՆ Տ. ՍԱՐԳԻՍԻ

9(47.925)ԵԱՇ4
Ե-21
Ա·

ԵՂՆԵԿԱՑ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԿՈՉԲԱՑԻՈՑ

ԵՊԻՍ ԱՊԱՆԴՈՑ

L004
L838

ГОСУДАРСТВЕННАЯ ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
1922
Ա. ՍՅԱՍ

ՓԱՐԻԶ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

—

1860

12773

289 Ш2

ԵՋԵՐԿԱՑ

ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԿՈՂԲԱՑԻՈՑ

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

ԵՂԵ ԱՂԱՆԴՈՑ ՀԵԹԱՆՈՍԱՑՆ.

Ա. ՅՈՐԺԱՄ զաներևութէն և զնորին զմշտնջենաւոր զօրութենէն ճառիցէ ոք, քանզի մարմնաւոր լեալ է, պարտի զմիտս յատակել և զխորհուրդս արբել, զյոյզս շարժմանց պարզել, զի յայն զոր առաջի եղ՝ հասանել կարասցէ: Նա և որ ընդ ճառագայթս արեգականն հայել կամիցի, պարտի զպղտորութիւն աչացն՝ զաղտն և զբիժն ի բաց պարզել, զի մի՛ ժպարքն՝ որ զբբօքն շողայցեն, արգել հայելոյ ի յատակութիւն լուսոյն լիցին:

Եւ արդ քանզի մի էութիւնն անբնին է և անհաս բնութեամբ, առ նորա անբննութիւնն ընծայութիւն անգիտութեան մատուցանելի է, և առ էութիւն նորին դաւանութիւն գիտութեան և ոչ բննութեան: Զի որ էն՝ պարտի զի մշտնջենաւոր իցէ և անսկիզբն, որոյ ոչ սկիզբն յումեքէ առեալ լինելոյ, և ոչ ունի զոք ի վեր քան զինքն, զոր պարտ իցէ նմա պատճառ կարծել կամ իմանալ՝ եթէ ի նմանէ իցէ առեալ սկիզբն էանալոյ: Զի ոչ ոք է առաջին քան զնա, և ոչ ոք է յետոյ նման նմա, և ոչ ընկեր հաւասար նորին, և ոչ էութիւն հակառակ նմա, և ոչ գոյութիւն ընդդիմակաց, և ոչ բնութիւն հիւթաբեր ի պէտս նորա, և ոչ նիւթ ինչ՝ յորմէ առնիցէ զոր առնելոց իցէ. այլ ինքն է պատճառ ամենայնի, որ ի լինելն և ի գոյանալ եկին ի չգոյէ և ի գոյէ. որպէս երկինք վերինք և որ ինչ յերկինս. և երկինք երևելիք որ ի ջուրց. և երկիր, և ամենայն ի նմանէ և ի նմա. յորմէ ամենայն, և ինքն ոչ յումեքէ: Որոյ ըստ իբրաքանչիւր կարգաց առեալ է սկիզբն

ղ[ն]ելոյ աներևութիցն անմարմնոց, և երևելեացն մարմնաւորաց. որ բաւականն է որպէս ի տալն զկենդանութիւնն, նոյնպէս և ի գիտութիւն իւրոյ անարար էութեանն ժամանեցուցանել, և յիւրոյ արարածոցն ի հաստումն ըստ իւրաքանչիւր բնութեանց ածել: Որ ոչ այնու միայն զարմանալի է, զի ածն ի չգոյէ ի գոյ զչգոյան, և եցոյց յոչնչէ ինչ զչէան, այլ զի և անարատ և անխախուտ պահէ ըզլեալսն. որոց և յառաջնումն իսկ աննախանձ ետ զկենդանութիւնն, առ ի յայտնելոյ զիւրոյ զբարերարութեանն հանդէս:

Քանզի ոչ եթէ կարօտ ինչ ոք իւիք էր, եթէ վասն այնորիկ խնայիցէ՝ իւր միայնոյ սեպհականեալ զկենդանութիւնն. և անզօր և տկար, եթէ զանձին եւեթ խորհիցէ զզօրութիւնն: Եւ ոչ նիւազ ի գիտութենէ, եթէ ինքեան եւեթ պահիցէ զգիտութիւնն և ոչ կարօտ յիմաստութենէ, եթէ յորժամ այլոց բաշխիցէ զիմաստութիւնն իւր, կարծիք ինչ կարօտութեան ի ներքս մտանիցեն: Այլ կենդանի է և աղբիւր կենդանութեան. տայ ամենայնի

կենդանութիւն, և ինքն կայ լի և յանըսպառ կենդանութեան. և զօրացուցանէ զանզօրս մեծազօր զօրութեամբ, և ինքն ոչ Թերանայ ի զօրացուցիչ զօրութենէն. և պարգևէ գիտութիւն ամենայն անգիտաց, և ինքն բաւանդակ ունի յինքեան զամենագէտ գիտութիւնն. և բղխէ յամենեսին զանպակաս իմաստութիւնն, և ինքըն մնայ անխախուտ յամենահնար իմաստութեանն:

ԵԹԷ աղբերք մշտաբուղխք, որք ի նոքա հրամանէ կարգեցան, հանապազ բղխեն և ոչ պակասեն, որոց բղխմունքն զայլոց կարօտութիւնս լնուն, և ինքեանք ի նմին յորդութեան կան մշտնջենաւորք, ո՞րչափ ևս առաւել այն՝ որ նոցա զյորդութիւն բղխմացն յօրինեաց, որ աղբիւրն է բարութեան. որ զամենայն զոր արար գեղեցիկս արար, այս ինքն զբանաւորս և զանբանաւորս, զմտաւորս և զանմտաւորս, զխօսունս և զանխօսունս, զասունս և զանասունս: Եւ բանաւորաց և մտաւորաց յիւրաքանչիւր առաքինութեանց կարգեաց ստանալ զբարութիւն, և ոչ ըզ-

գեղեցկութիւն. զի գեղեցկութեանն տուիչ ինքն է, և բարութեանն՝ զանձնիշխանութիւնն արար պատճառ:

Ե. Ապա եթէ ինչ յարարածոց՝ որ գեղեցիկ է՝ այն ի բարւոյ արարչէ կարծիցի՞ ոմանց, որպէս Յունացն հեթանոսաց և արանցն մոգուց և հերձուածողաց, որ չար իմն էութիւն հակառակ բարւոյ դնեն, զոր հիւղն կոչեն՝ որ Թարգմանի նիւթ, մեր առաջին և նախաբարբառ պատասխանի այն է՝ եթէ ի բարերար արարչէն չար ինչ չիք լեալ. և չիք ինչ չար որ բնութեամբ չար իցէ. և ոչ է արարիչ չարաց իրաց, այլ բարեաց:

Եւ արդ զո՞ր ինչ յարարածոցն բարի կարծիցեն, կամ զո՞ր չար. զի բազում անգամ զոր բարին կարծիցեն, միայն առանձինն՝ առանց ընկերին խառնութեան՝ վնասակար լինի, յամենեցունց առ հասարակ վկայեալ: Արեգակն թէ բարի է, և առանց օդոյ խառնուածոյ այրիչ և ցամաքեցուցիչ է. նոյնպէս և լուսին խոնաւական բնութիւն, առանց խառնուածոյ չերմութեան արեգական, վնասակար

և ապականիչ է: Եւ օդ, առանց ցօղոյ խոնաւութեան և ջերմութեան, վնասակար և ապականիչ է. և ջուրք զհող երկրի ողողանեն և ապականեն. և երկիր առանց ջուրց պատառի և խորխոլի: Եւ այսպէս չորեքին բնութիւնքն, ուստի աշխարհս կազմեալ և կայ, առանձինն' ապականիչք են միմեանց, և խառնեալ ընդ ընկերին' օգտակարք և շահաւորք: Եւ զի այս այսպէս է, ամենեցուն յայտնի է' որ կամին ուսանել:

Ապա ուրեմն է ինչ զօրութիւն ծածուկ, որ զապականիչսն միմեանց խառնուածովք արար օգտակարս իրերաց: Եւ ոչ առողջ միտս ունին, ոչ զշարժունն' այլ զշարժիչն պարտին փառաւորել. և ոչ ընդ արբանեական, այլ ընդ վարիչն պարտին զարմանալ. և ոչ ընդ գնայունն, այլ ընդ գնացուցիչն. քանզի և նոքին իսկ իւրաքանչիւր փոփոխմամբք յայտ առնեն, եթէ է ոմն' որ փոփոխէ զնոսա: Արեգակն ծագելովն և վերանալով և ի մուտս գառնալով. և լուսին ամսամբ լընլով և նուազելով. և այլք ևս յարարա-

ծոյն ըստ իւրաքանչիւր բնութեանց շարժելովն և դադարելովն: Եւ արդ չէ առողջ մտաց՝ զշարժիչն և զփոփոխիչն Աղուել, և շարժնոցն և փոփոխելեաց պաշտօն տանել և երկրպագութիւն մատուցանել. զի որ շարժին և փոփոխի՝ չէ էական. այլ կամ լեալ յոմեքէ և յիմեքէ, և կամ հաստեալ ի չգոյէ: Եւ որ էն և շարժէ զամենայն, ինքն ոչ շարժի և ոչ փոփոխի. քանզի էական է և անշարժական է:

Գ. Եւ զի մի էութիւն մշտնջենաւորական է և պատճառ ամենեցուն լինելոյ, այնմ՝ և որ զբազմաստուածեան պաշտամունն մուծին՝ վկայեն, և պատճառեն այսպէս: Մեք, ասեն, քանզի չեմք բաւական մերձենալ յամենեցունց պատճառն, ըստ ի Գոյն ի մշտնջենաւորն և յանմատոյցն, վասն այնորիկ այլովքն խոնարհագունիւք նմա պաշտօն մատուցանեմք. և որովք նմա զպաշտօնն մատուցանեմք, հարկ է և զնոսա ողոքել զոհիւք և նուիրօք:

Եթէ որպէս վկայենն՝ մի է պատճառ ամենեցուն, և նոյն էական և մշտնջենա-

ւոր, յայտ է Թէ այլքն ոչ էականք են և ոչ մշտնջենաւորք. և զիարդ չէականքն և չմշտնջենաւորք ընդ էականին և ընդ մշտնջենաւորին երկրպագութիւն առնուցուն: Եւ մանաւանդ մարմնաւորք և երեւելիք, որպէս արեգակն և լուսին և աստեղք և հուր և ջուր և երկիր, որ ի մոգուց և ի հեթանոսաց պաշտին:

Ապա եթէ ասիցէ ոք յայնպիսեացն. Բարիոք է, զի մի էութիւն պատճառ ամենայնի ասէք. արդ եթէ մի էութիւն է՝ որ զամենայն յամենայնի ազդեցուցանէ, և չիք ինչ նմա հակառակ, մեզ զերախտաւորսն և զբարերարն՝ որ ի նմանէ կարգեալ են՝ զիարդ հրամայէք անարգել:

Ասասցուք, եթէ զերախտաւորսն և զբարերարս՝ որ ի նմանէ կարգեցան՝ մեք ոչ հրամայեմք անարգել. բայց դարձեալ և ոչ զպաշտօն արարչին՝ արարածոցն մատուցանել. զի չիք ոք բարերար և երախտաւոր, բայց միայն որ արար և ոչ իննայեաց. և պահէ կենդանի զբանաւորսն աներևոյթս, և ոչ նախանձի. զհրեշտակաց ասեմ և զհոգւոց մարդկան, և

զգայականացն անշնչից յիւրաքանչիւր կայանի:

Արդ բարիոք է արեգակն և գեղեցիկ բնութեամբ. և մեզ և ամենայն արարածոց՝ որ ի ներքոյ երկնից՝ յօգուտ և ի դարման, իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ՝ առ ի զխաւարն և զտուերն զերկուց մեծացն անօթոց ի բաց ի միջոյ փարատելոյ. բայց ինքն եթէ իցէ և եթէ չիցէ՝ զայն ոչ գիտէ, զի չէ ի բանաւորաց և ի մտաւորաց. նոյնպէս և այլքն յանշնչոցն արարածոց: Եւ թէ ջուր թէ հուր թէ երկիր թէ օդ, թէ իցեն և թէ չիցեն՝ զայն ոչ գիտեն, և զպատասխանութիւնն՝ յոր կարգեցան՝ անդադար մատուցանեն, վարելով այնր՝ որ կազմեացն զնոսա: Եւ մեք ոչ անարգեմք զնոսա, և ոչ պաշտօն մատուցանեմք նոցա. այլ հայեցեալ ընդ նոսա՝ փառաւորեմք զկարգիչն նոցա և զյօրինիչ, զի մեզ ի պէտս են, և կարգչին իւրեանց ի փառս:

Զիարդ պաշտիցեմք զարեգակն, որ մերթ կոչի իրև [illegible]

Ս.Ս.Հ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Public Library
7/31 1922

յոր կարգեցաւ՝ հասանելոյ, և մերթ երբեմն զօղէ իբրև զարհուրեալ, և տայ տեղի խաւարին լնուլ զմիջոց ի մեծի տանս. և ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դառնայ՝ առ ի յանդիմանութիւն և յամօթ իւրոցն պաշտօնէից. յայտ առարեալ եթէ չեմ ես արժանի պաշտաման, այլ այն՝ որ զիս և զամենայն տիւ լուսաւոր պահէ, և զցայգ զօղեցուցանէ. և երբէք երբէք խաւարեցուցանէ՝ և իբրև խօսուն բերանով անշշունչն բողոքէ՝ եթէ չեմ արժանի պաշտօն առնլոյ այլ պաշտօն հարկանելոյ: Կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւծանի, զրեթէ և մեռանի, և ապա սկիզբն առնու կենդանանալոյ, զի քեզ զյարուցեան օրինակն նկարիցէ: Կամ զօդ՝ որ մերթ գոչիցէ վարազացեալ՝ հրամանաւ, և մերթ սարսէ ի գոչելոյն՝ սաստիւ: Եւ կամ զիւր՝ որում և զքեզ իսկ երկրորդ արարիչ կազմեաց յօրինիչն, զի յորժամ կամիցիս՝ վառիցես, և յորժամ կամիցիս՝ խամրուցանիցես: Կամ զերկիր՝ որ հանապազ բրեմբ, և ցանկ կոխեմբ, և զաղբ զմեր

և զանազանոց մերոց ի նա հեղումք: Կամ ցուրա՝ զոր հանապազն ըմպեմք, և զանուշութիւն նոցա ի ժանտահոտութիւն ի փորի մերում դարձուցանեմք, և զներքին և զարտաքին աղտեղութիւնս մեր նոքօք սրբեմք:

Եւ այսու ամենայնիւ յայտ է՝ Ոչ զոր առ աստուածն ունին, անարգեն շատք և անպատուեն: Նա և դողումն և տակուցըն ունի զարարածան, յորժամ զգաստիւ արարչին որ նոցա մատուցանիցէ. և յայտ առնէ երկիր շարժելովն, և լուսաւորքն խաւարելովն, և օդըն գժդմելովն և քըստմնելով, և ծով սաստկութեամբ ալեացն սպառնալեօք: Զի Ոչ ոչ սաստ արարչին նահանջէր զնոսա, մի մի ի նոցանէն բաւական էր զամենեսին սատակել՝ առ ի խնդրելոյ զվրէժ անարգանաց հաստատակաց արարչին: Կամ ծով ծածկելով, որ տկար աւազովն պաշարեալ՝ չիշխէ անցանել ըստ հրամանի: Կամ երկիր կլանելով, որ ի վերայ ոչընչի կայ հաստատեալ, և յոչինչ դառնալ և դարձուցանել չէ պատշաճ զիւր բնակիչսն: Կամ հողմ սպառ-

տասեցուցանելով, որ կենդանութիւնն է ամենայն շնչաւորաց, և չիշխէ արգելուլ զկենդանութիւնն՝ առանց հրամանի կենդանապահին: Կամ օղք երբեմն զաւնամանիսն շնչելով, և երբեմն զխորշակն բերելով. և լինէր ամենայն ինչ ոչ ինչ:

Այլ նա աւասիկ իբրև զկաւս իմն լծեալ ի չորից երիվարաց զաշխարհս տեսանեմք. ի ջերմութենէ ի ցրտութենէ ի ցամաքութենէ և ի խոնաւութենէ. և զօրութիւն իմն ծածուկ կառավար, որ զչորս կազեցողսն ընդ միմեանս ի հաշտութեան և ի հաւանութեան պահեալ նուաճէր: Ամենայն կառք ի համազգեաց երիվարաց լծին, բայց միայն այսց կառաց՝ որ ի չհամազգեաց լծեալ են. և որ ի համազգեացն լծեալ են՝ երբեմն սայթաքին, երբեմն օձտեն և ի տապնապի զկառավարն և զանձինս կացուցանեն. և երբեմն խորտակումն իսկ կառացն զործեն. և յորժամ ողջ կառքն իցեն, և ողջ կառավարն, և վարժ երիվարքն, ուշ եղեալ ի հանդէպ երեսացն ևեթ արշաւին. և այս կառք զարմանալիք ի հա-

կառակ և յանձման երիվարաց լծեալ և ծաժուկ ձեռամբ ուղղեալք, ոչ ի մի միայն կողմն ի հանդէպ երեսացն ևեթ արշաւին, այլ յամենայն կողմանս վարգին, և ընդ հանուր արշաւին, և ընդ բնաւս սլանան, և ամենայնի բաւական են: Յորժամ ընդ արևելս ընթանան, չէ ինչ արգել՝ Թէ ընդ արևմուտս ոչ արշաւիցին, և յորժամ ընդ հիւսիսի վարգին, չէ ինչ արգել՝ Թէ ընդ հարաւ ոչ սուրայցեն. զի ձեռն կառավարին բաւական է յամենայն կողմանս դիմեցուցանել, և ընդ չորս անկիւնս տիեզերաց արշաւեցուցանել:

Գ. Դարձեալ առ այսպիսի ճշմարիտ ասացածս անպատշաճ հարցուածս մատուցանեն. ուստի իսկ բնաւ են, ասեն, այդպիսի անհարթութիւնք. զի Թէ Աստուած բարեաց արարիչ է և ոչ չարաց իրաց, ուստի է խաւար, ուստի են չարիք, ուստի են աշխատութիւնք. ուստի են լլկանք՝ մերթ ի ցրտոյ մերթ ի խորշակէ: Կամ ուստի են անզգամութիւնք, զի տեսանեմք երկուս արս միազգիս ընդ միմեանց գրգռեալ, միմեանց մահու և

ոչ եամբ ծարաւի են: Եւ այլք զգերեզմանս կրկտեն, և զՔաղեալ մարմինս ընդ հողով՝ մերկացեալ խայտառակեալ՝ արևու ցուցանեն. և զմեծարեալ դին, առ փուԹի չծածկելոյ, Ցերևս և շանց ևս կուր արկանեն: Եւ է երբէք զի մին փախուցեալ երԹայցէ անձնապուր ուրեք զկեանս անձինն շահել, և միւսն ցասմամբ բորբոքեալ՝ սրով զկնի ընԹացեալ, ոչ դադարէ՝ մինչև յագեցուցանէ զցասումն. ուստի է այն անյագ ցասումնըն: Եւ ոմն մերկանայ զհանդերձս ընկերին, և Ցէ ընդդէմ դառնայցէ յարևէ ևս արկանէ: Եւ ուրումն ի մտի եղեալ գողանալ զայլոյ ամուսնուԹիւն, և ելեալ անօրէնուԹեամբ յօտար մահիճս, չտայ լինել հայր որդոյ այնմ՝ որ օրինօքն ամուսնացեալ իցէ: Եւ երբէք երբէք պատերազմունք շարժին, ուր մեղաւոր և արդար առ հասարակ կոտորին, և մահք տարաժամք և ախտք չարաչարք: Եւ զի պիտոյ է մեզ բնաւ՝մի ըստ միոջէ Ցուել, այլ համառօտ իսկ ասել՝ Ցէ ուստի է այս ամենայն, և ով է սկիզբն և գործիչ

այնպիսի անպատեհից, բայց եթէ իցէ ինչ չար զօրութիւն՝ որ զայն ամենայն անհարթութիւնս տայցէ գործել, և ինքն իսկ արարիչ իցէ նոցա. զի զԱստուած արարիչ ասել այնպիսի իրաց անպատշաճ է. և ոչ ի նմանէ ունել զգոյութիւն չարեաց: Զիարդ մարթ է զայնպիսիսն յԱստուծոյ կարծել. զի Աստուած բարեբար է և լուսաւեանց արարիչ, և ի չարութեանց ինչ ի նա ոչ մերձենայ, և ոչ խնդալ ընդ այն ախորժէ, այլ և խոտէ և զգործան և զգործելիս. զի անընտանի են չարիք ի բնութենէ նորա:

Վասն որոյ՝ կարծի՝ թէ էր ինչ ընդ նմա, որում հիւղն անուն էր՝ որ է նիւթ, ուստի զամենայն արարածս արար և զատոյց ամենաւրեայն իմաստութեամբ. և զարդարեաց վայելչութեամբ. և յայնմ նիւթոյ պարտ է կարծել զչարիս, որ անիրան և անկերպարան էր և խառն ի խուռն օձտելով երթևեկէր, և կարօտէր Աստուծոյ արուեստագիտութեանն: Եւ Աստուած ոչ եթող զնա հանապազ խառն ի խուռն վարել, այլ եկն յառնել զա-

բարձա, և ի յոուԹեանցն նորա յազնուագոյնան զատուցանել կամեցաւ. և այնչափ ինչ արար ի նմանէ՝ որչափ Աստուծոյ վայելէր առնել արարածս. և որ ինչ մրրախառն էր ի նմանէ, և չէր պատշաճ արարչուԹեան, զայն եՀող. և յայնմ մրրոյ են չարիք մարդկան:

Ե. Պատասխանի. արդարև իսկ չարիքն որ լինին՝ ի տարակուսի կացուցանեն զբազումս, և բազում այլք աւագք վասն նորին խնդիրս մեծամեծս արարին: Կէսք անակզբնակից ինչ ընդ Աստուծոյ կամեցան դնել. և կէսք ըստ նմանէ նիւԹ ինչ, զոր հիւղն անուանեն, Թէ ի նմանէ արար զարարածս. և կէսք հրաժարեցին բնաւ ի խնդրելոյ, որպէս Թէ ամենևին այնմ խնդրոյ չիք սպառուած: Բայց մեզ հարկ եղև ի սկզբոյ բարեկամաց, և յոչ ուղիղ հայելոյ ընդդիմակացն, ըստ մեբում տկարուԹեան սպասինեալ յԱստուծոյ շնորհան, մխել ի խնդիր ճառիցս. մանաւանդ զի յուսացեալ ևս վստահ էցեմք յուղղոց ունկնդրաց ի կամացն մըտադիւրուԹիւն. ուստի և լինիցի նոցա

զճշմարիտն ուսանել, և մեզ ոչ ի զուր ինչ զբանս ծախել: Քանզի ոչ եթէ անիրաւութեամբ ինչ յաղթել ջանամք, այլ իրաւամբք զճշմարիտն ուսանել:

Որով յայտ է թէ երկուց անարարաց ի միասին չէ մարթ լինել: Զի ուր երկուքն ի միասին իցեն, հարկ է թէ իցէ ինչ՝ որ զատանիցէ ի միջի: Արդ զիաքդ համարիցին զԱստուած. իբրև ի տեղւոջ ինչ յամենայն ի հիւղն լինել, եթէ ի միում ինչ ի մասին նորա: Եթէ զամենայն զԱստուած յամենայնի ի հիւղն լինել ասիցեն, որչափ մեծ ևս ասիցեն զԱստուած, գտանի հիւղն մեծ քան զնա: Քանզի յորում իցէ ոք, այն յորում էն, քան զայն որ ի նմա էն՝ մեծ գտանի, զի բաւական եղև տանել բոլոր զնա. և եթէ ի մասն ինչ միայն ի նմանէ, և այնպէս բիւրապատիկ իսկ մեծ քան զնա հիւղն գտանի, զի սակաւ ինչ մասն նորա բաւական եղև ընդունել զամենայն զնա: Եւ եթէ ոչ ի նմա, և ոչ ի մասին ինչ նորա, յայտ է՝ թէ այլ ինչ էր անջըրպետ ընդ մէջ երկոցուն, մեծ քան զերկոսին. և ոչ միայն երկու անսկզբնա-

կիցք գտանին, այլ երեք. Աստուած, և հիւղն, և անջրպետն, և մանաւանդ մեծ ևս անջրպետն քան զերկոսին:

Իսկ եթէ էր երբէք հիւղն անզարդ և անարդ և աննկերպարան, և զարդարեաց զնա Աստուած, քանզի ի յոռութեանցն նորա ի լաւն դարձուցանել կամեցաւ, ապա ուրեմն էր երբեմն՝ զի յանզարդս և յանարդս և յանկերպարանս էր Աստուած, և հարկ էր թէ իբրև զհիւղն իսկ և նա խառն ի խուռն վարէր:

Եւ թէ յամենայն ի հիւղն՝ որպէս ասեն՝ էր Աստուած, յորժամ զնա ի զարդ և ի յարդ և ի կերպարանս ածէր, ինքն յո՞ մարթ էր ամփոփել, զի չէր ուրեք մարթ ամփոփելոյ: Մի՛ թէ և զինքն ընդ հիւղին ի զարդս ի յարդս և՞ ի կերպարանս ածէր, քանզի չգոյր ուրեք տեղի ամփոփելոյ. որ յետնոյ ամպարշտութեանն է:

Ապա թէ ասիցեն՝ թէ հիւղն ի յԱստուած էր, ըստ նմին օրինակի պարտ էր խնդրել՝ որպէս զմտ ինչ* ի նմանէ,

---

* Զատիկ:

որպէս զանասունս ի մէջ օդոյ՝ որք ի նմա են և զատուցեալք ի նմանէ, Թէ իբրև ի տեղւոջ՝ որպէս և ջուրք յերկրի:

Եւ զհիւղեայն ասեն՝ Թէ անճահ և անզարդ և անարդ և չար էր, եԹէ ըստ նոցա մտացն իցէ, ապա չարեաց տեղի էր Աստուած. զի անհեղեղքն և անզարդքն ի նմա էին. որ անհնարին անօրէնուԹիւն է, կարծել զԱստուծոյ Թէ երբեմն ասպլընջական չարեաց էր, և ապա արարիչ չարեաց. նա և բաժանելի ևս՝ Թէ ի նմա իբրև ի տեղւոջ էր:

Զ. Արդ հարկ է ի պատճառս չարեացն գալ, և ցուցանել՝ Թէ ուստի լինին չարիքն, և չէ պատճառ չարեաց Աստուած՝ այնու զի առընԹեր նմա զհիւղն դնեն:

Եւ արդ զՈր հիւղ առ ձեռն դնիցեն Աստուծոյ. ոչ ապաքէն զայն՝ ուստի զաշխարհս արար. որ անկերպարանն և անզարդ և անարդ էր: Զի տեսանեմք զաշխարհս ի պէսպէս կերպարանս և ի զարդս և ի յարդս. ապա ուրեմն կերպարանաց և զարդուց և արդուց արարիչ է Աստուած, և ոչ բնուԹեանց: Իսկ եԹէ

Հարչի այն գործ է՝ զբնութիւնս առնել, և ոչ միայն արդս և զարդս և կերպարանս, յայտ է եթէ աւելորդ է կարծել՝ թէ ի նիւթոյ ինչ իմեքէ յընթերակացէ արար Աստուած զաշխարհս, այլ յոչընչէ և ի չգոյէ:

Նա և զմարդիկ տեսանեմք, զի ի չգոյէ առնեն ինչ. որպէս շինողքդ ոչ ի քաղաքաց քաղաքս առնեն, և ոչ ի տաճարաց տաճարս: Նոքա քանզի ամենևին յոչընչէ չկարեն ինչ առնել, քարինքն՝ զոր ի շինածան յօրինեն՝ ոչ ևս քարինք կոչին, այլ կամ քաղաքք կամ տաճարք. զի ոչ եթէ բնութեան գործ է քաղաքս կամ տաճարս, այլ արուեստին է՝ որ ի բնութեանն: Եւ արուեստն ոչ եթէ յընթերակացէ ինչ իմեքէ՝ որ ի բնութիւնն իցէ՝ առնու զարուեստագիտութիւնն, այլ ի դիպացն որ դիպին ի բնութեանցն: Քանզի ոչ եթէ անձնաւոր ինչ յանձնաւորաց զարուեստն կարէ ցուցանել, այլ ի դիպացն որք դիպինն. որպէս ի դարբնութենէ դարբինն, և ի հիւանդութենէ հիւան: Զի մարդ և յառաջագոյն քան զարուեստն

է. բայց արուեստն չէ՝ եթէ ոչ նախ մարդն իցէ. ուստի զարուեստն յոչընչէ ի մարդիկ պատշաճեալ հարկ է ասել: Եւ եթէ առ մարդկան այսպէս, որչափ ևս առաւել պատշաճ իցէ զԱստուծոյ իմանալ՝ Թէ ոչ միայն արդուց և զարդուց և կերպարանաց արարիչ է, այլ յոչընչէ առնել բաւական է բնութիւնս, և ոչ արգասիս նիւթ՝ յորմէ Աստուած ընտրեաց զբարին ի մի Թեր, և զչարն մերրախառն ի միւս կողմն, ուստի ջանայ մերրախառն զյստակն պղտորել:

Է. Զարիքս որ լինին ուստի՞ իցեն:

Հարցցուք և մեք. չարիքն որք լինին անձինք ինչ իցեն, Թէ արգասիք անձանց:

Ասեն. ի դէպ է կարծել՝ եթէ արգասիք անձանց:

Եւ հիւղն, զոր ասեն անարգասաւոր և անկերպարան, զիարդ անարգասաւորն և անկերպարանն՝ յայլս կարէր արդիւնս ծնուցանել, եթէ ոչ ի դիպացն լինիցին չարիքն, և ոչ ի նմանէ: Զի սպանութիւնն, չէ անձն ինչ, և ոչ շնութիւնն անձն ինչ է, և ոչ դարձեալ այլքն մի

ըստ միոջէ ի չարեացն. այլ որպէս ի դպրութենէ դպիր կոչի, և ի ճարտարութենէ ճարտար, և ի բժշկութենէ բժիշկ, և այն ոչ եթէ անձինք ինչ են, այլ յիրաց անարի առնուն զանուանս, նոյնպէս և չարիքն ի դիպացն առնուն զանուանումն:

Ապա եթէ և զայլ ոք իմանայցեն զըրդիչ և զրգռիչ՝ որ արկանիցէ ի միտս մարդկան զչարիսն, և նա ի գործոյն՝ զոր գործէ՝ առնու զանուն չարութեան: Բայց զայն պարտ է գիտել, թէ զոր գործէ ինչ ոք՝ ոչ ինքն նոյն է. որպէս բրուտն յորժամ անօթս գործիցէ՝ ոչ ինքն անօթ լինի, այլ գործիչ է անօթոցն, ուստի և զանուանումն արուեստին առնու. նոյնպէս և չարագործն ի չարն գործելոյ առնու զանուն չարութեանն՝ եթէ շուն իցէ և եթէ սպանօղ: Ապա ուրեմն յիրաւի ասին մարդիկ արարիչք չարեաց, զի ինքեանք են պատճառք առնելոյ և չառնելոյ: Եւ զչարիսն ոչ պարտիմք անձինս անուանել, այլ արդասիս անձանց և չար:

Իսկ եթէ ի նմին յամառութեան կացցեն՝ թէ արդարև անարդ և անարգասուր

էր հիւղն, և Աստուած աճ զնա ի զարդ և ի կերպարանս և յարգասիս, ապա զԱստուած դնեն պատճառս չարեացն: Լաւ էր լեալ՝ Թէ նոյնպիսի կացեալ էր անհեդեդ և անարգասաւոր, քան զալ յարգասիսն և ի կերպարանս, և լինել պատճառ չարեաց այլոց: Ֆանզի զինչ մարթի ոք լինել՝ որ իցէ Թէ անկերպարան իցէ. նա և ասելն անկերպարան՝ զկերպարանացն յայտ առնէ: Իսկ եԹէ էր ինչ անձնաւոր և կերպարանաւոր, աւելորդ է ասել արարիչ զԱստուած:

Այլ այնու, ասեն, զի յանարդուԹենէն և յանհեդեդուԹենէն դարձոյց ի զարդ և ի կերպարանս, յիրաւի կոչի արարիչ:

Արդ այնմ նման է, յորժամ ի քարանց ոք շինուածս առնիցէ՝ պատշաճելոյն և յօրինելոյն միայն արարիչ է, և ոչ բնուԹեանն: Եւ արդ յինչ ինչ արդեօք արար Աստուած զանկերպարանն: ի լաւ ինչ Թէ ի յոռի: ԵԹէ ասիցեն՝ եԹէ ի լաւ, զչարիան՝ որ լինին՝ պարտին խնդրել, Թէ ուստի լինին: Ուրեմն արգասիքն ոչ նոյնպիսի մնացին՝ որպէս և էինն, այլ

զի ի լաւն դարձեալ՝ լաւք ևեթ երևեցին: Ապա եթէ ի յոռի ինչ դարձան, իշխեացեն ասել՝ թէ չարեացն պատճառ Աստուած է, զի նա զարգասիսն ի լաւ անդր դարձոյց:

Այլ ասեն՝ թէ զյստակն ի մի կողմն ընտրեաց, ուստի զարարածն արար, և զմրրախառն եթող:

Ասասցուք. որպէս զի թէ կարող էր և զայն յստակել և զչարիսն ի միջոյ բառնալ, և ոչ կամեցաւ զայն ի միջոյ բառնալ, ապա պատճառս չարեացն պարտ է զնա ասել. զի ի կիսոյն նորա արար բարի արարուածս, և զկէսն նորա եթող նոյնպիսիս՝ յապականութիւն լինելոյ բարւոք արարածոցն: Եւ եթէ ճշմարտիւ ոք քննիցէ զիրան՝ գտանէ յանհնարին վտանգս եկեալ զհիւղն քան զառաջին անկազմութիւնն, զի նախ քան զընտրելն և զզգալն զվտանգսն չարեաց՝ յապահովի և յանհոգութեան կայր. և արդ յառնլոյ զազդմունս չարեացն՝ ի տագնապի և ի տարակուսի կայ: Եւ թէ կամիս՝ ի մարդոյ իսկ առ օրինակ. զի նախ քան ըզ-

պատկերանալն և լինել կենդանի, անմասն էր ի չարեաց. և յորժամ գայ ի չափ հասակի մարդոյ, յայնժամ միտի ի չարիս յիւրմէ անձնիշխանութենէ: Նոյնպէս և ի բարերարութենէն, զոր ասեն յԱստուծոյ եղեալ հիւղեային, գտանի՝ զի ի յոռութիւնս եկն:

Ապա եթէ ի չկարելոյ Աստուծոյ բառնալ զչարիսն՝ եթող նոյնպիսի, այնու տկարութիւն ածեն զԱստուծով՝ կամ թէ բնութեամբ տկար իցէ, կամ թէ առ երկիւղի յաղթեցաւ յայլմէ զօրագունէ քան զնա: Եթէ յաղթեալ կասկածանօք ի մեծագունէ քան զնա ասիցեն, հարկ է թէ զչարիսն բռնադատիչս կամաց նորա դընեն: Եւ ընդէր ըստ նոցա բանիցն չարիքն ոչ լինէին աստուածք, որ Աստուծոյն յաղթել կարէին:

Ը. Դարձեալ հարցցուք զհիւղային. պնդզ ինչ բնութիւն իցէ, եթէ յօդուածով. զի ազգի ազգի գործուածք իրացն յայսպիսի քննութիւնս ածեն զմեզ: Զի եթէ պարզ բնութիւն էր հիւղն, և մենակերպ, և զաշխարհս ի յօդուածոց և ի պէտ պէս

բնութեանց և ի խառնուածոց հաստատեալ է, անհնարին է ասել՝ եթէ հիւղեայն լեալ իցէ: Վասն զի չէ մարդ յօդուածոյիցն ի միջէ պարզ բնութենէ ունել զհաստատութիւնն. քանզի յօդուածոյքն ի պարզական բնութեանցն յօդին:

Եւ եթէ ի պարզական բնութեանցն յօդեցաւ, ապա էր ժամանակ՝ յորժամ հիւղըն իսկ չէր ի միջի, զի ի պարզականացն յօդելոյ եղև հիւղն. ուստի լեալ իսկ երևի հիւղն, և ոչ անարար: Զի եթէ յօդուածով էր հիւղն, և յօդուածոյքն ի պարզականացն ունին զանձնաւորութիւն, ապա էր երբէք՝ զի չէր իսկ հիւղն, մինչ չև պարզականացն ի միմեանս յաբեալ էր. և եթէ էր ժամանակ՝ յորժամ զի հիւղն չէր. ապա չգոյր ժամանակ յորում չէր անարար: Զի եթէ Աստուած անարար էր, և պարզականքն ևս անարարք ուստի հիւղն յօդեցաւ, յայտ է թէ չէին երկուքն միայն անարարք, այլ հինգ:

Եւ արդ տեսցուք, հաւանք ինչ ընդ միմեանս էին բնութիւնքն, ուստի հիւղն յօդեցաւ, թէ հակառակք իրերաց. նա

աւասիկ տեսանեմք զբնութիւնն միմեանց հակառակս. քանզի ընդդիմակաց է հրոյ ջուր, և լուսոյ խաւար, և ցրտոյ ջերմ, և ցամաքի խոնաւ: Եւ ինքեան ինչ հակառակ և վնասակար չէ, բայց ընկերին. և անտի յայտ է՝ Թէ չեն ի միջէ նիւթոյ, և ոչ մի նիւթն ի չորից հակառակորդաց: Արդ եթէ մինչ էր նիւթըն՝ ոչ եթէ ինքեան հակառակ էր, այլ ընկերին. որպէս սպիտակ Թխոյ, և քաղցր դառին:

Թ. Եւ արդ զիւղեայն խնդիր Թողեալ՝ զոր նիւթն ամենայնի կոչեն, ի չարեացն խնդիր եկեացուք՝ զոր ի նմանէն իմանան: Զի յորժամ չարիքն յայտ լինիցին՝ Թէ չեն անձնաւորք, անտի և հիւղն յանդիմանի՝ Թէ ոչ էր երբէք, և ոչ բնութիւն անձնաւոր:

Արդ զմարդկան իսկ չարեաց հարցցուք. արդեաւթ անձանց իցեն, և եթէ անձինք ինչ չարիքն. զի որ ինչ ի մարմինս և ի հոգիս շարժմունք խաղան, ոչ մարթի ասել՝ Թէ այն մարդ իցէ, այլ կամական շարժմունք. զի մարդն անձնաւոր է, և

բարքն չանձնաւորք, որպէս ապանութիւն կամ շնութիւն՝ որ ի բարուցն գործիցին:

Արդ եթէ այնք՝ արարածք ինչ անձնաւորք իցեն, հարկ է և զպատճառն զոր դնեն՝ արարած անձնաւոր կարծել. զի որոյ մասն ինչ արարած է, յայտ է եթէ նա ամենևին իսկ արարած է. և որոյ մասնն չէ արարած, նա բնաւ իսկ չէ արարած: Ապա ուրեմն էր երբէք՝ զի բնաւ չէր ամենևին ինչ արարիչ բովանդակ, մինչ չև Աստուծոյ զմարդն արարեալ էր, ուստի չարիքն լինին: Քանզի մասանց չարեաց գտանի մարդն արարիչ, անտի յայտ է թէ և բովանդակ իսկ չարեացն արարիչ Աստուած է, զոր ամենևին մի երբէք լիցի ասել՝ թէ Աստուած չարեաց պատճառ իցէ, այլ այն որ իւրով կամօք զգործ չարեացն գործիցէ. և յումմէ չարն գործի՝ յիրում նմին և անուն չարութեան դնի, որպէս և յառաջագոյն իսկ ասացաք:

Ժ. Եւ արդ եկեսցուք յիրացն իսկ ի քնին, զի յորժամ ճշդիւ մրցութիւնք լի-

նիցին՝ դիւրաւ գյայտնութիւն ճառիցն յանդիման կացուցանիցեն:

Արդ զԱստուած բարի և բարերար ասիցեն: Հարկ է Ք. բարի և բարերար ասեն, և չարութիւն ինչ ի նա ոչ մերձենայ: Եւ եթէ այն այնպէս իցէ. նախ զշնութենէ և զպոռնկութենէ հարցցուք, և ապա զայլոցն նոյնպիսեաց: Եթէ Աստուծոյ կամօք գործէին այնպիսի չարիք, ընդէր ի գործելեաց չարեացն վրէժս պահանջէ. այլ այնու զի ըստ չարեաց գործոցն վրէժս պահանջիցէ՝ յայտ է եթէ ոչ ախորժէ զչարիսն, այլ ատեայ, և պատիժս պատուհասից ի վերայ գործելեացն ածէ. որոց, ըստ իւրեանց անմտութեան, իրաւունք նորա՝ չարութիւնք կարծին. որպէս և աժմ ապանողք յորժամ ի պատիժս մտանեն՝ ոչ բարերարս զպատժաձուան կոչեն, այլ չարարարս. քանզի այնպիսի բարք են չարագործաց՝ զիրաւունն անիրաւութիւն ասել: Բայց մեզ մի լիցի այնպիսի ինչ ասել. այլ զչարիսն ոչ անձնաւորս կարծել, այլ կամածինս:

Ապաքէն պոռնկութիւն և շնութիւն՝ ի

մերձենալոյ ի միմեանս առն և կնոջ լինին. եթէ յիւր կին որ օրինօք ամուսնացեալ մերձենայցէ վասն որդեծնութեան և զաւակի սերելոյ, բարիոք է մերձաւորութիւնն. ապա եթէ ուրուք Ծողեալ զիւր կին, զայլոյ ամուսնութիւնն Ծշնամանիցէ, գործ չարութեան գործէ: Եւ Ծէպէտ մերձաւորութիւնն նոյն է, և օրինակ մերձաւորութեանն ոչ նոյնպիսի. քանզի մին բուն հայր լինի որդոյ, և միւսն զողունի: Նոյն բանք են և վասն պոռնկութեան. եթէ վասն որդեծնութեան ոք մերձենայցէ յիւր կին, յիրաւի է. ապա եթէ առ ցանկութեան օտար մարմնոց ցանկանայցէ, կարի իսկ անիրաւութիւն: Եւ յայտ է՝ Ծէ իրքն չարք յայնժամ լինին, յորժամ պէտքն օրինօք ոչ վճարեացին:

Նա և զպանութենէ նոյն բանք են. յորժամ զըմբռնեալն ի շնութեան ոք ըսպանանիցէ, պատուհաս ի վերայ ածեալ վասն յանդգնութեանն, չառնէ չար ինչ: Ապա եթէ զանմեղն ոք, որոյ ոչ ինչ ի ճշմարտութեան գործեալ իցէ՝ սպանանիցէ, կամ վասն ինչս զերծանելոյ, կամ վասն

ստացուածս հատանելոյ, չարութիւն գործէ. և գործն նոյն է երկոցունց, բայց օրինակն ոչ նոյնպիսի:

Նա և յինչս առնուլ նոյն բանք են. որ պարզև ի տեառնէ կամ ձիր ի բարեկամէ առնուցու, ոչ ինչ չարութիւն գործէ. իսկ որ բռնաբար յանուագէն հանիցէ, չարութիւն գործէ. և առնուլն երկոցուն նոյն է, բայց օրինակ առնլոյն ոչ նոյնպիսի:

Նոյնպէս և աստուածպաշտութեան յօրինակէ անտի ցուցանի չարութիւնն. եթէ զճշմարիտն Աստուած ոք պաշտիցէ, գործ ազնուական գործէ. ապա եթէ Թողեալ զճշմարիտն, քարանց և փայտից՝ որպէս թէ Աստուծոյ՝ պաշտօն մատուցանիցէ, անհնարին վնաս գործէ. զի զօրինակ պիտոյիցն յանպատեհ իրս դարձոյց: Եթէ պատկեր ոք գործիցէ, և ոչ վասն սիրոյ սիրելոյն՝ որ մահուամբ յաչացն վրիպեցաւ, կամ վասն զճարտարութիւն ցուցանելոյ, այլ ի պաշտօն առեալ երկիր պագանիցէ իբր Աստուծոյ, գործ չարութեան գործէ:

Եւ այսպէս կազմածոյ իրաց ինչ ևս՝ միտք գործողին գործեն զչարն, որպէս և երկաթ մերթ ի բարիս պաշտի, և մերթ ի չար. զի եթէ խոփ և գերանդի և մանգաղ ոք գործիցէ, ի բարւոք իրս պաշտեցաւ. ապա եթէ սուսեր և գեղարդն և սլաք, և այլ ինչ զէն՝ որ ինքնաւակար մարդկան է, գործ չարութեան գործէ. և պատճառ չարութեանն գործելին, և ոչ երկաթն:

ԺԱ. Իսկ մարդիկ ասեն, յանձանց ինչ ունիցին զայնպիսի շարժմունս, թէ յԱստուծոյ լեալ իցեն, կամ թէ այլ ոք իցէ՝ որ զայն ի մարդիկ արկանիցէ:

ՅԱստուծոյ մարդկան այսպիսի ինչ լինել՝ չթուի պատշաճ ասել, այլ ունել անձնիշխանութիւն և ազատութիւն առաջնոյ մարդոյն եղելոյ յԱստուծոյ, և ի նմանէն զնոյն իւրոց պայազատացն ժառանգել: Եւ արդ առեալ զանձնիշխանութիւնն, ումմ կամի՝ ծառայանայ, որ մեծ շնորհն պարգևեալ է նմա յԱստուծոյ. քանզի այլն ամենայն ի հարկէ ծառայէ աստուածական հրամանին. եթէ զերկնից

ասիցես, կայ հաստատեալ, և ոչ շարժի ի սահմանելոյ նմա տեղւոյն. և եթէ զարեգականէ կամիցիս ասել, սակայն և նա կատարէ զզաստուցեալ նմա զշարժումն, և չիշխէ խուսափել յընթացիցն՝ այլ ի հարկէ ծառայէ տէրունական հրամանին: Նոյնպէս և զերկիր սեղմացեալ տեսանեմք, և բարձեալ բերէ զհրաման հրամանատուին. և զայլսն ամենայն համակերտս ծառայացեալս հրամանաց արարչին, և չիշխեն այլ ինչ քան զայն՝ յոր կարգեցանն՝ գործել. վասն որոյ գովեմք զնոսա՝ յաղագս զսահմանս հրամանացն պահելոյ:

Բայց մարդոյ առեալ զանձնիշխանութիւն, ուր կամի՝ ծառայանայ. ոչ ի հարկէ բնութեան բռնադատեալ, ոչ ի զօրութենէն՝ որ նմա վասն լաւութեանց շնորհեցաւ՝ կատեալ, այլ ի հնազանդութենէ միայն շահի զօգուտն, և յանհնազանդութենէ զվնաս. և զայն ոչ եթէ առ եղեռանէ ինչ լեալ ասեմք մարդոյն, այլ վասն լաւութեանց: Զի եթէ իբրև զմի ինչ յայլոցն բնութեանց լեալ էր՝ զոր ի հար-

կէն ծառայեն Աստուծոյ, ապա և վարձս ընդ կամակարութեանն առնլոյ չէր արժանի, այլ իբրև գործի մի էր արարչին, զոր Թէպէտ ի չար վարէր և Թէպէտ ի բարի, ոչ պարտաւանք ինչ էին նմա և ոչ գովութիւնք, այլ պատճառ այն էր՝ որ զնա այնպէսն վարէր. նա և ոչ զլաւ ինչ գիտէր այնուհետև մարդն, քանզի չէր հմուտ այլ իմիք, բայց այնմ աւեծ՝ յոր պատշաճեալն էր: Այլ Աստուած այնպէս պատուել զմարդն կամեցաւ, զի առ լաւութեանցն խելամուտ լինելոյ՝ զանձնիշխանութիւնն պարգևեաց նմա, որով կարող իցէ առնել զինչ և կամեցի, և զանձնիշխանութիւնն նորա ի լաւն խրատէ դարձուցանել:

Որպէս հայր ոք յորժամ զորդի իւր խրատիցէ՝ որ կարող իցէ ուսումն ինչ ուսանել, չծուլալ յուսմանէն՝ այլ յառաջադէմ լինել ի լաւն ստիպէ. վասն զի գիտէ՝ եթէ կարող է յառաջադէմ լինել, պահանջէ զուսումնն՝ յոր աւանդեցաւ: Նոյնպէս և զԱստուծոյ պարտ է իմանալ՝ եթէ յօժարեցուցանէ զմարդն անսալ հրա-

մանաց նորա. բայց զկամակար իշխանութիւնն ոչ հանէ ի նմանէ, որով կարողն է անսալ և չանսալ հրամանացն. այլ խրատէ և յօժարեցուցանէ զմարդն, զի լաւութեանցն ցանկացող լիցի, որովք արժանաւոր մեծաց պարգևաց լինիցի, եթէ անսայցէ Աստուծոյ. այլ զի և չանսալոյն իշխանութիւն ունիցի. քանզի ոչ եթէ վայրապար ինչ կամէր Աստուած զայնպիսի պարգևս տալ, որ յաւիտենական անեղծութիւնն է. զի վայրապար իսկ էր այնպիսոյն տալ՝ որ ոչ ունէր իշխանութիւն երկոցունց, անսալոյ այնմ՝ զոր Աստուածն կամէր, և չանսալոյ այնմ՝ զոր նայն չախորժէր: Բայց իրաւամբք այն է, յորժամ արժանի ըստ որոց գործեացն ոք ինչ առնուցու:

Եւ արդ զիարդ երևէր ընտրութիւն գործոցն, եթէ ոչ ունէր մարդն իշխանութիւն երկոցունց, և անսալոյն և չանսալոյն: Եւ արդ յայտ է թէ անձնիշխան եղև մարդն՝ առնել զբարի և ժառել ի չար. իբր ոչ եթէ չար ինչ առաջի կայր՝ յոր ժառիցի, այլ այն ևԼԲ առաջի կայր՝ կամ

անսալ Աստուծոյ կամ չանսալ, և զնոյն ևեթ պատճառ չարին իմանալ: Քանզի լեալ մարդն առաջին՝ առնոյր պատուէր յԱստուծոյ, և չհնազանդեալ աստուածական հրամանին՝ մտաբերէր ի չարիս, և անտի լինէր սկիզբն չարեաց:

Ուստի ոչ ոք կարէ անարար* ինչ և անձնաւոր զչարն ցուցանել. և դարձեալ ոչ յարարչէն, այլ յանսաստուածենէ դիպեալ ստունգանուլին, և յուրուք վարդապետութենէ դրդեալ. զի ոչ եթէ այնպիսի ինչ հաստատեալ բնութեամբ զմարդն ցուցանել կարէ ոք: Եթէ այնպիսի ինչ բնութիւն մարդոյն առեալ էր, ապա ոչ ի բնութենէ արարածոյ և յաստուածեղէն գրոց նմա վարդապետութիւն ընծայանայր. որպէս ասէ ուրեք աստուածական բարբառն, եթէ ի մանկութենէ մարդիկ ի խնամս չարի միտեալ են. զի ցուցեէ թէ որ միտին՝ կամօք միտի, և ոչ ուրուք բռնութեամբ:

Արդ անսաստութիւնն ևեթ՝ որ արտա-

---

* Անարարիչ:

քոյ Աստուծոյ կամացն գործիցի՝ պատճառ չարեաց իմանալի է. և նմին զայլ ոք վարդապետ ծածուկ հաշուել, դրդիչ և ոչ բռնադատիչ, որ զմարդն ի լաւութեանցն մերկանալ կամեցաւ: Ապա եթէ զպատճառն ևս կամիցին խնդրել, զնախանձն՝ որ առ մարդն եղև՝ իմասցին զպատճառն: Եւ եթէ զնախանձուէն ևս ճշդիւք քննիցեն՝ թէ ուստի եղև, ասասցուք՝ եթէ յառաւելութենէ զմարդն պատուելոյ. քանզի միայն մարդ ըստ պատկերի և ըստ նմանութեան Աստուծոյ եղև: Իսկ եթէ այնու զԱստուած պատճառ չարեաց կամիցին ասել, աննկանին յիմաստնարար խորհրդոյ: Եթէ զնորա ինչ հանեաւ էր, և մարդոյն շնորհեալ, թերևս յիրաւի պատճառ չարեաց կարծէր տուիչն. ապա եթէ զնա նոյնպէս որպէս եղևն պահեաց, և զմարդն այսպէս կամեցաւ առնել, պատճառ չարեաց նախանձորդն է: Քանզի ոչ եթէ յորժամ իցեն ուրուք երկու ծառայք, և զմինն ի ծառայութեան ունիցի, և զմիւսն յորդեգիրս գրիցէ, և միոյն յարուցեալ ի վերայ զմիւսն

սպանանիցէ, մի՛ թէ պատճառ չարեաց զտէրն պարտ իցէ իմանալ, որ ոչ եհան ինչ ի ծառայէն և շնորհեաց միւսոյն:

ԺԲ. Արդ և զայն ևս հարցանեն. եթէ չար ինչ չկայր առաջի, ուստի օձն՝ զոր սատանայ կոչէք՝ իմացաւ զհանգամանս չարին:

Ասեմք, եթէ սատանայ չար զտուն-գանելն մարդոյն Աստուծոյ իմացաւ, վասն որոյ զմարդն յայն յօժարեցոյց: Որպէս յորժամ իցէ ոք ուրուք թշնամի, և թագուցեալ զթշնամութիւնն՝ գաղտ կամիցի վնասել, և չգիտիցէ զհանգամանս վնասակարութեանն, և շուրջ եկեալ յաճիցի հնարս խնդրել. ապա գտեալ ժամանակ՝ յորժամ ոք ի բժշկաց թշնամւոյն նորա պատուէր տայցէ յայս ինչ չհպել, և յայս նիշ կերակրոց չճաշակել, որով առողջութեանն կարիցէ հասանել, և նորա լուեալ՝ վաղվաղակի ի կեղծիս բարեկամութեան կեղծաւորեալ՝ զբժիշկն պարսաւիցէ, և զօգտակարսն նմա վնասակարս թելադրեալ կարծեցուցանիցէ, և հակառակ պատուէրս հրամանաց բժըշ-

կին տայցէ, և այնու առնիցէ նմա վնաս. որ ոչ եթէ յառաջագոյն գիտէր գհանգամանս վնասակարութեանն, այլ ի պատուիրելոյ բժշկին գտեալ հնարս՝ եղև վնասակար: Նոյնպէս կարծի և զաստանայէ՝ նախանձելն նմա ընդ նախաստեղծ մարդոյն, և չգիտել գհանգամանս վնասակարութեանն. քանզի ոչ եթէ չար ինչ առաջի կայր՝ ուստի գհանգամանն մարթ էր առնուլ. ուսեալ յԱստուծոյ պատուիրանէն՝ որ մարդոյն տուաւ արգելուլ զնա ի ճաշակելոյ ի տնկոյ իմեքէ ի մահաբերէ, զայն յառաջադրեաց մարդոյն. որ ոչ եթէ անպիտան ինչ ի կերակուրս մարդոյ էր, և ոչ բնութեամբ տունկն մահաբեր, և վասն այնորիկ ինչ արգելաւ մարդն ի ճաշակելոյ ի նմանէ, այլ անաստուածութիւնն եղև պատճառ մահուան մարդոյն, իբրև յանցաւորի՝ որ անցանիցէ գհրամանաւ հրամանատուի՝ որ նմա կարգեալ իցէ:

Արդ ժառեցոյց Աշնաւին գմարդն անցանել գհրամանաւն Աստուծոյ, որպէս զի ոչ եթէ ստուգեալ գիտէր՝ եթէ այնու

նմա վնաս ինչ գործել կարիցէ, այլ կարծեօք ի Թեթուս մատուցեալ, եթէ լիցի և Թէ չլինիցի. և յետոյ յԱստուծոյ պատուհասէն՝ որ առ մարդն եղև վասն պատուիրանազանցութեանն՝ իմացաւ եթէ պատուիրանք նորա մահ գործեցին, և յիրաւի պատժեցան և նա և մարդն՝ զոր յօժարեցոյց յանաստուածիւնն, ճաշակել ի փայտէն՝ որ ոչ բնութեամբ մահաբեր էր, այլ յԱստուծոյ սպառնալեացն եղև այնպիսի իրաց պատճառ:

Եւ որպէս բժշկի ոչ կարեմք մեղադիր լինել՝ վասն յառաջագոյնն զգուշացուցանելոյ որով օրինակաւ կարիցէ մարդն առողջանալ, և նորա Թողեալ զպատուէրս բժշկին՝ անսայցէ Թշնամւոյն՝ որ զվնասաբար խրատան տայցէ նմա, որով ոչ ըզպատճառս վնասուն ի բժշկէն՝ որ յառաջագոյնն գուշակեաց նմա՝ իմանալի է, այլ ի Թշնամւոյն որ ի պատուիրանէ բժշկին նմա զվնասն հնարեցաւ. նոյնպէս և զատանայէ ասեմք լեալ Թշնամի մարդկան՝ որ չև ևս գիտէր գհանգամանս չարեաց, այլ ի պատուիրանէն Աստու-

ծոյ ասեալ՝ կամեցաւ ՚ի սասել մարդոյն. որպէս զի եթէ առանց Աստուծոյ կամաց ի ծառոյն ճաշակիցէ՝ առնուցու պատիժ զմահ: Ւանզի եթէ յառաջագոյն չէր գուշակեալ Աստուծոյ մարդոյն չուտել ի կերակրոյ ծառոյն, և նորա յանգէտս կերեալ, չլիներ նմա պատիժ մահ. կամ որպէս թէ առ ի չգիտանս եկեր, կամ թէ առ չժուժալոյ ի կերակրոյ ծառոյն, չէր ինչ պատժի պարտական: Ւանզի և մանուկ կաթնակեր՝ որ յայլ ինչ կերակուր մտաբերիցէ, ոչ պատժելի է՝ այլ արգահատելի, որպէս թէ առ ի չգոյէ կաթին յայն յօժարեաց: Նա և օձն, որ է սատանայ, յիրաւի պատժեցաւ՝ վասն ընդ անագորոյն Ջշնամութեան ընդ մարդոյն ունելոյ:

Եւ արդ սկիզբն չարեաց զնախանձն ասեմք, և զնախանձն յառաւել զմարդն պատուելոյ, և զչարիսն յանհնազանդութենէն: Ջի Աստուած այնպէս առաւել զմարդն պատուեաց, և նորա անսաստեալ՝ զընկէց զպատուիրանն: Ուստի զամենայն ինչ որ լինի չար, ոչ բնու-

Թեամբ չար գիտեմք, այլ զի առանց կամացն Աստուծոյ գործին իրք ինչ՝ լինին չար:

Նա և ընդ լինելն իսկ աստանայի յԱստուծոյ, գիտաց՝ եթէ անեաստել ումեք Աստուծոյ՝ չար է և ոչ բարի. քանզի ոչ եթէ անմիտ ինչ ոք եղև նա յԱստուծոյ՝ եթէ չգիտէր, եթէ որ ինչ ըստ Աստուծոյ կամացն լինի՝ բարի է, և որ ինչ արտաքոյ քան զնորա կամն՝ այն չար է. և վասն այնորիկ յիրաւի տանջէ զնա Աստուած, զի գիտէ նա զբարին, և ոչ առնէ. և հմուտ է չարին, և ոչ խորշի: Եւ ոչ չար և չարչարիչ հաստատեաց զնա Աստուած. և ոչ փորձիչ՝ եթէ նովաւ փորձեալ զարդարս գտեցէ. և ոչ ինքն յանձնէ չար գտեալ, և ոչ անարար և հակառակ Աստուծոյ. այլ մտաւոր եղեալ յԱստուծոյ, և հմուտ գիտութեան՝ թէ չար է հակառակ կալ Աստուծոյ հրամանին, և յայն զոր գիտէրն՝ թէ չար է՝ յանդգնեցաւ, զանաստուածեննէն ասեմք. և անաստուածիւնն ոչ եթէ անձնաւոր ինչ յառաջագիտ էհաս ի գիտութիւնն

սատանայի, այլ իբրև զմի ինչ եղեալ ի դիպաց կամեցելոյն:

Նա և զմարդոյ յիրաւի, ասեմք, կրել պատուհաս ընդ որոց գործիցէ. քանզի համաւ երթայ յուսումն այնպիսի իրաց, յորոց յորժամ և կամիցի՝ և մեկնել կարող է. քանզի և կամելոյն և չկամելոյն ունի իշխանութիւն, զորոյ զհետ երթայ և կարելն զոր ինչ կամիցի առնել:

ԺԳ. Որովհետև, ասեն, չարեաց արարիչ զԱստուած չկամիք ասել, այլ ի մարդկանէ եղեալ Թելադրութեամբ սատանայի ի հնազանդելոյն նորա և ի խաբեցելոց, և յիրաւի կրեն պատիժս. զի կարէին հատանել և ընկենուլ ի բաց զչարիսն, և ոչ կամեցան, և արդ ևան նորին իսկ սատանայի հարցցուք. այնպիսի արդեօք արար զնա Աստուած, եթէ ինքնին այնպիսի չէր՝ և յօժարեաց ի չարարարել:

Եթէ այնպիսի արարեալ էր զնա Աստուծոյ, պատիժս ի նմանէ չէր պարտ պանհանջել, զի պահեաց զպայման բնութեանն՝ յոր արարն զնա Աստուած. և որ

որ ոչ կամօք ինչ գործէ, ընդ այնր պատիժ չպարտի կրել. բայց որ կամօք կարող է գործել, և գործ ինչ յոռութեան գործիցէ, յիրաւի պատժի, զի ոչ եկաց այնմ՝ զոր Աստուածն կամի. ապա եթէ յԱստուծոյ բարւոք եղև, և անձամբ յանձնէ դարձոյց զկամն ի չար՝ հեռացուցեալ զինքն ի լաւէն, յիրաւի պահանջի ընդ որոց յանդգնեցաւն՝ պատիժս. զի զաստանայ մեք ոչ յԱստուծոյ սատանայ եղեալ գիտեմք. այլ զսատան անուն՝ վասն խոտորելոյն էառ իւր անուն. քանզի սատանայ յԵբրայեցւոց և յԱսորւոց լեզուէ խոտորեալ Թարգմանի. այլ զօրութիւն իմն զգայուն լաւութեանց հաստատեցաւ յԱստուծոյ, և ի Թշնամութենէ ընդ մարդոյն ունելոյ՝ իւրն կամօք եղև բանսարկու. Թողեալ զԱստուծոյ հպատակութիւն՝ սկսաւ անսաստել, և հակառակ կալ Աստուծոյ հրամանացն ուսուցանել մարդկան, և իբրև զապստամբ յետս կացեալ Թիւրեցաւ յԱստուծոյ: Եւ վկայէ բանիս աստուածական բարբառն, որ ապստամբ վիշապն կոչէ զնա՝ եթէ

հրամանաւ սպան զապստամբ վիշապն: Եւ արդարև իսկ բանն Աստուած սպան զաստանայ, այնու զի կոխելոյն զնա ետ իշխանութիւն: Արդ ապստամբ կոչէ զնա գիր. եթէ նոյնպիսի՝ որպէս եղև յԱստուծոյ՝ կացեալ էր, ապա ոչ ապստամբ կոչէր զնա. զի որ ապստամբի ոք, Քողու զիւր պայմանն՝ որով ոչ անարար իսկ ցուցանի: Զի եթէ անարար էր, ապա ոչ յիւրմէն բնութենէն փոխէր. քանզի չմարթի բնութեան իմիք՝ առանց կամաց՝ մերթ բարի լինել, մերթ չար:

ԾԴ. Իսկ արդ եթէ ոչ էր անարար, ասեն, ըստ ձեզ սատանայ, և ոչ այնպիսի եղեալ յԱստուծոյ, և անձամբ զանձըն դարձոյց ի լաւէ անտի ի յոռին, որ է ի հնազանդութենէ յանհնազանդութիւն, արդ զայն ցասացէք. գիտէր Աստուած՝ եթէ այնպէս լինելոց էր, եթէ չգիտէր. Քէ գիտէր և արար, ինքն է պատճառ՝ նորա ի լաւութեանցն դառնալոյ. ապա եթէ ոչ գիտէր, զիարդ առնէր զայն զոր ոչն գիտէր՝ Քէ որպիսի ինչ ոք լինելոց իցէ:

Անգիտութիւն կարծել զԱստուծոյ՝ անհնարին յիմարութիւն է. քանզի միայն ինքն կանխագիտ է հանդերձելոց: Այլ քանզի բարերար էութիւն է Աստուած, ոչ կամեցաւ զգլխուականութիւնն իւր ծածկել. վասն որոյ յառաջագոյն գիտէր զաստանայէ՛ եւէ ինչ ելանելոց է, և զմարդիկ յանցուցանելոց՝ առ ի չունկնդիր լինելոյ հրամանաց նորա, որով միանգամայն վասն անէնիշխանութեան մարդոյն երեւելոյ արար զնա Աստուած. զի առաւելութիւն բարերարութեան նորա յայտնի լիցի մարդկան, վասն Յողութեան տալոյ մարդկան յառաջագոյն գործելոցն մեզաց: Զի յորժամ գաստանայ ամպարշտացեալ տեսանիցեն և չդարձեալ ի միջոյ, և վասն իւրեանց մեզացն խմանայցեն՝ Թէ զոյ հնար Յողութեան ապաշխարութեամբ. զի Աստուծոյ բարերարութիւնն ցուցանիցի, և մարդիկ զշնորհն նորա գիտացեն. զի եւէ այն այնպէս չէր լեալ, և ոչ բարերարութեանն նորա որ խնդամուտ լինէր:

Նա բնաւ խոկ, ասեն, յետ Թերելոյն

սատանայի և խարելոյ զմարդն՝ ընդէր իսկ ոչ երարձ ի միջոյ, զի մի զբազումս սպանանիցէ:

Ոչ եթէ չէր կարող Աստուած բառնալ զսատանայ ի միջոյ, քանզի չիք ամենեւին տկարութիւն զԱստուծով. այլ զի չէր ինչ մեծ գործ Աստուծոյ զսատանայ ինքնին անձամբ սպանանել, և զարատած մի զիւր փոքր յոչինչ դարձուցանել, զի մի կարծիցի՝ Թէ վասն չժուժալոյ չարութեանն նորա սպան զնա: Երկրորդ անգամ՝ զի անժանօթ ևս լինէր առ յապայ մարդկան Աստուծոյ բարերարութիւնն, Թէ յառաջագոյն սպանանէր ըզսատանայ. զի ոչ ոք ունէր նշանակ ինչ յայտնի բարերար կոչելոյ զԱստուած: Այլ Թերևս և կարծիք ինչ ի մէջ մտանէին՝ Թէ հաւասար ինչ ոք էր նա Աստուծոյ, և աճապարեաց ի միջոյ երարձ. վասն որոյ պահեաց զնա, և ոչ կորոյս ի միջոյ, զի մարդիկ յորժամ լաւութեանցն համտ լինիցին, յաղթեացեն նմա՝ փոխանակ այնոցիկ՝ որք յառաջնումն յաղթեցան ի նմանէ:

Այն իսկ մեծ և զարմանալի է, զի մարդն Աստուծոյ՝ վառեալ Աստուծոյ օգնականութեամբն, պատերազմեալ յաղթիչ սատանայի: Որպէս մարտուսոյց ոք ամենայն հնարիւք հնարեալ զիւր աշակերտան Թևթել, առ ի ցուցանելոյ զհանգամանս մարտից, որով մարթիցեն յաղթել սխոյանից, և առաքիչ զնոսա ի հրահանգս մրցել ընդ սխոյանան, և յաղթութեանցն ուշ առնել խրատիչ, մինչև զկեանս անգամ արհամարհել. զի լաւ համարի Թէ վասն Նանուան բարիոք մեռանիցին, քան Թէ կենդանի կայցեն և վատանուն լինիցին: Եւ նոցա զԹևլատրութիւնս վարդապետին ի մտի եղեալ, և զպարգևս ընդ յաղթութեանն, զեր ի վերոյ լինիցին սխոյեանին, և պսակեալ առ վարդապետին հատանիցեն, և նշանակ եգնութեան ընդ սխոյանին՝ առ նա զպսակն բերիցեն: Ապա եԹէ զմարտուսոյցն զմեռաւ ոչ ածիցեն, և յաղթութեան և պսակի ոչ ցանկանայցեն, կործանին վատանուն յախոյանէ անտի. յիրաւի այնուհետև Թշնամանին և տանջին, և

մահու պատիժ փոխանակ ընդ վատութեանն կրեն :

Նոյնպէս և զԱստուծոյ իմանալի է, Թէ իւրով պատուիրանօք վառէ գեղեցիկ զմարդիկ՝ առ ի պսակելոյ զյաղթողն, և յամօթ առնելոյ զվատացեալն. իսկ եթէ ոք յոչինչ զԱստուծոյ զպատուիրանն համարիցի, յորժամ մրցել ընդ բանաւորկուին մարտնչիցի, վաղվաղակի կործանի, քանզի չունի զնշանակս յաղթութեանն. և յիրաւի կրէ պատիժ պատուհասից այնպիսին, զի ոչ նմաննաց ընկերին՝ որ կռուեցաւ և յաղթեաց :

Արդ վասն այնորիկ Թողեալ է Աստուծոյ զաստանայ իրրև ի հրահանգս կռուանոցաց յաշխարհի, զի յորժամ իւր նահատակեալքն կռուիցին և յաղթիցեն նմա՝ պարծանք առաջնոյ յաղթութեանն նորա քակեսցին յայժմուն յայնպիսեացն մարդկանէ, որ լաւութեանցն ցանկութեամբ պարտիցեն զնա, և նշան յաղթութեան զնահատակութեանն կանգնիցեն : Քանզի կոխան արկեալ ընդ ոտիւք մերովք՝ անկեալ դնի մեռեալ, և կործանի՝ առ ի

լաւութեանցն ցանկութեան մերոյ ի պարտութիւն մատնեալ :

ԺԵ. Արդ յետ այսր ամենայնի հաւանութեանց յամառեալ զնոյն ի մէջ բերեն. բնութեամբ են՝ ասեն՝ չարիք, և ոչ կամածինք :

Ասեմք. եթէ բնութեամբ իցեն, ընդէր օրէնք ի Քազաւորաց դնիցին, և սաստք ի յիշխանաց, և պատիժք ի դատաւորաց. ոչ ապաքէն վասն կարճելոյ չարեացն : Եւս, Թէ բնութեամբ իցեն չարիքն, ոչ պարտի օրէնսդիրն օրէնս դնել, և ոչ իշխանն պատիժս ի վերայ չարագործին ածել : Ընդէր պատժիցեն զայն՝ որ ոչ կամօքն չար իցէ, որում արգահատելն պարտ էր, և ոչ պատիժս ի վերայ հասուցանել :

Եւ արդ այնպիսոյն եթէ կին շնայցէ, չպարտի մեղադիր լինել. քանզի ոչ կամաւ՝ որպէս ասեն՝ յօժարեցաւ ի չարն, այլ բնութեամբ բռնադատեցաւ : Եւ եթէ որդւոյ իւրոյ սուր առեալ՝ ի վերայ խաղայցէ, մի՛ լիցի նմա մեղադիր. զի ոչ իւր կամաւ երթայ, այլ չարն տանի զնա

յայն: Եւ եթէ ի գրացւոյ և ի բարեկամէ Քշնամանեացի՝ մի փոխարէն Քշնամանեացէ, այլ առաւել արգահատեացէ եւ. զի ոչ եթէ նա ինչ Քշնամանէ, այլ չարն՝ որ բնաբար վարէ զնա: Նոյնպէս՝ յորժամ դուստր զմայր անարգիցէ, և նու զկեսուր իւր, և կին զայր, և ծառայ զտէր, և եղբայր զեղբայր, մի ինչ տարցին ընդ միտ, որք անարգեցանն, այլ արգահատեացեն նոցա որպէս ի չարէն բռնագատելոց:

Իսկ եթէ տեսանեմք՝ Թէ Քազաւորն զիւրոց օրինաց վրէժս պահանջէ, և պահանջմամբ վրիժուցն զվնասն կարճէ, և դատաւորն զգողն և զաւազակն պրկէ և քերէ՝ վասն զվնասակարութիւնն ի միջոյ բառնալոյ, և հայր զորդի դժնեայ մահապարտեալ՝ դատաւորաց մատնէ, և այլքն ամենեքեան զիւրաքանչիւր զանցնիւր զարգանաց վրէժս պահանջեն՝ կամ անձամբ կամ իշխանօք, յայտ է Թէ չարիքն որք գործին՝ կամաժինք են և ոչ բնականք: Բայց աղէ՝ դու զկարին իսկ զոք շոայլեալ ցանկութեամբ՝ պրկեա և մտրա-

կեա, տես Թէ բնաւ ամենևին գտանիցի ի նմա յիշատակ ցանկութեանն: Եւ արդարև ոչ ինչ ընդ վայր ասացեալ է բան Իմաստնոյն, Թէ ծառայ որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ մկանունս տան լսել նմա:

Նա և յայլուստ ևս մարթեմք իմանալ, զի մարդոյ բնութիւն բարեաց ցանկացող է, և ոչ չարեաց: Զի շունն, որ շնայ, մինչ դեռ իւկ ի գործ շնութեանն իցէ՝ եթէ ոք շուն կոչէ զնա, ըմբոստանայ. պոռնիկն, որ յայտնի պոռնկի, զանուն պոռնկութեանն չախորժէ լսել. նոյնպէս և գողն և աւազակն, և այլ ևս չարագործքն, Թէպէտ և զգործ չարագործութեան գործեն՝ զանուն չարագործութեանն յանձն ոչ կամին առնուլ: Նա և կեղծաւորն կեղծաւորեալ, որ մեղմեխանօք ընկերին կամիցի վնաս առնել, Թագուցանէ զկեղծաւորութիւնն, և որպէս Թէ բարւոյ ինչ խրատ տայցէ՝ հրապուրեալ արկանէ ընդ վնասիս զանմեղն. և եթէ ոչ զբարւոյ զդէմս զգեցեալ մեղմեղիցէ, չկարէ ըստերիւրել յիրաւանց զիրաւագէտն:

Նա և յորժամ զխիստ ոք իշխան կամիցի

ի քաղցրութիւն ածել, չկարէ յայտ եր-
ծալ ասել՝ Թէ դու խիստ ես, այլ քաղց-
րախառն բանիւք մատուցեալ ողոքէ՝ Թէ
դու, տէր, քաղցր ես և բարերար ամե-
նեցուն, ամենեքին գոհ են զքէն, բոլորք
առ իրաւագէտս ունին. և այնպէս կարէ
մեղմով քաղցրացուցանել զիստութիւն
իշխանին, և խոնարհեցուցանել ածել
յիրաւն և յարժան: Նոյնպէս և առ ցա-
սուցեալն և տրտմեալն և առ նախանձո-
տըն քաղցրութեամբ ոք մատչի և ցածու-
ցանէ. և անտի յայտ է՝ Թէ բարեաց
ցանկացող է բնութիւն մարդկան, և ոչ
չարեաց:

Եւ եԹէ գազանացն գազանութիւն չար
ինչ բնութեամբ կարծեցուցանիցէ նոցա,
գիտասցեն՝ զի կէսքն յանասնոցն ի պէտս
արարան, որպէս և արջառ և ոչխար և
ամենայն ինչ որ ուտելի է և կրելի է.
և կէսքն վասն երկիւղ ի միտս մարդկան
ծնուցանելոյ: Զի Թէ գազանք ահագինք
են, և վիշապք և օձք և այլ ճճիք վնա-
սակարք, և մարդն այնչափ հպարտա-
ցեալ է՝ մինչ ըստ Աստուծոյ երկիւղին

սահմանս արտաքոյ ելեալ անասուն, ևթէ այնպիսի զաբնութեցուցիչք չէին՝ հրչափ ևս առաւել չկայր երբէք յակառամանի:

ԵՒս և նոքին իսկ, որ չարքն կարծին անմտաց, երբէք երբէք օգտակարք լինին և զերծուցիչք ի մահուանէ: Զինչ չար բան զօճ կայցէ, և ի նմանէ Ծերիակէ. և ի սպանող դեղոց, որք ի նենգութենէ մարդկան կազմեցան, չև հատուցեալ և անդէն բուժէ: ԵՒթէ բնութեամբ չար ինչ էր օձ, կամ չարի իրիք արարած, ապա չգտանէր ինչ ամենևին ի նմա օգտակար, և ոչ զգօնանայր երբէք ի գազանութենէ անտի իւրմէ. ԵՒս ասենիկ տեսանեմք ի հնարագիտութենէ Ծոլչաց զգօնացեալ, և իբրև զչուան խաղալիկ է նոցա, և բազում անգամ բնակեալ ի տան՝ չվնասանչեն բնակչացն:

Եւ արդ ևթէ հեթանոս իցէ՝ որ չար ինչ բնութեամբ կարծիցէ, յանդիմանեցի յիւրոց արուեստակցացն օձապաշտացն. որ այնչափ զգօնացուցանել զօձս գիտեն, մինչև կոչել յուսթիւք ի տունս, և կերա-

կուբս մատուցանել, որպէս բարբլացիքն վիշապին՝ զոր պաշտէինն. և սպան զնա Աստուծոյ սիրելին՝ նովին ընտելական կերակրովն:

Եւ եթէ մոգ իցէ, և չարի արարած զգազանն վասն գազանութեանն ասիցէ. ի հասարակաց մտաց փաշաման կրեալ ըմբերանեսցի: Զի եթէ գազանքն չարի արարածք իցեն, և երկիր բարւոյ, զինքդ բարւոյն արարած չարին արարածոց դայեակ մտեալ՝ անուցիչ լինիցի, որք ի նմանէ կերակրին և ի ծոց նորա հանգչին. զի երկու հակառակք իրերաց՝ միմեանց ծախիչք են, որպէս խաւարի լոյս, և ջեր սառամանեաց:

Արդ եթէ գազանք չարի արարածք էին, և երկիր բարւոյ, ծախել պարտ էր զնոսա երկրի՝ և ոչ անուցանել, սպառել և ոչ սերել. ապա եթէ երկիր և զգազանսն անուցանէ և ոչ սպականէ, յայտ է՝ եթէ յորմէ արարչէ երկիր լեալ է, ի նմանէ և գազանքն արարեալ են. և չիք ինչ չար բնութեամբ. քանզի չիք ինչ չար արարիչ բնութեամբ: Եւ մանաւանդ թէ

և գազանք իսկ, զորոց ասեն՝ Թէ ի չարէ արարչէ եղեալ են, ցուցանեն Թէ չեն ուստեք՝ այլ յերկրէ, այնու զի յերկրէ կերակրին և ի նմա բնակեն, և անդրէն ի նոյն շրջեալ հողանան:

Նա Թէ և ի չարէ ինչ էին չարք արարեալք, ոչ ինչ ի նոցանէ օգտակար գտանէր, այլ ամենևին իսկ վնասակար: Իսկ արդ եԹէ տեսանեմք, զի կիսոցն մորԹքն պատսպարան մերկուԹեան մերոյ լինին, և կիսոցն ճրագուն գեղնեղի լինի, և այլ ինչ յանդամոցն, որպէս առիւծուն և արջոյ և այլոցն՝ ըստ իւրաքանչիւր մի ըստ միոջէ, յայտ է՝ եԹէ ի բարւոյ արարչէ լեալ են, վասն միոյ իրիք օգտակարին գտանելոյ ի նոսա: Զի որ չար ինչ է, նորա և ամենայն ինչ վնասակար է, և մորԹ և միս. այլ նոցա որպէս զմորԹն զգենումք, և ոչ վնասէ, և զմիսն եԹէ սիրտ ուրուք առնոյր և ուտէր՝ ոչ վնասէր. որպէս վարազի՝ որ գազանագոյն է քան զամենայն գազան՝ ուտի միսն, և ոչ վնասէ. նոյնպէս և նոցայն՝ եԹէ ուտէր ոք՝ չվնասէր:

Եւ յարջառ, զոր ասեն՝ եթէ ի բարւոյ արարչէ արարեալ է, գտանի ինչ ընա-սակարութիւն: Ձգլու միս ուտել՝ դարման է մարմնոյ, բայց եթէ զարիւնն ոք ըմպիցէ՝ սատակի: Նոյնպէս և ի բանջարս է ինչ՝ որ առանձին սատակիչ է, և խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի: Ձմանրագորն եթէ ոք լոկ ուտիցէ՝ սատակիչ է, և խառնեալ ընդ այլ արմատս՝ քնածու լինի քընահատաց: Եւ զհազար՝ եթէ ի տօթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիչ է, զտապս ի փորոյն փարատէ. և եթէ ի հով ժամանակի ուտիցէ ոք, ընաս է. և եթէ զջուրն քամեալ անապակ ըմպիցէ ոք, սատակի. և եթէ զսերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ ոք, ի ցանկութենէ արկանէ: Եւ կանեփուկն Թուփ ինչ է, որոյ սերմն նորա դեղ է, և նոյն դարձեալ կասեցուցիչ ցանկութեան: Եւ մոլախինտդ, որ առանձինն ի յայտնի ինչ ժամանակի ընպանող է, նովիմբ զմտաձս հնացեալս հընարին բժիշկք հատանել: Եւ կաղանչան ազգ՝ ինչ՝ առանձինն սպանող է, և

խառնեալ ընդ այլ ղեղոյ՝ մաղձադեղ է բուժիչ ի մահուանէ:

Արդ յայսպիսի իրս անհարթս առ ոչ ուղիղ հայելոյ, կարծեցին եթէ չար ինչ բնութեամբ իցէ. բայց Աստուած այսպէս իմաստուն զմարդն կազմեաց, զի և ի դարմանիչսն մարթիցէ վայելել. և որք վնասակարքն կարծիցին, և անտի ևս հնարիւք օգտակարութիւնս կարիցէ գտանել, առ ի յանդիմանելոյ զբարս անմտացն՝ թէ չիք ինչ որ բնութեամբ չար է:

Ծ.Զ. Բայց Թէպէտ և նոքա աստուածական օրինացն ոչ հաւատան, մեք յուղղորդ պատասխանւոյ զմեր ընտանիս մի՛ զրկեացուք:

Այնչափ ինչ չար ի գազանացն բնութեամբ ոչ գոյր, մինչև ածեալ զնորաբարսն առ նորաստեղծն՝ նմա նոցա անուանս հրամայէր դնել. և եթէ մօտ ոչ գային, զիարդ միոյ միոյ ըստ իւրաքանչիւր ազգաց անուանս յօրինէր. ապա եթէ մօտ գային, և ընտելութիւն ընդ մարդոյն ունէին, յայտ է՝ թէ ոչ չարք էին, և ոչ մարդոյն վնասակարք. այլ յետ յան-

ցանելոյ մարդոյն զԱստուծոյ պատուիրանաւն՝ տուան նմա զարհուրեցուցիչք, առ ի չհպարտանալոյ հողեղինին՝ որ ի հողոյ եղև, և ի հող դառնալոց էր:

Եւ առաջնոյ չվնասակարութեան զանացն մարդոյ՝ աժմու համբոյրս և ընտելութիւնս վկայեն: Զի ոմն զդայլոյ կորիւն սնուցանէ, և իբր զշան կորիւնս՝ առ ընտելութեան ընդ անձն աննկանին: Եւ միսն զառիւծու կորիւն սնուցեալ՝ ածէ ի համբոյր և ի քծինս, մինչև պատել զսնուցանելեաւն. և եթէ այլ ոք ի նա հուպ գայցէ, չմոռացեալ զբարս գազանութեանն՝ ի վերայ յարձակի. և նորա սաստեալ գազանին իբր շան, ցածուցանէ յանսաստ գազանութենէն: Եւ այլ ոք զարջոյ Ծոժիւն սնուցեալ՝ կաքաւիչս ուսուցանէ, և նմանեցուցեալ բարուց մարդկան՝ զգազանաբարոյն ցածուցանէ: Եւ այլ ոք զկապիկս անապատականս ըմբռնեալս՝ հոպիտս և ընչապտուկս և ամենաչար ուսուցանեն: Եւ այլոց զբարբս իգակերպս կալեալ Ծովչութեամբք յընտելութիւն մարդկան

ածեն, չրեցուցեալ զթոյնան սպանողս:

Արդ եթէ չար ինչ էին գազանքն բնութեամբ, չէր հնար վնասակարացն ընդ իւրեանց վնասակարին ընտելութիւն ունել: Եւ եթէ զխորշակս և զսառամանիս ի վնասակարութեանն ի չարէ արարչէ կարծիցեն, գիտասցեն. եթէ ոչ ձիւն և սառամանիք պնդէին զլերինս, արմատք խոտոյ ոչ պարարէին. և եթէ ոչ տօթ չեռուցանէր զանդաստանս, պտուղք ոչ ճաշանէին:

ԺԷ. Եւ եթէ զախտս և զհիւանդութիւնս և զմահս տարաժամս, և զբնաւ զմահ իսկ ի չարէ ինչ արարչէ իմանայցեն, եթէ աստուածական օրինաց հաւատային՝ անդստին յօրինացն առնէաք պատասխանի: Բայց որովհետև ի չարէ արարչէ դնեն զայսպիսի անհարթութիւնս, հարցցուք և մեք ցնոսա. բարեացն արարիչ և չարեաց՝ ո՞ քան զո հարուստ իցեն: Եթէ ասիցեն՝ եթէ բարեացն արարիչ հարուստ է, ասեն. զի եթէ հարուստ ոք էր նա քան զչարեացն արարիչ, ոչ տայր նմա զվնասակարութիւնան յիւր ի բարի

արարածն արկանել. Նա և տեղի ևս չէր պարտ տալ նմա յիւրումն վայրսն: Զի եթէ կարող ոք ինչ էր, նախ իւր տեղիս զատ ի նմանէ առնէր, և ապա զարարածս՝ զինչ և կարող էր առնել:

Արդ զայն ասասցեն. կարո՞ղ էր զնա մերժել բարին յիւրոց ի բարիոք արարածոցն, եթէ չէր կարող: Եթէ ասիցեն՝ եթէ կարող էր, լուիցեն. եթէ կարող էր մերժել զչարն և ոչ մերժեաց, ինքն է պատճառ վնասուն. և եթէ ոչ էր կարող մերժելոյ զչարն, գտանի՝ զի հարստագոյն քան զնա էր չարն, որ բռնաբար նեղէ և ապականէ զբարիոք արարածս նորա: Դարձեալ և այն ևս սուտ է, զոր ասեն, թէ ի վախճանի յաղթէ նմա բարին. զի որ յառաջնումն չկարաց յաղթել, յայտ է՝ թէ և ի վախճանին չկարէ յաղթել:

Այլ մեք զցաւոց և զմահուան բազում ինչ պատճառս ունիմք ճշմարիտ բանիւ ի մէջ բերել: Նախ այն իսկ՝ զի յորժամ մարդն զԱստուծոյ պատուիրանսն անց, ապա եղև ընդ ցաւովք և ընդ մահուամբ.

քանզի ցկինն ասաց՝ Թէ ցաւովք և տրտմութեամբ որդիս ծնցիր. և ցայրն՝ Թէ աշխատութեամբ և քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչև լիցի քեզ դարձ անդրէն յերկիր՝ ուստի առար. զի հող էիր, և ի հող դարձցիր: Որով յայտ է, զի Թէպէտ և բնութիւն մարդոյ՝ քանզի մարմնապատ է՝ ընդ ցաւովք և ընդ մահուամբ կարծէր, այլ Թէ կացեալ էր ի պատուիրանին՝ պահէր զնա կենդանաբարն կենդանի. որ յոչընչէն կարող եղև զշունչ մարդոյն առնել, և պահէ միշտ կենդանի և անմահ, նոյն և զմարմինն՝ զոր յերկրէ ստեղծ՝ կարող էր պահել կենդանի:

ԾԸ. Այլ իբրև զայս լսեն Թշնամիք ճշմարտութեանն, ազգի ազգի զինուք վառին ընդդէմ ստուգութեանն. զի կէսքն ասեն՝ Թէ չէր մարթ մարմնաւորի անմահ կալ. և այլքն ասեն, վասն զի ոչ տևէր մարմինն ընդ շնչոյն յերկար ժամանակս կեալ, հարկ է անտևականին մեռանել:

Այլ զառաջինան յանդիմանեն Եղիայ և

ենովք, որ ցայժմ կենդանի են. և զայլսն՝ հասարակաց համօրէնն յարութիւն: Զի եթէ այժմ վասն զի անտեսական են մարմինք՝ յայն սակս մեռանին, ապա և ի յարութեան՝ ըստ նոցա բանին՝ չտոկան ընդ շնչոյն. և այսու յայտ առնեն՝ թէ զյարութիւն իսկ մարմնոյ խափանել կամին, ուր աստուածական գիրք և արարածոց բնութիւնք անդադար վկայեն զյարութենէ մեռելոց:

Այլ ասեն. Թէ ոչ մահկանացու իսկ էր մարմին, զիարդ էր՝ զի վասն դոյզն յանցմանն անկանէր ընդ մահուամբ, և ոչ արգահատէր նմա արարիչն և ներէր յանցմանն:

Զի ներող և արգահատող է արարիչն, այն ամենեցուն իսկ յայտնի է. և առաւել յայնմանէ, զի յետ յանցանելոյ մարդոյն՝ իջեալ անմարմինն՝ իբր զմարմնաւոր ոք ոտնաձայն առնէր ի դրախտին. և մեղմով և աղերսալից բարբառով ասէր ցյանցուցեալն՝ ուր ես Ադամ, զի մի տագնապեցուցեալ՝ չտացէ ուշաբերել նմա ապաշխարութեան. և զի չեկն ի

զղջումն յանցուցեալն, յիրաւի կրեաց պատիժ զմահ :

Դարձեալ և այլազգ ևս. զի իւրոյ արարչին յառաջագոյն պատուիրեալ էր նմա՝ Թէ յորում աւուր ուտես ի պտղոյ ծառոյն, ի նմին աւուր մեռանիս. և Թշնամին յետոյ եկեալ ասէր՝ ոչ մեռանիս, այլ իբրև զաստուածս լինիս: Եւ արդ ոյր բանից պարտ էր հաստատուն լինել, ասելն՝ որ յառաջագոյն զգուշացոյց, և կամէր ունկնդրութեամբ պատուիրանին զնա անմահ պահել, եթէ միւսոյն՝ որ պատրանօք ջանայր զնա մահկանացու առնել :

Եւ եթէ չէր արարչին յետ յանցանելոյ զպատուիրանսն զմարդն մահկանացու արարեալ, հանապազ մարդն սատանայի հաւատայր, և ոչ Աստուծոյ. զի սա ասաց՝ եթէ ուտես ի պտղոյն, մեռանիս. և նա ասէր՝ Թէ ուտես, չմեռանիս, այլ իբրև զաստուածս լինիս: Արդ եղ մահ ի վերայ բնութեանս մարդկան արարիչ բըննութեանն. զի իւր բանն հաստատեսցի, և չար խրատտուն պարտաւորեալ գտա-

նիցի. զի Թէպէտ առ ժամանակ մի վասն այսց երկուց պատճառանաց ընդ մահուամբ անկանիցի, այլ ըստ իւրում կարողութեան յարուսցէ միւսանգամ, և յանսպառ յաւիտեանս կենդանի և անմահ պահեսցէ: Եւ որ զհրեշտակս և զհոգիս մարդկան յոչընչէ արարեալ՝ կենդանիս և անմահս պահէ, նոյն և զմարմինս կարող էր կենդանի պահել՝ Թէ չէր առաջնոյ մարդոյն զԱստուծոյ հրամանն զընկեցեալ:

ԺԹ. Այլ զի Աստուած մահուան չէ պատճառ, վկայեսցէ ամէնարուեստ իմաստունն, որ ասէ՝ ԵԹԷ Աստուած զմահ ոչ արար, և ոչ խնդայ ընդ կորուստ մարդկան. այլ հաստատեաց Աստուած զմարդն յանեղծուԹիւն պատկերի իւրոյ մշտնջենաւորուԹեանն, և նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ: Եւ դարձեալ ինքն իսկ ասէ. ես ասացի՝ Թէ աստուածք իցէք, և որդիք բարձրելոյ ամենեքին: Այսինքն՝ ԵԹԷ ես զձեզ անմահս արարի, ԵԹԷ կացեալ էիք յիմում հրամանին. բայց որովհետև ոչ կացէք յիմում պատուիրանին, դուք իրրև զմար-

դիկ մեռանիք, իբրև զմի յիշխանաց անկանիք. ես ոչ ընդ ձեր մահ կամէի, և ոչ ընդ իշխանին վատ խրատտուին անկանել:

Այլ բնաւ իսկ, ասեն, ընդէր եմոյծ զնոսա ի կռիւս ընդ միմեանս:

Այսու զանձնիշխանութիւնն սատանայի և զմարդոյն կամին խափանել. զի Աստուած՝ որ աննախանձն արար զնոսա անձնիշխանս, ոչ կամէր Թէ որպէս զանասունս ի հարկէ վարիցին, և ապա անձնիշխանութիւնն այնուհետև չլինէր անձնիշխանութիւն:

Բայց Աստուած Թէպէտ և ունէր իշխանութիւն զիւրոյ արարածոյն զհանդէսն տեսանել, այլ ոչ ինքն դրդեաց զնոսա անկանել ընդ միմեանս: Իբրև ետես զսատանայ նախանձու բորբոքեալ, Թոյլ ետ անձնիշխանին ընդ անձնիշխանին ոգորել. քանզի գիտէր՝ եԹէ ոչ իւ տկարագոյն է սորա անձնիշխանութիւնս քան զնորայն. և ոչ նա կանխագէտ, և սա ոչ կանխագէտ. և ոչ նա բռնաւոր, և սա տկար ոք: Եւ զի չէր բռնաւոր ոք,

յայնմանէ յայտ է՝ զի ցկինն պատրանօք մատուցեալ հարցանէր, և ոչ բռնութեամբ զարհուրեցուցանէր: Եւ զի չէր կանխագէտ, ասէ. զինչ է այդ՝ զոր ասաց Աստուած, զի ի նմանէն ուցի զհանգամանան:

Դարձեալ և ի ցոքայ փորձանացն է ուսանել՝ թէ չէ սատանայ բռնաւոր և կանխագէտ: Զի եթէ բռնաւոր ոք ինչ էր նա, ոչ յԱստուծոյ խնդրեալ առնոյր օճան, և ապա միւսր ի փորձութիւնան. և եթէ կանխագէտ էր, ոչ մատչէր փորձել. քանզի գիտէր՝ թէ յորժամ ոչ կարէ յաղթել, յամօթ լինելոց է:

Նա և ի տէրունական իսկ ի փորձանացն իմանալի է՝ թէ չէ կանխագէտ, այնու զի ասէր ինքն իսկ՝ թէ որդի եա Աստուծոյ. և յայտ առնէր, թէպէտ և լուեալ էր ի մարգարէիցն՝ թէ գալոց է որդին Աստուծոյ. այլ զժամանակ գալըստեանն ոչ գիտէր: Եթէ գիտացեալ էր՝ եթէ արդարև որդին Աստուծոյ էր այն, որ նմա իբրև զմարդ երևէր, ոչ փորձէր զնա և ոչ յամօթ լինէր. որ թէ-

պէտ և յաստուածեղէն զօրութեանցն իմացաւ զգալուստ որդւոյն Աստուծոյ, և տագնապեալ աղաղակէր, Թէ գիտեմ զքեզ ով ես սուրբդ Աստուծոյ:

Դարձեալ Թէ կանխագէտ ինչ ոք էր նա, ոչ գրգռէր զՀրեայսն՝ զնա ի խաչ հանել, Թէ գիտացեալ էր՝ Թէ մահն Քրիստոսի ընկենոյր զնա յիշխանութենէ. ըստ այնմ զոր ասաց Տէրն՝ Թէ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս. և դարձեալ՝ Թէ տեսանէի զսատանայ իբրև զփայլակն անկեալ յերկնից. և դարձեալ՝ Թէ իշխան աշխարհիս այսորիկ արդէն իսկ դատապարտեալ է. զի ցուցցէ Թէ և յիշխանութենէ անկաւ՝ որ աստուածանալն կամեցաւ, և յաւիտենական դատաստանացն պարտական եղև:

Ի. Արդ որովհետև վասն մահու և ցաւոց ի վերայ մարդոյն դնելոյ ցուցաւ յաստուածատուր գրոց՝ Թէ վասն անցանելոյ զպատուիրանաւն Աստուծոյ մտին յաշխարհ, ասացուք և զայլ ևս զպատճառն՝ վասն որոյ տարաժամ մահք լինին:

Բազում անգամ Թերևս չարիք ինչ մե-

ծամեծք առաջի մարդոյն կայցեն, կամ նեղութիւնք՝ որոց ոչ կարէ ժուժալ, կամ փորձութիւնք՝ որոց ոչ լիցի բաւական տանել, Աստուած կանխագէտ և մարդասէր գթացեալ յիւր արարածն՝ տարաժամ մահուամբ զերծուցանէ զմարդն յայնպիսի չարեացն. ըստ այնմ զոր գիրն ասէ, Թէ յառաջ քան զչարն ժողովեսցի արդարն:

Դարձեալ և այլազգ ևս. առնին մահք տարաժամք, զի յամենայն տիս և ի բոլոր ժամանակս պատրաստական մարդոյն գտեալ՝ չզեղծիցի յաստուածպաշտութենէ:

Բայց Թէպէտ և յանիծից մտին ցաւք յաշխարհ, սակայն են և այլ ինչ պատճառք: Երբեմն վասն մեղաց, ըստ այնմ՝ զոր ցանդամալոյծն ասաց Տէր, Թէ ողջացար՝ այսուհետև մի մեղանչեր: Եւ հայեցեալ ընդ հաւատս մատուցանելեացն, ասէ ցմիւս անդամալոյծն՝ Թէ Թողեալ լիցին քեզ մեղք քո. զի յայտ արասցէ, Թէ են ինչ ցաւք՝ որ վասն մեղաց լինին. և են ինչ ցաւք՝ որ ոչ վասն մեղաց. որպէս յորժամ աշակերտքն հարցին զՏէր

վասն կուրին՝ Թէ ոյր մեղ է վասն կուրութեանդ, զորա Թէ ծնողաց իւրոց, և նա ասէ Թէ ոչ զորա և ոչ ծնողաց իւրոց, այլ վասն փառացն Աստուծոյ՝ զի փառաւորեսցի ի դմա Աստուած : Եւ են ցաւք՝ որ ոչ վասն մեղաց են, և ոչ յԱստուծոյ ինչ ի փառս, այլ ի չկշռելոյ խառնուածոցն : Քանզի մարդոյ մարմին ի չորից տարերց խառնեալ է, ի խոնաւութենէ, ի ցամաքութենէ, ի ցրտութենէ, և ի ջերմութենէ. և Թէ մի ինչ պակասիցէ կամ ոլովիցէ, ցաւս գործէ ի մարմնին. և այն կամ ի շատ ուտելոյ և յըմպելոյ լինի. կամ ի սաստիկ պահոց, կամ յանխտիր կերակրոց, կամ յոյժ ի տօթի աշխատելոյ, կամ կարի ի ցրտոյ լկելոյ, կամ յայլոց ինչ այնպիսեաց հակառակորդաց՝ որովք անհարթութիւնք ի մարմինս գործիցին :

Եւ պատերազմաց սկիզբն յազահութենէ մարդկան եղև, ուստի յափշտակութիւնք սահմանաց են և գիւղից և օտար քաղաքաց, ընչից և ստացուածոց :

Նոյնպէս և պոռնկութիւնք՝ առ ի չկա-

լոյ ի սահմանս ամուսնութեանն, զոր Աստուած ի բնէ կարգեաց՝ Թէ Թողցէ այր զհայր և զմայր իւր, և երթիցէ զհետ կնոջ իւրոյ: Զհետ կնոջ իւրոյ՝ ասէ, և ոչ զհետ կանանց. զի և զառաջին սահման բնութեանն հաստատեացէ, ասաց Տէր ի սուրբ աւետարանն՝ Թէ զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ:

Եւ դիւահարութիւնք վասն հպարտութեան մարդկան լինին. քանզի եթէ որդի ուրուք մտավարժ իցէ, գան ոչ ըմպիցէ. և որ չէն մտավարժ՝ բազում անգամ զծառայ այր առաջի նորա գան հարկանեն, զի ի նա հայեցեալ՝ ընդ այն լինիցի մտավարժ, ապա եթէ և այնու ևս ոչ խրատիցի, ի նա իսկ մատուցանեն զտանջանսն:

ԻԱ. Այս ասացաւ վասն հարցանելոյ ոմանց, Թէ մեղաւորք վասն մեղաց տանջիցին ի դիւացն, տղայոցն անմեղաց ընդէր տիրիցեն գևքն:

Զամենայն մարդիկ յորդեգրութիւն կոչէ Աստուած, որպէս մարգարէին ասէր, որդի անդրանիկ իմ Իսրայէլ. և դարձեալ՝

Թէ որդիս ծնայ և սնուցի: Թէ առաքինացեալքն ընդ օրինօք՝ որդիք կոչէին, որչափ ևս առաւել զորոց ասէ՝ Թէ ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել:

Արդ քանզի իբրև յորդիս մատուցեալ է ի մեզ Աստուած խրատել, երբեմն հարկանէ առաջի մեր իբրև զծառայ՝ զանաստունս մեր, և երբեմն զանդս և զայգիս. զի ընդ այն հայեցեալ՝ մտցուք ընդ լծով Աստուծոյ երկիւղին. ապա եթէ այնու ևս ոչ խրատիցիմք, ի մեզ իսկ մատուցանէ զտանջանսն, կամ ցաւովք, կամ խեղութեամբք, կամ դիւօք: Տանջին և անմեղք՝ զի ի մտի կալցին այլքն զբան Իմաստնոյն՝ որ ասէ. եթէ արդարն հազիւ կեցցէ, ամպարիշտն և մեղաւորն ուր գտանիցին: Եւ այն յայն սակս լինի՝ զի մի արդարն յարդարութենէն ծուլասցի, և մի մեղաւորն միշտ ի մեղսն կայցէ: Եւ չէ այնմ պարտական Աստուած, այլ չարիք մարդկան ածեն զԱստուած այնպիսի տանջանօք խրատել զմարդիկ, զի որպէս այլոց հաւատովք հաստատեաց զանդա-

մալոյծն, և շնորհեաց նմա Թողութիւն մեղաց, նոյնպէս և այլոց սակաւուց տանջանօք՝ ածէ յերկիւղ և ի խրատ զբազումս, յորժամ դիպիցէ անմեղօք, և յորժամ դիպիցէ մեղաւորօք, որպէս ինքն միայն ճարտար գիտէ: Եւ ոչ եթէ ի դատապարտութիւն ինչ ոգոց լինի մարդոյն տանջանքն դիւաց, այլ առաւել ևս յարգահատութիւն. մանաւանդ՝ թէ անմեղ ոք իցէ, և վասն այլոց երկիւղ ի միտս արկանելոյ՝ յայնպիսի տանջանս մատնիցի, զոր իբրև զմտրակ կախեալ ի մեծի տանս՝ ցուցանէ Աստուծոյ տեսչութիւնն, զի հայեցեալ ընդ այն բազմաց՝ ամփոփեսցին և մտցեն երկիւղիւ ընդ Աստուծոյ հնազանդութեամբ:

Եւ է երբէք՝ զի վասն մեղաց իսկ լինին այսպիսի տանջանք. և է երբէք՝ զի պատահարք պատահեն, և ապաւինեալք ի սրբոց մարտիրոսացն նշխարս՝ փրկին մարդիկ յայնպիսի տանջանաց, որով զօրութիւնն Աստուծոյ՝ որ ի սուրբսն է՝ երևի, և ինքեանք յոգիս ինչ ոչ վնասին:

Այլ զի ղև զղև ոչ հանէ, զայն իսկ

յայտ արար. Թէ սատանայ, ասէ, զսատանայ հանէ, ապա ուրեմն բաժանեալ է յանձնէ իւրմէ. այլ ես ասէ հոգւով Աստուծոյ հանեմ զդևս: Եւ ընդէր ինքն որ Աստուածն էր՝ ասէր, հոգւով Աստուծոյ հանեմ զդևս, այլ զի մարդկան ուսուցէ, եթէ ոչ արժանաւորք շնորհաց հոգոյն սրբոյ լինիցին, ոչ կարեն հանել զդևս. որպէս առաքեալքն մինչ ոչ նախ առին իշխանութիւնն ի Տեառնէ, ոչ կարէին հանել զդևս: Նա և նմին իսկ, որ ի տանջանան իցէ, ետ իշխանութիւն՝ հանելոյ զդևն. ասէ, այդ ազգ ոչ ելանէ իւիք՝ եթէ ոչ պահօք և աղօթիւք: Ոչ եթէ մի ինչ ազգ իցէ դիւաց՝ որ պահօք և աղօթիւք ելանիցէ, և այլքն ոչ, այլ ամենայն իսկ գունդքն դիւաց ի պահոց և յաղօթից փախստական գնան:

ԻՓ. Այլ կախարդք, ասեն, յղեն դևս և հանեն զդևս:

Զի կախարդք զդևս ոչ կարեն հանել՝ բաւական է մեզ հաւանեցուցանելոյ բանն Տեառն, զոր ասաց՝ Թէ սատանայ զսատանայ ոչ հանէ. զի կախարդն եթէ հա-

ներ, ապաքէն դիւօք հանէր. և զդիւէ ասաց Քրիստոս՝ Թէ դև զդև ոչ հանէ. ապա յայտ է Թէ այլազգ իմն իրք լինին, որպէս ի նոցանէն իսկ ելեալ է բանն՝ և ոչ ի մէնջ: Ասեն. հանել չկարեն, բայց անդէն կապել մարթեն, զի հանապազ խեղդ ընդ անձն հոգւոց մարդոյն դևն լինիցի: Եւ այն յԱստուծոյ արժանիցն յիրաւի լինի. զի եթող ոմն զԱստուած, զսուրբս, զպահս, զաղօթս, և ի կախարդն՝ որ և անձին չկարէ օգնել՝ ապաւինեցաւ. զի ո՛ր ի կախարդաց անցաւ և անդև և անմահ իցէ: Նա և տեսանեմք իսկ զկախարդսն միշտ ծնկեալս ի դիւացըն, և մանաւանդ մոլիքն. զի նախ ինքեանք դիւահարին, և ապա այլոց իմն իմն խոստանան տալ, որ չիցէ ի ձեռս՝ ոչ նոցա և ոչ դիւացն, որոց բանիւ խօսին տալ ինչ ուժեք, բայց միայն Աստուծոյ որ արարիչն և տուիչն է:

Եւ արդ քան անդէն կապել կախարդացն զդևն՝ որպէս ասենն, և խեղդ ընդ անձն միշտ ոգւոց մարդոյն առնել, լաւ էր Թէ յայտներ, և սրբովք աղաչեցեալ

զԱստուած՝ օգնականութիւն գտանէր բուժելոյ ի չարէն:

Այլ մեք ասեմք, Թէ մտանելոյ ի մարդ չունի իշխանութիւն՝ առանց Աստուծոյ Թուլացուցանելոյ. և այնր պէսպէս պատճառք են, որպէս ինքն միայն գիտէ. և յայտ անտի է՝ զի յորժամ ի խոզից երամակն մտաբերեցին մտանել, ոչ կարացին մտանել՝ եԹէ ոչ նախ ի Քրիստոսէ առին հրաման: Եւ յորժամ զՅոբն կամեցաւ փորձել սատանայ, ոչ իշխեաց ժտել՝ եԹէ ոչ նախ յԱստուծոյ առ հրաման փորձելոյ: Եւ զՅուդայէ ասէ՝ Թէ ընդ պատառոյն եմուտ սատանայ: Զի Թէ չէր Քրիստոսի Թուլացուցեալ և սատանայի՝ որ զրզռէրն, և Յուդայի՝ որ վասն կծծութեան եկն յայն, ոչ իշխէր մտանել ի նա. այլ վասն յանդիմանելոյ զանձնիշխանութիւն երկոցուն՝ Թուլացոյց ըստ կամաց երկոցունց:

Նա և մինչ դեռ տանջին իսկ ոմանք ի դիւէ, եԹէ ոչ յԱստուծոյ տեսչութիւն լինէր նմա, չարաչար մահուամբ սատակէր: Նա և զպաշտօնեայն իսկ իւրեանց՝ եԹէ ոչ Աստուծոյ սաստ պահէր, ազգի

ազգի խեղութեամբք խեղէին, և անհնարին մահուամբք սպանանէին. բայց վասն զի ոչ են ձեռնհաս, ոչ իշխեն յայնպիսի իրս մտաբերել: Եւ այս յայտ անտի է, զի Քէպէտ և կանխաւ գիտէ Աստուած՝ Թէ ոմն կռապարիշտ լինելոց է, ոմն կախարդ, և ոմն սպանանող, ոչ արգելու զնկարիլ սաղմիցն նոցա, և զփչումն հոգւոցն նոցա, զի նորա բարերարութիւնն երևեսցի, և նոքա յիւրաքանչիւր անձնիշխանութեանն պարտաւորեսցին:

Եւ յայտ է՝ Թէ որպէս առնելոյն ինքն տէր է, նոյնպէս և ի դարմանն վայելեցուցանելոյ, և ի լլկանաց չարին ապրեցուցանելոյ. զի որ իւր ինչ ոք է՝ յիւրն զբնդայ և խնայէ. և որ ոչ է իւր, նա զօտարին օգտէ և ցրէ. որպէս ասէ յաւետարանին՝ Թէ գայլ ոչ վասն այլ իրիք գայ, այլ զի յափշտակեսցէ և ցրուեսցէ. այլ ճշմարտից հաւատացելոց ոչ սատանայ փորձութեամբքն կարէ ստնանել, և ոչ կախարդք դիւօք. որպէս ինքն Տէրն ասաց ցիւր աշակերտսն՝ եթէ ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկա-

բիճս, և զամենայն զօրութիւն Թշնամոյն: Եւ դարձեալ՝ Թէ նշանք հաւատացելոց այս են. զդևս հանիցեն, և օձս ի ձեռն առցեն, և զդեղ մահու ըմպիցեն, և ոչ մեղանչիցէ: Եւ միանգամայն իսկ ասացեալ, Թէ անմեղի ուժեք ոչ դեւք մեղանչել կարեն, և ոչ գազանք սպանանել յօժարեն. որպէս ոչ Դանիէլի գազանքն վնասեցին, և ոչ երից մանկանցն հուր հնոցին:

Որպէս առաջնոյ մարդոյն՝ մինչ չև յանցուցեալ էր՝ հնազանդ էին, և ոչ մեղանչականք. և որպէս առ առաքելովքն վատթարեալ էր սատանայ, մինչև կախարդացն յահէ նշանացն՝ զոր առնէին՝ բերել զգիրս կախարդանացն զծանրագինս՝ և այրել առաջի առաքելոցն, և դիւացն աղաղակել՝ Թէ դոքա են ծառայք Աստուծոյ բարձրելոյ: Որոց նշանացն նշխարք՝ և այժմ ի սուրբ եպիսկոպոսս և ի ճշմարիտ վանականս երևին. և զայնք գիտեմ ոչ միայն քրիստոնեայք, այլ և հեթանոսք և մոգք գիտեն:

ԻԳ. Բայց և զայն ևս պարտիմք գի-

տել, Թէ հրեշտակք և դևք և ոգիք մարդկան անմարմինք են. զի զհրեշտակաց ասէ՝ արար զհրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս իւր բոց հրոյ: Հոգիս կոչէ զնոսա վասն արագութեանն, որպէս զի ասիցէ՝ Թէ քան զհողմս Թեթևք են. քանզի ոգւոյ և հողմոյ անուն եբրայեցերէն և յունարէն և ասորերէն նոյն է. նա Թէ և հայերէն ոք մանր միտ դնիցէ՝ նոյնպէս գտանի. յորժամ տագնապեալ ոք յումեքէ իցէ՝ ասէ, չետ ոգի կլանել, չետ ոգի առնուլ. և այնու զօդոյս՝ զոր միշտ ծըծեմք՝ յայտ առնէ: Եւ բոցեղէնս կոչէ զնոսա վասն սաստկութեանն. որպէս այլուր ասէ, հզօրք են զօրութեամբ առնել զկամս նորա. այլ ոչ եԹէ ի բնութենէ հողմոյ և հրոյ են. զի եԹէ ի բնութենէ հողմոյ և հրոյ էին, ապա և նոքա յիրաւի մարմնաւորք կոչէին, և ոչ անմարմինք. քանզի որ մարմնաւոր է՝ ի չորից հիւԹից յօդեալ է, որպէս մարմինք մարդկան և բնաւ անասնոց. և որ ինչ անմարմին է՝ նա պարզ բնութիւն է, որպէս հրեշտակաց և դիւաց և ոգւոց մարդկան:

Եւ արդ ուր իշխիցեն շշնջել, որք ասեն՝ Թէ հրեշտակք ընդ կանայս ամուսնացան. զի նոքա հրեղէնք կոչին, և մարդիկ խոտեղէնք: Ուստի յայտ իսկ է՝ Թէ հրոյ ընդ խոտոյ ոչ ամուսնութիւն լինի, այլ ծախումն: Եւ երեքեան ջոկքս այսոքիկ, քանզի համաբնեայք են, նմանագոյնս և նովին իսկ անուամբ անուանին: Ասի հրեշտակ ոգի, այլ ոգի հարկաւոր՝ որ է հնազանդ և կամակատար. ասի և դև ոգի, այլ ոգի չար վասն անհնազանդութեանն և ապստամբութեանն. զոր Թէպէտ և ի մեր լեզու՝ այս չար ասեմք, որպէս ի խտրանաց հարցն մերոց առաջնոց ըստ սովորութեան ի մեզ կարգելոյ, այլ գիտեմք՝ եԹէ այսն հողմ է, և հողմն՝ ոգի, ըստ յառաջագոյնն ասացելոյ: Քանզի յորժամ մեք ասեմք՝ Թէ սիք շնչէ, ասորնեայք ասեն՝ այս շնչէ. և վասն տարածութեանն միայն և արագութեան կոչին հրեշտակք և դևք և հոգիք մարդկան ոգեղէնք, որ է հողմեղէնք: Որպէս վասն աստկութեանն բոցեղէն կոչին հրեշտակք. նոյնպէս և վասն արա-

գութեանն և տարածութեան հոգեղէնք, որ է հողմեղէնք. բայց բնութիւն նոցա ի վեր է քան զհողմ և քան զհուր, նուրբ և արագ քան զմիտս:

Եւ չեն ինչ զարմանք՝ Թէ նոքա մերոց դրացեաց արարածոց անուամբքս անուանին, ուր և նոցա արարիչն ոչ գարշի զայնպիսի անուանս զինքեամբ առնուլ՝ վասն իրիք իրիք տեսչութեանց: Կոչի Աստուած հոգի, այլ կայ ընտրութիւն ի միջի. ասէ, Աստուած հոգի կենդանի է. որ է կենարար. կոչի և հուր, ըստ այնմ՝ Թէ Աստուած քո հուր ծախիչ է: Եւ արդ տեսցուք՝ Թէ հիւր միայն ծախիչ իցէ Աստուած. Նա աւանիկ նորին հոգւոյ միւսով մարգարէիւ յայտ արարեալ՝ Թէ լոյս է. ըստ այնմ՝ Թէ Տէր լոյս իմ և կեանք իմ, ես յումմէ երկեայց:

Եթէ հուր ծախիչ ևեթ էր, զիարդ կոչէր լոյս կենարար. ոչ ապաքէն յայտ է՝ Թէ ուր սաստկութիւնն պիտոյ է, անդ հուր կոչի. և ուր քաղցրութիւն՝ անդ լոյս կենարար, այս ինքն ի վեր է քան զհուր և քան զլոյս. և այլ ինչ բազում անուանս

առնու զինքեամբ վասն պէսպէս դարմանից:

Եւ յորժամ երևել սրբոց իւրոց կամէր, ոչ այլով իւիք կերպարանօք՝ այլ միայն մարդոյ կերպարանօք, զոր ըստ իւրում պատկերին արար, յայտնէր. և այն ոչ վայրապար ինչ լինէր, այլ զի զառաւել սէրն իւր՝ զոր ընդ մարդկան ունէր՝ ցուցանիցէ. և դարձեալ՝ զի յառաջագոյն կրթեսցէ զմարդիկ ածել ի գիտութիւն. զի յորժամ զորդին իւր իբրև զմարդ յաշխարհ առաքեսցէ, մի օտարոտի ինչ զիրան համարեսցին. մանաւանդ զի գիտիցեն՝ Թէ ինքն իսկ այն կերպարանօք յայտնէր: Որպէս իջեալ ի դրախտն առ Ադամ՝ ոտնաձայն իբրև զմարդ առնէր: Եւ եկեալ որդւոյ առ Աբրահամ երկուք հրեշտակօք, արժանի առնէր ճաշ ի վրանի նորա ուտելոյ: Եւ ի խօսս մատուցեալ ի լերինն ընդ Աբրահամու, զերկուս պատանիս իւր՝ զհրեշտակս մարդակերպեալս՝ ի Սոդոմ առ գեղեցիկ ասպնջականն առ Ղովտ արձակէր: Եւ հրացուցեալ և չայլայլեալ զհրեշտակն ի մորենւոջն, ի մարդկեղէն

բարբառ ածեալ, տայր ընդ նախընծայե-
ցելոյ առն Աստուծոյ ընդ Մովսէսի խօսել:
Եւ այրակերպեալ զզօրավարն իւր զՄի-
քայէլ, զօրագլխին իւրում Յեսովայ ի
դաշտին ցուցանէր: Եւ առաքեալ հրեշ-
տակ ի տուն Մանուէլի խօսել ընդ նմա,
մարդկօրէն ընծայեցուցանէր: Եւ երբէք
երբէք գրե՛թէ մարդացեալ իսկ՝ բերան ի
բերան և ձեռն ի ձեռն ընդ բարեկամին
իւրում ընդ Մովսէսի խօսէր: Եւ առնն
Յազաւորի ըստ սրտի իւրում գտելոյ,
Յաղծելոյ ի հարուածոցն, հրեշտակ ի
կերպարանս մարդոյ սուսեր ի ձեռն ցու-
ցանէր: Եւ Եզեկիէլի հրատեսիլ և բոցա-
լեզու ի կառս ազգի ազգի կերպարանօք
յօդեալ, և կառավար մարդկակերպարան
երևեցուցանէր. և քերովբէս ազգի ազգի
գազանօք յօդեալ, և ձեռն ձգեալ իբրև
զմարդոյ քրովբէի ի միջոյ քրովբէից ցու-
ցանէր: Եւ իւր իսկ երբեմն իբրև զհինօ-
րեայ, երբեմն իբրև զմատաղօրեայ, վան
այլ և այլ տեսչութեանց կերպարանեալ՝
ցանկալւոյ առնն երևէր: Եւ այնպէս իւր
և իւրոց ծառայիցն նոյնգունակ երևելով՝

զառաւել սիրոյն, զոր ընդ մարդոյն ունէր, յայտ առնէր:

Այս ամենայն ասացաւ, զի ցուցցի Թէ որ ինչ երևի՝ մարմնաւոր է, և որ ինչ ոչ երևի՝ անմարմին. և ի մարմնաւորացն են որ Թանձրամարմինք են, և են որ անօսր մարմինք. որպէս առաքեալ ասէ, Թէ այլ մարմինք երկնաւորացն, և այլ մարմինք երկրաւորացս: Երկրաւորաց՝ մարդկան և անասնոց, Թռչնոց և սողնոց. և երկնաւորաց՝ արեգական և լուսնոյ և աստեղաց: Եւ զի զնոցանէ ասէ, և ոչ զհրեշտակաց, անդէն զնովիմբ ածեալ ասէ՝ Թէ այլ փառք արեգական են, և այլ փառք լուսնի:

Եւ միանգամայն իսկ ասացեալ, Թէ որ ինչ ի զգայնոցս շօշափի կամ զննի կամ ազդի՝ այն մարմնաւոր է, և որ զգայնոց ոչ ազդի՝ անմարմին: Նուրբ է տարր լուսոյ, այլ զի ակամբ զննի՝ մարմնաւոր է. նուրբ է տարր օդոյ, այլ զի ցրտութեամբն ազդի մարմնոյ՝ մարմնաւոր է. նուրբ է տարր հրոյ, այլ զի ջերմութեամբն ազդի մարմնոյ մարմնաւոր է. նոյնպէս և ջրոյ՝

որ քան զծանունան նրբագոյն է, և քան զԹեԹևան Թանձրագոյն:

ԻԴ. Եւ արդ քանզի անմարմինք են հրեշտակք և դևք, յայն սակս և ծնունդք ոչ գոն նոցա:

Այլ, ասեն, համբարուաց ծնունդք գոն և մեռանին:

Նախ զայն տեսցուք, Թէ բնաւ գուցեն այլ ինչ արարածք բանաւորք քան զհրեշտակս և զդևս և զմարդիկ. և ապա եկեսցուք յայնր ի քնին, Թէ իցեն ի դիւաց կէսք մարմնաւորք կէսքն անմարմինք: Զի չիք ինչ արարած բանաւոր արտաքս քան զայս երիս չոկս, զհրեշտակաց, զդիւաց և զմարդկան, յամենայն աստուածատուր գրոց և ի բնութենէ արարածոց յայտնի է: Բայց Թէպէտ և ասին ինչ անուանք ի գրոց յուշկապարկաց կամ համբարուաց կամ պարկաց, ըստ կարծեաց մտաց մարդկան ասին, և ոչ ըստ բնութեան. քանզի դիւաց է կերպարանս կերպարանս ցուցանել, և մարդիկ ըստ կերպարանացն անուանս դնեն. որպէս յորժամ քաղաքք և գիւղք աւերեսցին, և

անդ դևք բնակիցեն, և կեղծս ի կեղծս յայտնիցին, և մարդկան ըստ կեղծեաց նոցա անուանս եղեալ՝ զոմն յուշկապարիկ, զոմն պարիկ, զոմն համբարու կոչիցեն. նոյնպէս և գրոց ըստ մարդկան կարծեացն եկեալ՝ առ ի նշանակելոյ ըզսաստկութիւն աւերածի աշխարհին, յուշկապարկաց ասեն բնակել յաւերական, զոր յոյն լեզու իշացուլս ասէ:

Արդ ցուցցեն Թէ զտանիցին իշացուլք ի Բաբիլոնի. ապա ուրեմն յայտ է՝ եթէ անուանք առանց անձանց են յուշկապարկաց և իշացլուց. և գիրք ըստ սովորութեան մարդկան կարծեաց եկեալ, նոյնպէս անուանեցին՝ առ ի զաւերն Բաբիլոնի նշանակելոյ. իբրև զծովացուլն՝ զոր ի կովէ ելեալ ասեն, և զպայն իմն ի մարդկանէ, և զառլեզն ի շանէ. և այն ոչ եթէ անձինք ինչ են, այլ անուանք զբանզտանաց, և բաջաղանք մոլորելոց մտաց ի դիւաց: Զի ի մարմնաւորէ աներևոյթ ինչ ոչ ելանէ, որպէս ոչ յաներևութէ իմեքէ մարմնաւոր. ոչ երբէք ի մարդկանէ ելեալ պայն՝ եթէ առ երես արարած իցէ,

և ոչ ի կովուց ծովացուլն ելեալ՝ եթէ ի ծովակս բնակիցէ: Զի մարմնաւորի չէ հնար՝ թէ ի ջուրս կեցցէ, որպէս և ոչ ջրականին՝ թէ ի ցամաքի կեցցէ. և ոչ ի շանէ ինչ ելեալ, եթէ ընդ աներևոյթ զօրութիւնս ինչ կեցցէ, և յորժամ վիրաւոր ոք անկեալ ի պատերազմի դնիցի՝ թէ լիզիցէ և ողջացուցանիցէ, զոր արաւէզն կոչեն. այլ ամենայն՝ առասպելք են, և պառաւաց դրդչիւնք, և մանաւանդ թէ ի դիւաց իսկ մոլորութենէ:

Իե. Այլ և վիճեալ ևս պնտին ի բանիցն վերայ: Մին ասէ՝ թէ ի մերում գետղ ծովացուլ գկով գործեաց, և զգոչիւնն հանապազ մեք լսեմք ամենեքեան: Եւ միւսն ասէ. զպայն իսկ իմ աչօք տեսեալ է:

Մինթէ և զարալիզէն ևս ոք կարիցէ ասել՝ թէ և զայն ուրուք տեսեալ իցէ. և թէ յառաջին ժամանակն արալէզք լիզէին զվիրաւորս և ողջացուցանէին, արդ ընդէր ոչ լիզիցեն և ողջացուցանիցեն. ոչ նոյն պատերազմունք են, և նոյնպէս վիրաւորք անկանին:

Այլ յայնժամ, ասեն, դիւցազունք էին

Եւ մեք զդիցն իսկ պահանջեացուք ի նոցանէ: Մարմնաւորք էին արդեօք դիքն, թէ անմարմինք: Եթէ մարմնաւորք էին, յայտ է թէ մարդիկ էին, և զմարդկան ուրուականս ի պաշտօն առեալ՝ դիս անուանէին. ապա եթէ անմարմինք էին, չէր մարթ անմարմնոցն ընդ կանայս մարմնաւորս ամուսնանալ: Զի եթէ այնմ հնար ինչ էր, ոչ երբէք դադարէր սատանայ ի կանաց սատանայածինս ծնուցանել. զի որ անմարմին ոք է, նա և անսերմն է. վասն զի սերմն մարմնաւորաց է, և ոչ անմարմնոց. և առանց սերման ի կընոջէ ծնանել միւմն ևեթ մարթ եղև՝ որ արարիչն է բնութեան մարմնոյ. և որպէս կամեցաւ, կարող եղև ի կուսէ ծնանել առանց ամուսնութեան:

Ուստի ամենայն իմաստնոց արտաքնոց յիւրաքանչիւր դիցն տկարութիւն հայեցեալ, չիշխեցին ասել՝ թէ ի կնոջէ ոք առանց ամուսնութեան ծնաւ: Եւ որպէս ոչ գոն ծնունդք դիւաց, նոյնպէս և ոչ մահ. թէպէտ և անմահ բնութեամբ Աստուածութիւնն ևեթ է՝ որ մշտնջենաւորն

է, և ոչ յումեքէ առեալ սկիզբն լինելոյ. այլ և սկզբնաւորացն և բանաւորաց պարգևեաց աննախանձ զանմահութիւն, զիրբեշտակաց և զդիւաց ասեմ, և զոգւոց մարդկան: Ցորոց մարդիկ, քանզի յերկուց բնութեանց են՝ ի մարմնաւորաց և յանմարմնոց, յիրաւի սերին ծննդեամբ, և զան յաճումն ամուսնութեամբ. և մեռանին մարմնովք, և ոչ ոգւովք, վասն պատուիրանազանցութեանն:

Այլ հրեշտակք և դևք ոչ յաւելուած ծննդեամբ առնուն, և ոչ պակասութիւն մահուամբ. այլ որպէս հաստատեցաւն՝ նոյնպէս և նովին Բուով կան, առանց յաւելուածոյ և նուազութեան: Եւ ոչ այլ ինչ արարած գոյ՝ որ կարիցէ ի կերպարանս կերպարանս լինել, որպէս զվիշապացն և զնահանգացն համբաւեն. այլ միայն հրեշտակք և դևք՝ որք կարող են զօրս գնդել և պարզել, և ազգի ազգի կերպարանս երևեցուցանել:

Այլ և վիշապք, ասեն, և նահանգք կեղծս ի կեղծս լինին. յորոց մին անձնաւոր է, և միւսն ոչ անձնաւոր:

Վիշապն՝ որ մարմնաւոր է, զիւր կերպարանն ոչ կարէ փոխել: Զի եթէ հնար ինչ էր մարմնաւորաց զկերպարանս փոփոխել, նախ մարդ՝ որ առաւել քան զնոսա է՝ փոխէր զկերպարանն յինչ և կամէր. այլ որպէս մարդոյ ոչ է հնար փոխել ի կերպարանս ինչ՝ յոր և կամիցի, նոյնպէս և ոչ վիշապին:

Նա և ոչ նհանգ ինչ անճնաւոր գոյ, բայց եթէ դև ի տեղիս բնակեալ իցէ, և մերթ կերպարանիցի, և մերթ ընաս գործիցէ: Եւ ոչ վիշապք զտոհմականս արդեանց կրեն, և ոչ գրաստ գոյ նոցա՝ եթէ զարդիւնս ի կալոց ուրեք կրիցեն, և ի գուր է կալ կալն ասել ումեք ի կալս՝ և ոչ առ առ: Զի վիշապն որ ինքն գրաստ է, այնու զի անասուն և անխօսուն է, զիարդ՝ որ ինքն գրաստ է՝ զայլ գրաստ վարիցէ. զի վիշապի այլազգ ինչ բնութիւն չէ՝ եթէ ոչ օձի, այն յայտ իսկ է: Եւ զօձ յաղթանդամ, կամ զգազան ինչ ծովածին, կոչեն գիրք վիշապ. որպէս զմարդ յաղթանդամ հսկայ անուանեն, նոյնպէս և զօձ ցամաքային անճոռնի, և

զգազանն ծովական լեռնաձև, զկիտացն ասեմ և զդելփինաց, վիշապս անուանեն. ըստ այնմ՝ Թէ դու ջաղջախեցեր զգլուխ վիշապացն ի վերայ ջուրց. և ետուր կերակուր ժողովրդոց եթովպացւոց:

Տեսանեմ, զի զձկունս մեծամեծս ծովածինս՝ վիշապս կոչեն գիրք. և յայտ անտի է՝ Թէ զձկանց ասէ, այնու եթէ ետուր կերակուր ազգաց եթովպացւոց. Թէպէտ և աստ այլք ի սատանայ առաքեցին զվիշապն, որպէս և զայն՝ զոր Յոբն գրեալ է: Եւ այլ ինչ ոչ են վիշապք՝ բայց կամ օձք մեծամեծք ցամաքայինք, կամ ձկունք անարիք ծովականք. զորոց ասեն, Թէ լեռնաբերձք և մեծամեծք են, և որս և կերակուր նոցա մանր ձկունք են, որպէս և օձից մեծամեծաց մանր մանր ինչ ճճիք կամ անասունք: Եւ ոչ որս երբէք՝ որպէս մարդկան՝ արարեալ են վիշապաց, կամ առնիցեն. և ոչ տաճարք իբրև մարդկան են նոցա ի բնակութիւն. և ոչ զոք ի Յագաւորազգեաց և ի դիւցազանց ունին կապեալ առ իւրեանս կենդանի. զի կենդանիք ի մարմնաւո-

բաց երկու աեծ կան, Ենովք և Եղիա:

Այլ որպէս զԱղեքսանդրէ խաբէին դևք՝ Ոչ կենդանի կայցէ, որոց ըստ եգիպտական հնարողութեանն կապեալ արկեալ կախարդանօք զդև ի շիշ, կարծեցուցանէին Ոչ Աղեքսանդրոս կենդանի իցէ և մահ խնդրիցէ. և գալուստն Քրիստոսի խայտառակեաց զխաբէութիւնն, և եբարձ ի միջոյ զգայթակղութիւնն: Նոյնպէս և մոլորութիւնն դիւաց խաբեաց զդիւցապաշտս Հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց է և ունելոց զաշխարհս, և ի անոտի յոյս կապեալ կան անհաւատք: որպէս և Հրեայք՝ որ ի զուր ակնկալութիւն կապեալ կան, եթէ Դաւիթ գալոց է՝ շինել զԵրուսաղէմ և ժողովել զՀրեայս, և անդ Թագաւորել նմա նոցա:

Եւ այնպէս ջանայ սատանայ՝ զի զամենայն ոք ի բարւոք ակնկալութենէ վրիպեցուսցէ. և ի անոտի յոյս կապիցէ: Մեծացուցանէ յաչս մարդկան զվիշապս, զի յորժամ. ահագինք երևեսցին ոմանց՝

առնուցուն զնոսա ի պաշտօն: Կարծեցուցանէ Թէ և նհանգք ինչ իցեն գետոց, և շահապետք վայրաց. և յետ կարծեցուցանելոյ՝ ինքն կերպարանի կամ ի վիշապի կերպարանս կամ ի նհանգի իմն և ի շահապետի, զի այնու զմարդն յիւրմէ արարչէն Թիւրեսցէ: Զի եԹէ էր ինչ նըհանգն անձնաւոր, ոչ երբեմն ի կնոջ կերպարանս երևէր, և երբեմն փոկ լինէր և լուղորդաց ընդ ոտս անկեալ՝ հեղձուցանէր. այլ կամ կինն կին կայր, կամ փոկն փոկ:

Նոյնպէս՝ և զոր շահապետ վայրաց կոչեն, ոչ մերԹ մարդ երևէր և մերԹ օձ. որով և զօձապաշտուԹիւնն հնարեցաւ յաշխարհ մուծանել: Նոյնպէս և վիշապն ոչ մի անգամ օձաձև երևէր, և միւս անգամ մարդկակերպ, որպէս յառաջագոյնն իսկ ասացաւ՝ Թէ որ մարմնաւոր ինչ է, զայլ կերպարանս չկարէ փոխել,

Այլ Թէ ի կալս ջորիք և ուղտք երևիցին՝ դիւաց կերպարանք են այն, և ոչ վիշապաց. և եԹէ ի դաշտս երազագանք ձգիցին, և հեԹեալք իրրև զմարդիկ սհետ

երէոյ արշաւիցեն, կեղծիք դիւաց են և ոչ ճշմարտութիւն ինչ իրաց. և եթէ ի գետս ի կանաց ինչ ի կերպարանս երեւելոյին, սատանայի կերպարանք են: Ջանզի նհանգ ինչ անձնաւորք չիք, և ոչ ի մարդ իբրև զդև մտանէ վիշապ. որպէս ոմանք ի շչելոյ դիւահարին կարծեցին. քանզի մարմնաւորի ի մարմնաւոր չէ հնար մտանել: Եւս եթէ բառնայցի ի վեր այնպիսի վիշապն, ոչ եթէ եզամբք ինչ անուանելովք՝ այլ ծածուկ զօրութեամբ իւիք յԱստուծոյ հրամանէ, զի մի շոգին մարդոյ կամ անասնոյ մեղանչիցէ. որպէս որ բասիլիսկոսն կոչի ազգ ինչ օձից՝ հայելով միայն սատակէ զմարդ կամ զանասուն. ուստի յորժամ ի ջրհորս գտանիցի՝ ճրագ առեալ իջանեն ի ներքս ըմբռնել. զի հայեցեալ ընդ ճրագն՝ ոչ մեղանչիցէ մարդոյն օձն:

ԻԶ. Այլ մեք ըստ զրոց սրբոց՝ զհրեշտակս արբանեակս գիտեմք յօգնականութիւն մարդկան, ազգաց և Թագաւորութեանց. ըստ այնմ զոր ասէն՝ Թէ կացոյց սահմանս ազգաց ըստ Թուոյ հրեշտակացն

Աստուծոյ: Ել դարձեալ այնու զոր ասէ յաւետարանի, Թէ մի՛ արհամարհէք զմի ի փոքրկանց, զի հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս հօր իմոյ՝ որ յերկինս, այսպէս իմն երևի՝ Թէ իւրաքանչիւր մարդոյ հրեշտակ առանձինն պահապան կայցէ. Թէպէտ և այլք զաղօթից կարծեցին ասացեալ ի Տեառնէն, որպէս Թէ աղօթք նոցա՝ որ հանապազ մտանեն առաջի Աստուծոյ՝ կոչին հրեշտակք: Այլ և Առաքեալն ասէ. ոչ ամենեքեան հոգիք հարկաւորք են առաքելացուք ի սպասաւորութիւն վասն այնոցիկ, որք ժառանգելոց են զփրկութիւն. որ ի հարկի նմա կան, և փրկութեան սատարք մեզ լինին:

Իէ. Այլ Թէ սատանայ է, ասեն, գըրգըռիչ չարեաց, յայլս արարածոցն ընդէր մաղԹէ զերկրպագութիւն հեԹանոսութեան, և ոչ յինքն միայն կորզիցէ:

Զի բամբասեալ ի չարութենէ սատանայ, այն ամենեցուն յայտնի է: Արդ եԹէ իւր միայն խնդրէր զպաշտօնն, վաղվաղակի խրտուցանէր զպաշտօնեայն իւր,

այնու զի չար և չարչարիչ կարծիցի նոցա այլ յօժարեցոյց զկէսան՝ լուսաւորաց երկիր պագանել, և զայլս՝ օդոյ և հրոյ, երկրի և ջրոյ և հասակաց և փայտից և քարանց, մինչև օձից և գազանաց և ճըճեաց անգամ. զի միայն զնախանձն՝ զոր ի մտի եդեալ էր գոռալոյ ընդ մարդոյն՝ կատարեացէ : Եւ արդ մի՛ ինչ վերտեսցին, որ արարածոցն երկիր պագանեն՝ Ի՛ զաստանայի զկամս ոչ առնիցեն. զի արարածոց պաշտօն մատուցանելոյ վարդապետ այլ ոք չէր, բայց միայն աստանայ:

Եւ արդ զիարդ կարիցեն նզովել զաստանայ, որք զկամս նորա կատարեն. զի եթէ որք զճշմարիտն Աստուած պաշտեն, և վարուք ինչ զեղծիցին, բամբասին յաստուածական բարբառոյն՝ եթէ խոստանան գիտել զԱստուած, և գործովք իւրեանց ուրացեալ են ի նմանէ, հրչափ և առաւել նոքա առանց պատասխանատուութեան են, որոց առեալ չպաշտօն ճշմարտին՝ անշնչոց և անմըտից արարածոցն մատուցանեն:

ԻԸ. Բայց Թէպէտ և պէսպէս զինուք վառեցաւ Զշնամին ճշմարտութեան, Յուսաց իմաստնոցն կարծեցուցանելով՝ Թէ նիւթ ինչ միշտ առընթերակաց կայր Աստուծոյ՝ ուստի զարարածան արար: Եւ քանզի նիւթոյ անուն ի նոցա լեզու ի մրուր* մերձ է, վասն այնորիկ զչարեացն սկիզբն անտի կարծեցին:

Եւ Պարսից քէշին գտիչք առ ի տարակուսելոյ՝ Թէ ուստի՞ չարիքն լինիցին, ընդ նոյն արահետս վրիպեալք ի ճշմարտութենէն՝ զնոյն բաջալանս այլովք պատմութեամբք կարկատեցին, որպէս Թէ ի միջէ ի հօրէ երկու որդիք ծնան. մին բարի՝ և բարեաց արարիչ, և մին չար՝ և չարեաց գործօն: Ի նոյն խարսխ անկեալ և ազանդոցն, զոր Զշնամին իբրև զորոմն ի մէջ ցորենոյ սերմանեաց, զի կէսքն երիս արմատս դնէին, բարւոյ և արդարոյ և չարի. և այլքն երկուս բարւոյ և չարի. և ոմանք եօԹն:

Եւ արդ եկեղեցւոյ Աստուծոյ գործ այն

---

* Ունի նիւթ. ևնչ մրուր:

է, զարտաքինան իրօք ճշմարտութեան առանց զրոց յանդիմանել, և զկարծեալն ներքինս և ոչ ճշմարտեալ՝ զրովք սբբրովք յանդիմանել:

Զհիւղայն կարծիս, որովք Յոյնքն մոլորեցան, բաւական համարեցայ առաջնոց բանիցն յանդիմանութեամբ վճարել. և ընդ Պարսից քէշին գոօղս, ապաւինեալ ի շնորհան Աստուծոյ մատիցս ի պայքար:

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ.

—

ԵՂԾ ՓԷՇԻՆ ՊԱՐՍԻՑ.

Ա. ՄԻՆՉ չև բնաւ էր ինչ, ասեն, ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարած՝ որ յերկինս կամ յերկրի, Զրուան ոմն անուն էր, որ Յարգմանի բախտ կամ փառք: Զհազար ամ յաշտ արար՝ զի Յերեսս որդի մի լինիցի նմա, որում անուն Որմիզդ, որ զերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսա՝ առնիցէ. և յետ հազար ամի յաշտ առնելոյ՝ սկսաւ ածել զմտաւ, ասէ. օգուտ ինչ իցէ յաշտս զոր առնեմ, և լինիցի ինձ որդի Որմիզդ, եթէ ի զուր ինչ ջանայցեմ: Եւ մինչ դեռ նա զայս խորհէր, Որմիզդ և Արիման յղեցան յարգանդի հօր իւրեանց. Որմիզդն ի յաշտն առնելոյ, և Արիման ի յերկուանալոյ անոտի: Ապա իմացեալ Զրուանայ, ասէ. երկու որդիք են յորովայնի անդ, որ որ ի նոցանէ վաղ առ իս հասցէ՝ զնա Յա-

գաւոր արարից. և ծանուցեալ Որմզդի գխորհուրդս հօրն՝ յայտնեաց Արիմենին. ասէ, Զրուան հայր մեր խորհեցաւ՝ Թէ որ ի մէնջ վաղ առ նա երթիցէ, զնա Թագաւորեցուսցէ: Եւ զայն լուեալ Արիմենին՝ ծակեաց զորովայնն, և ել եկաց առաջի հօրն: Եւ տեսեալ զնա Զրուանայ, ոչ գիտաց եԹէ ո՛ր իցէ. և հարցանէր՝ եԹէ ով ես դու: Եւ նա ասէ. ես եմ որդին քո: Ասէ ցնա Զրուան. իմ որդին անուշահոտ և լուսաւոր է, և դու խաւարին և ժանդահոտ ես: Եւ մինչ դեռ նորա զայս ընդ միմեանս խօսէին, ծնեալ Որմըզդի ի ժամու իւրում լուսաւոր և անուշահոտ, ելն եկաց առաջի Զրուանայ: Եւ տեսեալ զնա Զրուանայ, գիտաց՝ եԹէ Որմիզդ որդի նորա է, վասն որոյ զյաշտն առնէր. և առեալ զբարսմունն՝ զոր ի ձեռին իւրում ունէր, որովք զյաշտն առնէր, ետ ցՈրմիզդ և ասէ. ցայժմ ես վասն քո յաշտ առնէի, յայսմ հետէ դու վասն իմ առնիցես: Եւ ի տալ Զրուանայ զբարսմունն ցՈրմիզդ և օրհնել զնա, մատուցեալ Արիմենի առաջի

Զրուանայ՝ ասէ ցնա. ոչ այնպէս ուխտեցեր՝ Թէ ո ոք յերկուց որդոցն իմոց յաւաջ առ իս հասցէ, զնա Թագաւոր արարիցէ: Եւ Զրուանն առ ի չքրելոյ զուխտն՝ ասէ ցԱրիմնն. այ սուտ և չարագործ, տուեալ լիցի քեզ Թագաւորութիւնն ինն հազար ամի, և զՈրմիզդ ի վերայ քո արքայ կացուցեալ. և յետ ինն հազար ամի Որմիզդ Թագաւորեսցէ, և զինչ կամիցի առնել՝ արասցէ: Յայնժամ սկսան Որմիզդ և Արիմնն առնել արարածս. և ամենայն ինչ՝ զոր Որմիզդն առնէր՝ բարի էր և ուղիղ, և զոր ինչ Արիմնն գործէր՝ չար էր և Թիւր:

Ե. Այսպիսի անհաւատ և դանդաչանաց բանից սխմարաց մտաց կարկատելոց՝ չէր պարտ ամենևին բնաւ առնել պատասխանի. զի բաւական էր իւրեանց իսկ անմտութիւնն յանդիմանել զնոսա անդատին ի նոցին բանից՝ որ ընդ միմեանս կռուին, և միմեանց հակառակ են: Բայց քանզի այսու իմն մեծարոյ երևին առաջնորդք քէշին իւրեանց հնազանդեցելոցն, և խեղդ ընդ անձն ար-

կեալ՝ ձգեն զնոսա ի խորխորատ, հարկ է տալ պատասխանի, և ցուցանել՝ Թէ ոչ ինչ աւելի քան զոր Մանի, զոր ինքեանք մոռնեցին, ասեն:

Զի նա երկու արմատս բարւոյ և չարի ասէ, և զայն ոչ յղութեամբ և ծննդեամբ, այլ ինքնակացս՝ միմեանց հակառակ. և նոքա զնոյն ասեն՝ տեսչանօք Զրուանային յղութեամբ և ծննդեամբ: Եւ եթէ նոյն քէշ է երկոցունց, ընդէր ատիցեն մոգք զզանդիկս, եթէ ոչ զի վարուքն զատ են ի միմեանց. Թէպէտ և կերպարանօք և ոչ ճշմարտութեամբ: Այլ ի քէշին մի են երկոքեան. նոքա երկարմատեանք, և սոքա նոյնպիսիք. նոքա արևապաշտք, և սոքա ծառայք արեգական. նոքա ամենայն անշնչոց շունչ կարծեն, և սոքա նոյն օրինակ զնոյն իմանան:

Բայց զի Մանի կամեցաւ վերագոյն քան զնոցայն կեղծեօք վարս ցուցանել՝ Թէ ամենևին իսկ ազատ ի կարեաց ցանկութեանց իցէ, և ոչ քան զնոցայն միայն՝ այլ և քան զամենայն քէշից անոտի յանգիմանել յաղքանց խաղտելոյ մոլեա-

զերծ մահուամբ պակասեցաւ ի կենաց :

Որով յայտ է Թէ վարուք ևեթ մեկնեալ են ի միմեանց. զի նոքա կերպարանողք են, և սոքա զեղխք, և յայտ յանդիման ակնադիւրք, և կրօնիւք նոյնք և նոյնպիսիք :

Արդ՝ մեր Թողեալ զնոսա հարցցուք ըզսոսա. Զրուանն, զոր յառաջ քան զամենայն ինչ ասեն, կատարեալ ոք էր, Թէ անկատար :

Եթէ ասիցեն, Թէ կատարեալ էր, լուիցեն. եթէ կատարեալն, յումմէ կարօտանայր խնդրել որդի, որ զայցէ, և զերկինս և զերկիր առնիցէ. զի եթէ կատարեալ էր, ինքն իսկ կարող էր առնել զերկինս և զերկիր : Ապա եթէ անկատար էր, յայտ է, Թէ՝ էր ոմն ի վեր քան զնա. որ զնորա Թերակատարութիւնն լնուլ կարէր : Եւ եթէ էր ոք ի վեր քան զնա, նմա պարտ էր առնել զերկինս և զերկիր, և զամենայն որ ի նոսա, առ ի ցուցանել զիւր բարերարութիւնն և զօրութիւնն, և ոչ Զրուանայ որդի շնորհել որ զերկինս և զերկիր, և զամենայն որ ի նոսա արարցէ :

Այլ ասեն, փառաց առնէր զյաշտն:

Հարցցուք. փառքն յումմէ յաջողեալ էին նմա. Թէ վասն զի մշտնջենաւոր էր՝ փառաւոր էր: Եթէ յումեքէ պարգևեալ էին նմա փառքն, հարկ է կարծել՝ Թէ էր ումն ի վեր քան զնա զօրագոյն և փառաւորագոյն, ուստի ի նա փառքն հասին: Ապա եթէ չէր ոք ի վեր քան զնա, ի զուր էր զյաշտն հազարամեան առնել, զի փառքն ոչ եթէ անձնաւոր ինչ են, այլ ի յաջողութենէ ուրուք անուանին փառք, որպէս ի չաջողութենէ ուրուք անուանի Թշուառութիւն. և երկոքին ի դիպաց արգասիք են, և ոչ անձանց հաստատութիւնք:

Եւ այլ ևս. զի եթէ արեգակն և լուսին չև ևս էին լեալ, որով ժամքն և աւուրք և ամիսք և տարիք կարզին, հազար ամն ուստի երևէր. զի չէին ի միջի լուսաւորքն, որք զՔիւ աւուրց և ամաց և տարեաց կարգէին. այլ յայտ է՝ Թէ անմտութեամբ լի են բաջաղանքն:

Դարձեալ Թէ երկինք և երկիր և որ ի նոսայն՝ չէին, ևս առնէր զյաշտն կամ ևս: Յորժամ երկիր չէր և ոչ մեռնէր ինչ

որ ի նմանէ, զբարամունան ուստի գտանէր ունել ի ձեռին. կամ բնաւ զինչ իսկ յազէր, զի անաստուածք չև ևս էին արարեալ: Եւ որ քան զամենայն անմտագոյն է, զհազար ամ, ասեն, յաշտ արար. և յետ հազար ամին յերկուացաւ, ասէ՝ Թէ լինիցի ինձ որդի Որմիզդ, և եթէ չլինիցի, և ի զուր ինչ վաստակիցիմ: Եւ այնու ցուցանէ՝ Թէ տկար էր Զրուանն և կարօտ և առանց գիտութեան. և պատճառք չարեացն նոյն է, և ոչ Արհմն: Զի եթէ նորա չէր յերկուացեալ, որպէս ասեն, Արհմն ոչ լինէր՝ զոր չարեացն արարիչ համբաւեն. այլ ինքն երկմտեաց, որ անհաւատն է և լի անկարգութեամբ:

Զի ոչ երբէք ի միջէ աղբերէ երկու բղխմունք ելանեն, մինն քաղցր և միւսն դառն. և ոչ ի միջէ ծառոյ երկու պտուղք՝ մին անոյշ և մին դաժան: Արդ եթէ քաղցր գիտեն զԶրուանն, ոչ պարտին զդառն պտուղն զԱրհմն ի նմանէ համարել. և եթէ դառն հաշուին, չէ պատճառ զքաղցր պտուղն զՈրմիզդ ի նմանէ ընդել: Եւ ի դէպ ելանէ նոցա աստուա-

ծական բարբառն, որ ասէ. կամ արարէք զծառն քաղցր, և զպտուղ նորա քաղցր. և կամ արարէք զծառն դառն, և զպտուղ նորա դառն. զի ի ծառոյ անտի պտուղն իւր ճանաչի:

Եւ Թէ արարածք յիւրաքանչիւր յօրինուածս կան, և երբէք զսահմանօքն եղելօք նոցա ոչ անցանեն, որչափ ևս առաւել Զրուանն՝ եթէ մշտնջենաւոր ոք էր՝ և արարածս առնելոյ հնարս խնդրէր՝ եթէ անձամբ և Թէ այլով և Թէ որդովն՝ որպէս ասեն, պարտ էր կարգ ինչ ցուցանել և ոչ անկարգութիւն:

Զի ոչ երբէք տեսաք՝ Թէ կովք էշս ծընանի, և էշք եզինս, և ոչ գայլք մաքիս, և ոչ մաքիք աղուէսս, և ոչ առիւծք ձիս, և ոչ ձիք օձս. բայց միայն մի ինչ. ծնունդ է՝ զոր մարդիկ հնարեցան արտաքոյ կարգաց բնութեան, ծնուցանել ի ձիոց և յիշոց ջորիս. և նոյնք անսերմն և անծնունդ են. զի ոչ յԱստուծոյ կարգեցան՝ այլ ի մարդկանէ հնարողութենէ: Սրդ Զրուանն եթէ արջառ էր, զկարիճն զԱրիմն զիմարդ ծնանէր. և եթէ գայլ էր

զդառնն զՈրմիզդ հիմ ծնանէր. հչ ապաքէն մարդկան մտաց բաջաղանք են:

Զի և Զրուանն իսկ մարդ լեալ է, այլ մի բաջ առ Տիտանօքն. և որպէս սովոր են Յոյնք և Արիք և ամենայն ազգք հեթանոսաց՝ զբաջս առ դիւցազունս ունել, հայեցեալ ընդ այն քէշակարկատին Պարսից՝ Թէ որովհետև մարդիկ աշխարհիս զնա առ աստուածս ունին, ես զերկնից իսկ և զերկրի և զամենայն արարածոց արարչութիւնն ի նմանէ կարծեցուցից:

Եւ զի ճշմարիտ է բանս, յայտ անտի է՝ զի մարդկօրէն բարուք զքէշն կարկատէ, և յղութեամբ և ծննդեամբ զկրօնան կցկցէ: Զի նախ երկուց արարչաց՝ զբարւոյ և զչարի ի միջէ հօրէ զծնունդն համբաւէ. և ապա մայրենի և քուրական առականօք զարարած լուսաւորացն մուծանէ: Եւ զայն ոչ վասն այլ իրիք, այլ վասն մարմնասիրութեան և ախորժական ցանկութեանն: Ֆանզի հայեցեալ յազգն արիական՝ Թէ իգասէր էր, ըստ նմին նորին մեղկ բարուցն նմա օրէնս կցկցեաց, զի յորժամ զաստուածոցն իւրեանց լսէ-

ցեն՝ Թէ յանարժան խառնակութիւնս մըտաբերեցին, և նոքա նոցին նմանեալք՝ զնոյն անառակութիւնս անխտիր գործեցեն. յորմէ աստուածականն հեռի՝ որ ի վեր է: Զի Աստուծոյ որդի ունել՝ ոչ ամուսնութեամբ վայելէ, այլ մշտնջենաւորութեամբ, որպէս մտաց զբան, և աղբեր զգետ, և հրոյ զջերմութիւն, և արեգական զլուսաւորութիւն: Եւ ոչ որպէս նոքայն ժամին՝ Թէ կարօտեալ էր՝ զի որդի մի լինիցի նմա, որում անուն իցէ Որմիզդ:

Ո՛վ մոլոտութիւն. չև ուրեք որդի ի միջի, և նա չյղացելոյն և չծնելոյն անուն դնէր: Ամենայն ծննդոց յետ ծննդեանն դնին անուանք, և նա զիմնդր յառաջ քան զծնանելն դնէր նմա անուն Որմիզդ, բայց Թէ հաւատայր՝ Թէ և արդարև լինէր նմա որդի. և եԹէ հաւատայր՝ ընդէր երկմտեաց, և եղև երկմտութեամբն պատճառ ծննդեան Արիմանի, ուստի չարիքն յաշխարհ մտին: Եւ այն են զարմանք՝ զի մինն ի հազարամեայ յաշուն առնելոյ հազիւ լինէր, և միւսն յառաջմայն յերկմտութենէ անտի:

Դարձեալ որ զայն գիտաց՝ եթէ երկու որդիք են յորովայնի անդ, զայն ընդէր ոչ ծանեաւ՝ թէ մինն բարի և միւսն չար: Եւ թէ գիտաց և ոչ եղծ զչարն, ինքն է պատճառ չարին. ապա եթէ զայն չգիտաց, զիարդ իցէ հաւատալի՝ եթէ զմիւսն ծանեաւ. և եթէ յայնժամ ոչ իմացաւ, յորժամ խաւարին և ժանդահոտ ետես զնա՝ և յայնժամ արդեօք ոչ գիտաց: Այլ և գիտաց և ետես և արար զխաւարինն Բազաւոր. ինքն է պատճառ չարեացն՝ այնու զի ոչ եղծ զչարն, այլ և Բազաւորութիւնն ևս ետ նմա ինն հազար ամի: Եւ ոմ Բազաւորեցոյց զնա, եթէ ոչ բարիոք արարածոցն եղելոցն յՈրմըզդայ առ ի չարչարելոյ զնոսա՝ խառնելով ի նոսա զիւր չար արարած:

Այլ և զՈրմիզդ, ասեն, Բազաւորեցոյց ի վերայ նորա:

Եթէ Բազաւոր նորա իցէ Որմիզդն, զիարդ զբարիոք արարածսն իւր տայցէ չարչարել: Եթէ հայրն յորդոյն արարած ոչ խնայեաց՝ այնու զի ի ձեռս չարին մատնեաց, որին զիւրսն զիարդ ոչ զըն-

դայցէ : Առ տկարութեան ինչ, Թէ առ չարակամութեան : Եթէ առ տկարութեան չգեմեղիցէ, ապա ոչ այժմ Թագաւորել է նմա, և ոչ ի վախճանի՝ որպէս առնն՝ յաղթել կարէ : Իսկ եթէ առ չարակամութեան իցէ, գոանի զի ոչ միայն հայրն՝ որ Թագաւորեցոյց զչարն՝ է պարտ չարեաց, այլ և որդին՝ որ կամակից եղև հօրն և համաբաժակից չարին :

Դարձեալ զի զԹագաւորութիւնն որդոյն ետ, միում զինն հազարամեան, և միւսումն զանապատականն, ինքն յորմէ կարզի կայցէ : Զի մինչ չէրն ինչ՝ չէր իմիք Թագաւոր, քանզի և ոչ արարիչ իրիք էր. և յորժամ որդիքն եղեն, նորա եղեն արարիչք՝ ումն բարեաց և ումն չարեաց, և նորին Թագաւորք՝ ումն ժամանակեան և ումն յաւիտենական. և մեռաց Զրուանն դատարկ յարարչութենէ և ի Թագաւորութենէ. զի արարիչ չէ, քանզի չէ իւր արարեալ. և Թագաւոր չեղև, քանզի ոչր արարածոց լիներ Թագաւոր : Եւ յայտ է՝ Թէ ոչ էր երբէք Զրուանն, և ոչ է : Զի որ է որ, կամ արարիչ է կամ

արարած: Արդ սա բանզի ոչ արարիչ է և ոչ արարած, ոչ երբէք նա Աստուած, և ոչ է և ոչ լինի:

Դ. Այլ իրրև Զրուանն, ասեն, զայն ի մտի խորհեցաւ՝ Թէ ոք յորդոյն իմոց վաղ առ իս հասցէ՝ զնա Թագաւոր արարից, գիտաց Որմիզդ և զխորհուրդն յայտնեաց Արիմենին:

Թէ զիօրն խորհուրդ ծանեաւ Որմիզդ, զեղբօրն չարաճճոյ զխորհուրդ ընդէր ոչ գիտաց՝ Թէ ծակէ զորովայնն և ելանէ, և յառաջ երթայ առնու զԹագաւորութիւնն, որ լինելոց էր առ եղեռանէ նմա և արարածոցն իւրոց, զի նախ յառաջնումն իսկ յետս հարեալ վատԹարիցէ ըզնա, և ապա զինն հազար ամն զեղջ և ապաշաւ լինիցի առ ի զար հայելոյ իւր յուղիղ յարարածան, զոր աղաւաղեալ կամակորիցէ: Եւ կամ Զրուանն, որ զերկուց որդւոց զյղուՔիւնն գիտաց յորովայնի, յորժամ եկեալ առաջի կայր Արիմնն՝ ընդէր ոչ ծաննեաւ զնա:

Դարձեալ որ գիւր որդին Որմիզդ անուշահոտ և լուսաւոր անդէն յորովայնին գի-

տէր. զմիւս որդին՝ Թէ ժանդահոտ և խաւարին իցէ, իբր ոչ գիտաց: Ո՞չ ապաքէն յայտ է՝ եթէ ոչ իրք հաւաստիք պատմին ի նոցանէ, այլ առասպելք կարկատունք:

Եւ միւսն ևս՝ որ քան զամենայն անհաւատագոյնն է, զի մին ի հազարամեայ յաշտն առնելոյ հազիւ լինէր. և միւսն յառժամայն յերկուանալոյ անտի: Եւ եթէ ի յերկուանալոյ անտի եղև Արհմնն որդի, ոչ պարտ էր զնա իւր որդի կոչել. զի եթէ իւր որդի էր, նմին նման գոյր և նոյնպիսի. կամ Թէ բարի էր՝ բարի, կամ Թէ չար էր՝ չար: Մինթէ և նոյնպէս հայրն Զրուան և բարի էր արդեօք և չար. և ի բարիոք երակէն նորա բարւոք որդին եղև, և ի չար մայռէն նորա չարն: Եւ Թէ այնպէս ինչ ոչ էր, ապա և ոչ նա ըզչարն իւր որդի կոչէր, և ոչ ԹագաւորուԹիւն տայր նմա: Այլ Թէ ինքն բարի էր, զչարն եղծաներ և բարւոյն տայր զԹագաւորուԹիւնն. որով ինքն քաջանուն լինէր, և զբարի որդին իւր զՈրմիզդ չառնէր միշտ սրտառուչ: Այլ յայտ ամենայնէ յայտ է՝ եթէ ոչ երբէք լեալ է

Զրուանայ հայր աստուածոց, և ոչ տուիչ Քազաւորութեանց:

Ե. Դարձեալ ասեն. զբարսմունան զոր ի ձեռին ունէր՝ ցորդին իւր ցՈրմիզդ ետ, և ասէ. ցայժմ ես վասն քոյ յաշտ առնէի, յայսմ հետէ դու վասն իմ առնիցես:

Արդ եթէ նա վասն նորա յաշտ առնէր, զի որդի լինիցի նմա, իսկ Որմիզդ վասն նորա յոր սակս առնէր. մինչէ կասկած ինչ ուստեք էր նմա, և այնր աղագաւ պատուիրէր նմա վասն իւր յաշտ առնել. մինչէ յորմէ զորդին խնդրեաց, թէ գուցէ ընդ որդոյն տալոյ՝ զնա բաժ առնուցու: եթէ այն ինչ ի մտի էր նորա, բարսմունքն ինչ ոչ կարէին օգնել. և ի տալ զբարսմունան չասաց սա՝ թէ դու ինձ յաշտ առնիցես. զի ցուցցէ թէ էր ոմն՝ որում նա վասն որդոյն յաշտ առնէր. և որդոյն պատուիրեաց վասն իւր նմին յաշտ առնել:

Եւ եթէ էր ոք ի վեր քան զնա և քան զորդին, որում զյաշտն առնէին, զնա պարտ էր իմանալ պատճառ իւրեանց և արարիչ ամենեցուն, և ոչ զԶրուան պատ-

ճառ Որմըզդի և Արիմենի, և զնորա արարիչ չարեաց և բարեաց: Քան Զրուանայ որդի արարիչ տայր, որ ի վերն քան զԶրուանն էր, ինքն իսկ իւրովի չկարէր զերկինս և զերկիր և որ ինչ ի նոսա՝ առնել, որպէս յառաջագոյնն ասացաւ, և զիւր զօրութիւնն և զբարերարութիւնն ցուցանել: Կամ Թէ յորդոյն իւրմէ Արիմենայ կասկած ինչ էր նմա, և վասն այնորիկ զբարսմանն յՈրմիզդ տայր, զի նոքօք յաշտ արարեալ վերագունին՝ անկասկած լինիցի, ապաքէն պարտ էր ումեք ի միջի լինել, որում զյաշտն առնէր: Եւ եթէ էր ոք ի միջի՝ որում օրէն էր զյաշտն առնել, ապա Զրուանն չէր մըշտընջենաւոր, այլ յումեքէ եղեալ: Եւ պարտ է խնդրել յումմէ նայն եղև, և ով էր՝ ում ինքն զյաշտն առնէր. և ով այն՝ որում որդոյն հրամայեաց վասն իւր յաշտ առնել: Զի ոչ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ, եթէ ոչ յայլմէ առնուցու զլինելն. և Աստուած միայն կարօղ իցէ առնել յոչընչէ ինչ որպէս և կամի: Եւ արդ ով իցէ որ զԶրուանն արար, եթէ

ոչ Աստուած, որում և զյաշտն առնէր. որ և որդի այնպիսի ետ նմա, զի զերկինս և զերկիր և որ ի նոսա՝ առնիցէ: Եւ այն են զարմանք՝ զի ինքն ոչ արար, և որդոյն Զրուանայ կարող է տալ զառնելն:

Այլ չէր ոք ի միջի, ասեն, որում Զրուան զյաշտն առնէր. եթէ այնպէս իցէ, և ոչ Զրուանն իսկ էր. և մեծի ծաղու արժանի է, զի չէրն չէին վաս չէին յաշտ առնէր:

Զ. Այլ թէ և բախտ ևս էր՝ որպէս ասենն՝ Զրուանն, ապաքէն ուրուք բախտ էր. և ով էր արդեօք՝ որ բախտն էր: Զի բախտ անձնաւոր ինչ չէ, այլ դէպք աջողութեան. որպէս յարդարութենէն արդարն կոչի, և ի քաջութենէն քաջն, նոյնպէս և ի փառաւորութենէ անտի բախտաւոր: Արդ եթէ բախտ էր Զրուանըն՝ չէր ինչ անձնաւոր. ուստի յայտ է՝ թէ բնաւ և էր իսկ ոչ Զրուանն:

Եւ եթէ՝ որպէս ասեն՝ ի յերկուանալոյ անտի յղացաւ Արիմնն, յառաջնումն իսկ պարտ էր նմա յերկուանալ՝ զի Ծող անդէն ետ ընդ ետ լինէր նմա որդի, և ոչ

հազար ամ տառապել և յաշտ առնել զի որդի ծնցի: Սակայն եղև նմա Թէ չար և եԹէ բարի, և զչարութիւնն յիւրոց բարուց առ, և ոչ ի ծննդենէ անտի. քանզի չէր մարԹ միւմ արգանդի զչարեացն գործօնեայ և զբարեացն արարիչ ընդունել: Զի եԹէ չար էր, չարին լեԹ պարտէր ասպնջական լինել. և եԹէ բարի էր, բարւոյն: Քանզի բարին և չար ի միւմ անկանել ոչ մարԹէին, որպէս զի ոչ գայլք և գառինք ի միջէ արգանդէ ծնանին. զորոց զբարւոյն կողմն յորմըզդէ դնեն, զարջառաց և զոչխարէ և զայլոց պիտանացուաց. և զչարին կողմն յԱրհմնայն, զգայլոց և զգազանաց և ըզճճեաց վնասակարաց: Եւ զայն ոչ գիտեն՝ Թէ որպէս վնասակարացն ընդ անվնասակարսն չմարԹի բնակել, նոյնպէս և ոչ բարւոյն ընդ չարին մարԹէր ի միւմ արգանդի յղեալ: Զի զոր օրինակ չէ մարԹ զհուր և զջուր ի մի վայր առնել՝ Թէ գուցէ յոլովեալ կողմնն ապականիչ ընկերին իւրում լինիցի, նոյնպէս և ոչ բարւոյն և չարի ի մի վայր մտանել հնար էր.

ապա թէ ոչ, կամ նա զսա ապականէր, կամ սա զնա:

Արդ եթէ ի սերմանէ իցեն որդիքն, չմարթէր միումն երկուս սերմանս հակառակ միմեանց արկանել. նա և ոչ միում արգանդի երկուս սերմանս այլ և այլս ընդունել: Զի թէպէտ և բազում արք ի մի կին մերձենայցեն՝ այլ ոչ եթէ ամենեցուն սերմանքն կուտիցին. քանզի առաջին անկեալ սերմն զայլսն իբրև զաւելորդս ի բաց թքանէ: Եւ զիմարդ էր՝ զի այն արգանդ երկուս սերմանս միմեանց թշնամիս ընդունէր:

Եւ դարձեալ ընդէր ոչ յաղթեաց յաշտաժին ծնունդն, և եղև արգել յերկուսական ծննդեանն. այլ իչեալ միմեանց թըշնամիքն հաշտութեամբ խաղալիկ ի միում արգանդի գտանէին: Նա և հայրն եթէ երկուս որդիս գիտէր յորովայնին՝ զմին բարի և զմինն չար, ոչ խառն ի խուռն պարտ էր խոստանալ զթագաւորութիւնն, այլ այնմ միայն՝ վասն որոյ զյաշտն առնէր:

Բայց ապաքէն և Որմիզդն մինչ չև ծը-

նեալ էր՝ Թերակատար էր, և զիաղդ Թերակատարն զխորհուրդն հայրենի՝ իմացաւ. զի որ զխորհուրդս ուրուք ճանաչել կարէ, նա ի վեր է քան զնա. որ Աստուծոյ միայն է, և ոչ մարդոյ: Ուստի Որմիզդ վերագոյն է քան զհայրն և հզօր և իմաստուն. զի մինչ դեռ յորովայնի էր՝ զխորհուրդ հօրն գիտաց. և ելեալ յորովայնէ անտի՝ կարօղ եղև զերկինս և զերկիր առնել, զոր հայրն ոչ կարաց առնել:

Եւ արդ՝ որ այնչափ հզօր և իմաստունն էր քան զհայրն, գտանի վատԹարագոյն՝ զի ի վատԹարէն խաբեցաւ, այնու զի զխորհուրդ հօրն յայտնեաց նմա՝ ընդ որում անհաշտ ԹշնամուԹիւնն պարտ էր ունել և ոչ բարեկամուԹիւն:

Դարձեալ՝ Թէ ծակել ևս պարտ ինչ էր զորովայնն և ելանել, նմա պարտ էր՝ որ զխորհուրդ հօրն իմացաւ. զի Թող ինքն նախ երԹայր և առնոյր զԹագաւորուԹիւնն, և ոչ Արիմենայ՝ որ ոչ զխորհուրդ հօրն գիտէր, և ոչ ԹագաւորուԹեանն ինչ անգ էր: Բայց Թէ ծակեալ զորովայնն, Թերևս և ապան իսկ զմայրն.

զոր պարտ է խնդրել՝ Թէ արդարև արդեօք մայր գոյր նոցա :

Այլ ուստի յայտ իցէ՝ Թէ մայր գոյր. մանաւանդ զի ասեն իսկ՝ Թէ մինչ չև էր ինչ բնաւ, ոչ երկինք և ոչ երկիր, Զբրուան միայն էր. որ մեծի ծաղու արժանի է՝ եԹէ ինքն հայր իցէ և ինքն մայր, և նոյն սերմանարկու և նոյն սերմնընկալ : Եւ որ ևս վատԹարագոյնն է, իբրև ծակեաց, ասեն, Արհմնն զորուայնն և եկն եկաց առաջի հօրն, ոչ ծանեաւ զնա հայրն : Արդ զիարդ ոչ ճանաչէր, զի ոք ուրեք չէր՝ մինչ ինքնն միայն էր. ոչ ապաքէն յայտ էր՝ Թէ որ առ այն եկն, մի ոք յորդոցն նորա էր. և գտանի վատԹարագոյն ևս քան զվատԹարն, զի նա զսա ծանեաւ, և սա զնա ոչ ծանեաւ, և յուրաստ էր յորդոյ անտի՝ Թէ իմ որդին անուշահոտ և լուսաւոր է, և դու խաւարին և ժանդահոտ ես : Եւ զիարդ ոչ էր նորա որդի, որ ընդ բարւոք որդոյն նորա ի նմին արգանդի յղացեալ էր. և զնմանէ յուրաստ էր՝ Թէ չես դու իմ որդի, և զմիւսմէն խոստուկ՝ Թէ որդի իմ է : Եւ

եթէ իբրև ի չարէ յուրաստ էր, ապա և յղութեանն զնա չէր պարտ արժանի առնել, այլ անդէն իբրև ի չարէ խորշել և սատակել. և ոչ միայն զնա, այլ և զորմիզդ՝ որ զխորհուրդն ի վեր եհան:

Է. Այլ և միւսն ևս անպիտանագոյն է՝ զոր ասեն, թէ և զբարսմունն ետ նմա՝ առնել վասն իւր յաշտ, իբր ոչ եթէ յորմըզդի կամ ի յազելն էր զօրութիւնն՝ այլ ի գաւազանն: Զի եթէ ինքն հաւատարիմ էր լսելի լինելոյ, ապա աւելորդ իմն էր զգաւազանն ի ձեռին ունել. և եթէ ինքն չէր արժանի, և ոչ գաւազանքն բաւական էին արժանի առնել յազելոյ զանարժանն. զի բարսմունս ունել և յաշտ առնել՝ մարդկան գործ է և ոչ Աստուծոյ: Իսկ եթէ նա Աստուած էր, և կարող էր զերկինս և զերկիր առնել, զինչ պիտոյ էր նմա բարսմունս ունել և յաշտ առնել, զի զհայրն ի կասկածանացն ապրեցուսցէ: Որ զերկինս և զերկիր կարող էր առնել առանց բարսմանցն, զհայրն զինքրդ ոչ կարէր անհոգ առնել առանց գաւազանացն: Եւ արդ յայտ եղև

Թէ և հայրն անմիտ և տկար և յայլ ապաստան էր, և որդին նոյնպէս տկար և անմիտ. զի ոչ նա՝ որդի առանց յաշտ առնելոյ կարաց ծնանել, և ոչ որդին՝ առանց զգաւազանն ի ձեռն առնլոյ կարաց զնա ազատ առնել ի կասկածանաց:

Ը. Նա և լլկանաց ևս չարին երկոքին պատճառք եղեն, չարչարելոյ զբարւոք արարածս բարւոյն: Զի Որմիզդ, ասեն, որ ինչ բարի էր՝ զայն առնէր, և արս արդարս և բարեգործս, և Արհմնն զչար արարածս և զդևս:

Արդ՝ եթէ դևքն չարի արարածք և չարք էին բնութեամբ, և ոչ մի ոք ի նոցանէ բարի ինչ երբէք իմանալ կարէր. նա և ոչ Արհմնն իսկ գլխովին: Բայց արդ տեսանեմք, զի միւսն՝ որ կարի վայելուչն իսկ է ի մէջ արարածոց, որպէս ասեն, Արհմնն եղև հնարագիւտ լինելոյ: Իբրև ետես, ասեն, Թէ արարածս գեղեցիկս արար Որմիզդ, և լոյս չգիտաց առնել, խորհեցաւ ընդ դևս՝ ասէ, զինչ օգուտ է Որմըզդի, զի այնպիսի գեղեցիկ արարածս արար՝ և ի խաւարի կան,

զի լոյս ոչ գիտաց առնել: Արդ եթէ իմաստուն էր, ընդ մօրն մտանէր, և արեգակն որդի լինէր. և ընդ քեռն անկանէր, և լուսին ծնանէր. և պատուէր տայր՝ զի մի՛ ոք զխորհուրդն ի վեր հանցէ: Զայն լուեալ Մահմեայ դիւի՝ վաղվաղակի առ Որմիզդ հասանէր, և զխորհուրդն նմա ի վեր հանէր: Ո՛վ անմտութիւն և անհամ մոլոտութիւն. որ զերկնից և զերկրի և զամենայնի՝ որ ի նոսա՝ զհանգամանն առնելոյ կարաց գտանել, զսակաւիկ ինչ զհայթայթանացն հնարս չմարթէր իմանալ: Եւ այնու ոչ միայն զՈրմիզդ անմիտ առնեն, այլ և զԱրհմնն՝ բարի բարի արարածոցն հնարագիւտ:

Որպէս և զմիւս ևս ասեն՝ Թէ Արհմնն ասաց, ոչ եթէ չկարեմ առնել բարի ինչ, այլ չկամիմ. և առ ի հաստատուն զբանն առնելոյ՝ արար սիրամարգ: Տեսանէս զի կամօք է չար՝ և ոչ ի ծնէ:

Արդ զինչ պայծառազոյն քան զլոյս կայցէ, որում Արհմնն հնարագիւտ եղև. կամ զինչ գեղեցկազոյն քան զսիրամարգ՝ զոր առ ի ցուցանելոյ զգեղեցկազործու-

Թիւնն արար: Եւ այսու յայտ է՝ զի Թէ չար ոք էր բնութեամբ Արիմնն, ոչ հնարագիւտ լուսոյ լինէր, և ոչ արարիչ գեղեցկութեան: Նա և Թէ դևք բնութեամբ չարք էին, չէր հնար Մահմեայն հանգամանաց լուսոյն առնելոյ գուշակ լինել, որում ցայժմ պաշտօնեայք այնր քէշի երիցս յամի զոհս մատուցանեն. ուստի յանդիմանեալ կշտամբին՝ Թէ և նոքա դիւապաշտք են. և դևքն ոչ չարք ի բնէ, այլ կամօք: Եւ եԹէ ինքեանք դիւի զոհս մատուցանեն, որովք երեսօք զդիւապաշտան հալածիցեն: Տեսանէս զի ամենայն ինչ, որ ի նոցանէ ասի, առասպելք են և սնոտի պատմութիւնք:

Թ. Դարձեալ նոքին որ զլուսաւորացն արարած յայսպիսի պատճառանաց դնեն, շրջեալ զայս բանս՝ այլ իմն պատճառ լինելոյ արեգական մոծանեն: Արիմնն, ասեն, զՈրմիզդ ի ճաշ կոչեաց. և եկեալ Որմըզդի՝ չկամեցաւ զճաշն ուտել, եԹէ ոչ նախ որդիքն նոցա կուտիցեն: Եւ ի խեԹակել որդոյն Արիմնեի զորդին Որմըզդի, և ի խնդիր եղեն դատաւորի և ոչ գտին.

ապա առեալ արարին զարեգական, զի լիցի նոցա դատաւոր:

Արդ հնարագիւտ լինելոյ արեգական ասեն զԱրհմնն. և աստ յայտնի իսկ առարչակից լուսոյ: Եւ եթէ այլ ոք չգոյր դատաւոր, և առ հայրն չկարէին երթալ, կամ առ այն՝ որում հայրն և որդին յաշտ առնէին ըստ առասպելին:

Եւ արդ զիարդ իցեն Թշնամիք միմեանց Որմիզդն և Արհմնն՝ որք ի միում արգանդի գայռացին, և ի միմեանց ճաշ երթային, և իրերաց գործակցութեամբ զարեգական ստեղծեալ՝ դատաւոր կացուցանէին: Արդ զմին՝ Զրադաշտ ոմն զեղխագործութեան դնէ, եթէ ի մայրենի և ի քեռական առականաց արեգակն և լուսին արարան, զի ընդ այն հայեցեալ ազգին՝ ի նոյն պղծութիւնս անխտիր լինիցին. և զմիւսն՝ վասն զամօթն ծածկելոյ համբաւէ՝ թէ վասըն դատաւորութեանն արարին: Եւ քանզի ընդ գրովք չեն կրօնքն, երբեմն զայն ասեն, և այնու խաբեն. և երբեմն զայս, և սովին պատրեն զտխմարս: Բայց թէ աստուած էր Որմիզդն, յոչընչէ կարող

էր առնել զլուսաւորն՝ որպէս զերկինս և զերկիր, և ոչ ի ժանդագործուԹենէ, կամ առ ի չգոյէ դատաւորի:

Ծ. Դարձեալ միւս ևս իմն ասեն, որ ամենևին չէ հաւատալի, Ըէ իբրև մեռանէր Որմիզդ՝ զսերմն իւր յաղբիւր մի արկ, և մօտ ի վախճան յայն սերմանէ կոյս մի ծնանելոց է, և ի նմանէ որդի եղեալ՝ հարկանէ զբազումս ի զօրացն Աբիմենի. և երկու ևս նոյնպիսիք նոյնգունակ եղեալք, հարկանեն զնորա զօրսն և սպառեն:

Նախ այնու յանդիմանին, զի ջուր՝ սերման ոչ պահիչ է, այլ կորուսիչ: Եւ ապա միւսովն կշտամբին. քան աղբերն զսերմնն կենդանի տայր պահել՝ զինքն ընդէր ոչ զօրեաց պահել կենդանի, այլ այնպիսւոյ բարւոյ աստուծոյ որդի՝ ի չարէն որդւոյն սատակեցաւ: Եւ յայտ է՝ Ըէ որք յանկածուԹեանն յաղԹեցին բարւոյն և որդւոյ նորա, և ի վախճանի նոքին բռնանալոց են, որոց այնչափ անչափ զօրս համարեն:

Դարձեալ՝ եԹէ աստուածք նոցա մահ-

կանացուք իցեն, ինքեանք յարուԹեան ակն զիմարդ ունիցին. և մանաւանդ երեք-մատեանն յարուԹեան՝ զոր չէ պարտ յարուԹիւն համարել, այլ չյարուԹիւն: Բայց Թէ արդարև՝ որպէս ասեն՝ Թէ որդին մեռաւ, և յՈրմըզդէ և ի միւսմէ որդւոյն նորա ի Ֆորաշետէ չէր օրէն Թեբահաւատ լինել՝ Թէ չմեռանիցին. որովհետև միանգամ ամուսնաւորաց և մահկանացուաց ազգ է տոհմ աստուածոց նոցա:

Եւ զայնպիսի աստուածս ոչ առ աստուածս պարտ է ունել, այլ առ չաստուածս: Զի որ ճշմարիտ Աստուածն է, զամենայն ինչ զիւր մշտնջենաւորուԹեամբ ունի. որպէս զէուԹիւնն, նոյնպէս և զյաւէժ կենդանուԹիւնն, և զորդին միշտ ընդ իւր ունել՝ առանց իրիք պատճառանաց և միջնորդուԹեան. և զարարչուԹիւնն ոչ ի հայթայթանաց, այլ ի կամակար կարողուԹենէ: Եւ ոչ զոք ունի իւր հակառակ՝ Թէ ինքն բարեաց արարիչ իցէ և միւսն չարեաց. որպէս նոքա Որմըզդի զբարի արարածսն դնեն և Արիմենի զչարսըն. զոր ոչ կարեն ցուցանել, Թէ հաւաս-

տեաւ հայիցին, չար ինչ արարած՝ որ ի բնէ չար իցէ, ոչ զԱրիմնն և ոչ զդեւս՝ զոր նմա արարածս դնեն. որպէս բազում անգամ յոգնագոյն օրինակօք ոչ մոռացաք յառաջին ճառսն յայտ առնել:

Այլ Թէ Արիմնն չար կարծիցի նոցա, վասն զԱպարամանի անունն յանձին կրելոյ՝ առ ի յարևէ զարեգակնատենչիկան արկանելոյ, ուստի և զանունն իսկ զԱպարամանոյ առ, նոյնպէս և աստանայն անուն՝ ոչ բնութեան ինչ անուն, այլ բարուց, որպէս ի բարութենէ ոք բարի կոչի, և ի չարութենէ չար. և այն ոչ եթէ բնածին բարք են, այլ եկամուտս: Եւ յայտ անտի է, զի բազում անգամ զբազում անզգամս տեսանեմք զգօնացեալս, և զզգօնսն անզգամեալս. զլրկտիս զգաստացեալս, և զզգաստս լկտեցեալս. այն՝ որ ի բանաւորաց ի կողմանէ անտի է:

ԺԱ. Նա և անբանաւորացն անասնոցն վասն այլ և այլ բարուցն ոչ երկուս արարիչս պարտ է իմանալ, որպէս նոքայն առ տխմարութեան կարծեցին՝ Թէ Ար-

միզդն զանասունս, զչորքոտանիս և զԹռչունս և զձկունս և զամենայն ինչ՝ որ բարի և զեղեցիկ է՝ արար. և Արհմնն զգազանս չարս և զԹռչունս պիղծս և զսողունս և զօձս և զկարիճս և զամենայն վնասակար ճճիս: ԵԹէ երկինք և երկիր և օդ և ջուրք Որմըզդի արարածք իցեն, զիարդ վնասակարքն արարեալք յԱրհմենայ ի նորա երկրի բնակիցեն, և զնոյն օդս ծծիցեն, և նովին կերակրովք՝ որ յերկրէ են՝ բուծանիցին, և ի նոյն ջուրս պիղծ ճճիքն ընդ սուրբ ձկունան անանիցին, և ի նոյն օդս գիշակեր Թռչունքն ընդ ազնուագոյն Թռչունան շողայցեն. զորս պարտ էր Որմըզդի բարիոք արարածոցն աստակել և ոչ անուցանել. քանզի նորա է երկիր և ջուրք և օդք:

Եւ ԵԹէ գազանք վասն վնասակարութեանն ի չարէ ումեքէ արարչէ կարծիցին, զմարդիկ առաւել արժան է ի չարէ արարչէ իմանալ, և ոչ զնոսա: Զի սոքա աւելի վնասակար են գազանացն՝ քան Թէ գազանքն սոցա. զի սոքա ելեալ ի քաղաքաց և ի գիւղից՝ հետամուտք լի-

նին կոտորելոյ զգազանն, և նոքա սրացեալք ի լերինս և յափափայս ճեպեն անկանել փախստականք. յորոց կիսոցն և մորիքն արտաքոյ ընտելութեան մարդկան են:

Նոյնպէս և սողնոցն զխոշիւն միայն ըզմարդոյն առեալ, է որ ի ծակս, է որ ի սորս, է որ ընդ փապարս երկրի մտեալ ղօղեն. և եթէ ի կարի նեղելոյ զնոսա մարդկան՝ մեղանչիցեն, այն մարդկան վնաս է և ոչ նոցա: Եւ այնու ոչ ի չարէ ումեքէ պարտ է զգազանն և զճճիս իմանալ, այլ ի միոջէ բարւոյ արարչէ. ըզկէսն ի պէտս, և զկէսն ի զարդ, և զկէսն զարհուրեցուցիչս՝ վասն զտարապարտ հպարտութիւն մարդոյն ցածուցանելոյ: Դարձեալ ի նոցա վնասակարութիւնն հայեցեալ՝ միմեանց չմեղանչել. զի թէ զնոցայն վնասակարութիւնն՝ որ ոչ խորհրդով լինի՝ ատեալ պարտ իցէ, որչափ ևս առաւել զմարդկան մեղանչականութիւն՝ որ խորհրդով և նենգութեամբ լինիցի:

Նա և չքոտեօքն զկծեցուցանէ զմեզ.

որպէս լուծլն և ճանճիւ և մժիւով և գոռեխով, մնով և մկամբ, և այլովք նոյնպիսեօք, որք չնչիկքն են, և զմեզ աշխատ կարեն առնել: Զի է ի նոցանէ՝ որ զմեզ աշխատ առնէ, և է ինչ՝ որ մերումըն վնասակար լինի. որպէս և մուկն և ցեց և որդն, և որ ինչ նոցա նմանող իցէ: Եւ նոքօք ցաժուցեալ զնստուցանէ զմիտս մեր. զի յորժամ գիտիցեմք՝ Թէ և փոքունքն կարող են մեզ վնասակար լինել, իջցուք ի տարապարտ հպարտութենէ՝ չունել զանձինս առ մեծարգիս:

Դարձեալ՝ և զխնամն ևս Աստուծոյ զմտաւ ածել՝ Թէ ուր փոքունքն կարեն մեղանչել մեզ, զիարդ կարէաք ապրել՝ Թէ ընդ սողունս և ընդ գազանս բնակակից արարեալ էր զմեզ: Այլ և յայն ևս հայել պարտիմք՝ Թէ որչափ անասունս վասն մերոց պիտոյից ընդ մեօք հնազանդեաց, զձիս և զուղտս և զփիղս և զարջառ և զոչխար. և ի լերանց և ի դաշտաց՝ զայծեմունս և զեղջերուս և զառիւծ և զվարազս, որոց կէսքն կրելիք են և կէսքն ուտելիք:

Եւ զայն ևս գիտել ետ մեզ, Թէ որոց նա կամի՝ յաղթականք կարեմք լինել. և որոց ոչ կամի՝ չկարեմք յաղթել՝ ոչ միայն արգաւորացն, այլ և չնչենոցն: Զինչ վատթարագոյն քան զլուն և զմուկն կայցէ. և զայն ոչ սպառել կարեմք, և ոչ յաշխարհէ մերժել: Եւ այլն ևս ինչ մի ի ջուրս է, և զմեր պէտս ոչ հարկանիցէ, բայց միայն զի զկծեցուցանիցէ. յորժամ տեսանիցեմք՝ Թէ չեմք բաւական զնոսա սպառել, ծանիցուք զանձանց տկարութիւն, և զիջցուք ի զուր հպարտութենէ, և նմա միայն տացուք զյաղթութիւնն, որ չնչենովքն զմեզ աշխատ առնէ, և զմեծամեծան հնազանդէ մեզ. զոր օրինակ զիւղս և զուղտս և զառիւծս և զինծս և զյովազս. զորոց զկէսան ի կրելիս, և զկէսան ի զբօսանս ընտելացուցեալ համբուրեցուցանէ:

Ժ. Իսկ այլք այլազգ կարծեցին զաստանայէ, Թէ Աստուած իսկ զնա չար արար:

Արդ եԹէ Աստուծոյ զնա չար արարեալ էր, ընդէր հալածէ եկեղեցի զդևս. եԹէ

վրէժխնդիրք չարեաց հաստատեցան դևք, ապա վնաս առնէ եկեղեցի այնոցիկ՝ որ նոքօքն խրատիցին, և հակառակ կամացն Աստուծոյ կայ. զի նա ի խրատ արար զնոսա, և սա հալածէ: Բայց զի զհալածելն ոչ յանձնէ ինչ ունի՝ այլ յԱստուծոյ, յայտ անտի է. եթէ ոչ նախ փչեաց Տէրն յերկոտասանսն հոգի, և ետ իշխանութիւն եօթանասնից, ոչ կարէին հանել զդևս: Նա և ինքն իսկ եթէ խրատիչ գիտէր զնոսա, ոչ սաստէր ի նոսա. և ոչ աշակերտացն իւրոց հալածել հրամայէր, որոց իւրն հրաման տուեալ էր մտանել ի մարդիկ:

Եւ զիարդ իցէ, զի հրեշտակք երբ լսեն զանունն Աստուծոյ՝ ուրախ լինին, և դևք ոչ երբէք. այլ առաւել, իբրև լսեն, քստմնին: Եթէ կարճիչք յանցանաց էին դևք, ոչ երբէք զմարդիկ ի կռապաշտութիւն յօժարեցուցանէին, և ոչ ի պէսպէս աղանդս փիլիսոփայից և հերձուածողաց. ոչ ի բաշխս բախտից, և ոչ ճակատագրաց, և ոչ կապելոց հրամանաց. ոչ ընդ աստեղս պշուցանել՝ թէ

նոքա ինչ իցեն պատճառք բախտաւորութեան և չուառութեան:

Եւ զի դիւաց գիւտ է կռապաշտութիւն, վկայէ Դաւիթ՝ թէ՝ ամենայն աստուածք հեթանոսաց դևք են: Եւ երանելին Պօղոս ասէ, թէ զինչ հաղորդութիւն կայ Քրիստոսի ընդ բելիարայ: Եւ ահաւանիկ, որպէս ասեն, հաղորդութիւն կայ նոցա ընդ միմեանս. զի եթէ վասն զի չար արար զնա Աստուած՝ չարչարիցէ, չէ օրէն զնա չար կոչել՝ այլ վրէժխնդիր. զի չար յայնժամ էր, թէ զհրամանն ոչ կատարէր:

Բայց ընդէր ոչ նա, այլ հրեշտակ Աստուծոյ էհար զանդրանիկն եգիպտացւոց, և բազում անգամ զՀրեայն յանապատի անդ: Զի եթէ նա յայն եղեալ էր, ընդէր ոչ նայն հարկանէր՝ այլ հրեշտակ: Եւ յաւուրս Դաւթի՝ եօթանասուն հազար յերկոտասան ցեղից Իսրայէլի, և ի բանակէ աստրեստանոյն՝ հարիւր եօթանասուն և հինգ հազար զօրս էհար հրեշտակ Աստուծոյ, և ոչ դևք: Ընդէր և յաւուրս Յեսուայ որդւոյ Յովսեդեկայ՝ հրեշտակ ասէր

ցբանսարկուն, որ կայր նմա հակառակ, Թէ սատեսցէ ի քեզ Տէր՝ սատանայ: Ընդէր և որդիք սատանայի կոչին Հրեայքն՝ վասն զօրինօքն անցանելոյ, եթէ նա կայցէ ի հրամանին՝ զոր առ, և նոքա անցին զպատուիրանսն: Եւ բնաւ իսկ սուտ ընդէր կոչիցի, որ արդարն կայցէ ի կարգին. զի ոչ ի նմանէ է չարութիւնն, այլ յայնմանէ՝ որ զնա այնպիսի արար. և զմէ առաքիցի ի խաւարն արտաքին:

Այլ, ասեն, հանգիստ է նմա խաւարն: Նա աւանիկ ոչ զայն աղաղակէր լէգէոնն դիւաց, այլ Թէ տանջանք պատրաստեալ են նմա: Զի կայ մեր և քո, ասէ, Որդի Աստուծոյ, զի եկիր այսր յառաջ քան զժամանակն տանջել զմեզ: Եւ զի զվատնարութիւնն նորա յայտ առնիցէ, ասէ. ոչ որ կարէ առնուլ զգործիս հզօրին, եթէ ոչ նախ զհզօրն կապիցէ: Արդ ընդէր կապէր զնա, եթէ ոչ՝ զի գիտէր Թէ կամօք չարանայ, և յորժամ կամի՝ կարող է զգօնանալ:

Եթէ ի բնէ ի չարչարել եղեալ էր զնա՝ ընդէր բամբասէր չարի անուամբ, որ

զբնութիւնն նոյնգունակ որպիսի եղևն՝ պահէր: Նա և ոչ պատժոց արժանի էր, վասն ստուգելոյ զբնութիւնն. քանզի և ոչ զիուր ոք պատժէ, Թէ ընդէր այրես, և ոչ զջուրս, Թէ ընդէր հեղձուցանէք: Եւ միանգամայն և հրամանացն ևս հարցուածք սովին մտօք լուծանին:

ԺԹ. Հրամանաւ, ասեն, մեռանիցին մարդիկ, Թէ առանց հրամանաց:

Նախ պարտիմք գիտել՝ Թէ զինչ հրամանքն իցեն, և ուստի բան հրամանացն ընդ աշխարհ տարածեալ իցէ:

Հրաման կապեալ վասն մահուան՝ յաստուածատուր գիրս ոչ ուրեք գտանեմք. քանզի Տէրն մահու և կենաց՝ և կարճել իշխէ զհրամանն իւր և երկայնել: Որպէս առ ջրհեղեղեան ասէ. եղիցին աւուրք կենաց մարդկանս այսորիկ հարիւր և քսան ամ. և վասն բազմութեան անօրէնութեանն պակասեցոյց ի նոցանէ զքսանն: Եւ որպէս առ Ադամամբն ասէ. յաւուր յորում ուտես ի պտղոյ ծառոյն, ի նմին մեռանիս. և առ իւրում բարերարութեանն, և վասն որդէծնութեան և մարդ-

կան յաշխարհի սերելոյ, ներեաց նմա ինն հարիւր և երեսուն ամ, զի մի գեղեցիկ ստեղծուածն իւր համօրէն չնչեացի: Եւ վասն արտասուացն Եզեկիայի արքայի՝ յաւելաւ նմա հնգետասան ամ: Եւ վասն ապաշխարութեան Նինուէացւոցն՝ ոչ կորոյս զքաղաքն յաւուրն երրորդի ըստ քարոզութեան մարգարէին իւրոյ:

Եւ ոչ որպէս քաւդեայքն աստեղաբաշխարք, որ և զծննդոց պատհաւս և զմահուանց՝ յաստեղաց իրրև ի կենդանեաց դնեն: Որպէս թէ յորժամ ծնանիցին, անդէն և մահուանքն իւրաքանչիւր ուրուք անվրէպ սահմանիցին. և ըստ այն ոչ յառաջել ումեք մեռանել հնար իցէ, և ոչ յամենալ:

Այլ յանդիմանեն զնոսա և պատերազմացն դէպք. զի ի միում աւուր բիւրք բիւրուց մարդկան կոտորին այլ և այլ տիովք, կէսք մատաղօրեայք, և կէսք երիտասարդք, և այլք ի կատարեալ հասակի ծերութեան. որոց ծնունդքն ի միում ժամու չէին, և մահքն ի միասին եղանին:

Եւ դարձեալ՝ Թէ յաստեղաց էին պատճառք ծննդոց, ընդէր ի հնդիկս ոչ ոք երբէք սպիտակ ծնաւ, և ոչ յայլ աշխարհս այնպիսի ինչ երևեալ. մի՛ Թէ ճանդր միայն ոչ էհաս աստղն սպիտակաբար, և ոչ յայլ աշխարհս աստղն սևագործ: Եւ ատամունքն հնդկին ուստի իցեն այնչափ սպիտակ:

ԺԴ. Դարձեալ բախտաւորութեանց և չբաւութեանց՝ զաստեղսն դնեն պատճառս. որպէս Թէ աստեղատունք ինչ իցեն, և ըստ դիպելոյ պատճառաւորաց աստեղացն յաստեղատունան՝ նոյնպիսիք և ծնունդքն լինիցին:

Մինչ դեռ առիւծն, ասեն, յաստեղատանն իցէ՝ և ծնանիցի ոք, Թագաւոր լինելոց է. և մինչդեռ եզն է՝ և ծնանիցի ոք, հզօր և բարեհնչան գալոց է. և մինչ դեռ խոյն է՝ և ծնանիցի ոք, մեծատուն լինելոց է, և որպէս նայն Թաւ և ասուեղ է. և յորժամ կարիճն է՝ և ծնանիցի ոք, չար և մեղանչական լինելոց է: Եւ այլքն ևս այլոց ազգի ազգի իրաց պատճառք լինին: Որպէս Թէ յորժամ Կրոնոն յաս-

տեղատուն մտանիցէ, Թագաւոր մեռանի. որ եղևն իսկ երկիցս, որպէս ասեն, առ Թէոդոսիւ կայսերբ. և քաւղեայքն պնդեալ էին՝ Թէ մեռանի Թագաւորն, և նա ոչ մեռաւ, զի յամօՀ լիցի սափաստուտ արուեստգիտուԹիւնն:

Արդ նախ զայն ասասցեն. ո եհան զայնպիսի երկրական անուանն՝ զգիշակեր և զխոտակերս յերկինս, զի պատճառք ծննդեան մարդկան լինիցին. զի որ ոք ուրուք պատճառ ծննդեան կարիցէ լինել, նա ի վեր քան զնա՝ որոյ պատճառն է՝ պարտի լինել իմաստուԹեամբ: Արդ հասարակաց մտօք հայեցեալ, տեսցուք ո ի վեր իցէ, մՀրդն՝ որ անասնոյն տիրէ, Թէ անասունն՝ որ մարդոյն ի հարկի կայ. և ոչ միայն ի հարկի կայ, այլ և կերակուր նորա է: Եւ գազանացն զկէսան փախստականս եղեալս տեսանեմք, և զկէսան յանտառախիտ մայրիս ամրացեալս՝ յորժամ զբարբառ միայն մարդոյն լսիցեն: Ֆանզի զահ և զերկիւղ մարդոյն՝ արկեալ է արարչին ի վերայ գազանացն և սողնոցն և անասնոցն և Թռչնոց, վասն

առաւել գնա պատուելոյն. զորոյ և զարարածն նորանշան իմն ընծայեցուցանէ, Թէ ստեղծ որպէս ձեռօք, և փչեաց շունչ կենդանի որպէս Թէ բերանով. և այնու, զի առաւել պատուական ցուցանիցէ զնա, յայտ առնէ:

Այլ զի Աստուած ի յօդապատ մարմնոց ի վեր է, այն յայտնի է ճշմարտիւ: Եւ եԹէ վասն նորա եղեն գազանքն և անասունքն, որպէս փորձ իրացն իսկ ցուցանէ, զիարդ էր՝ զի յերկինս ելանէին և մարդկան ծննդեան պատճառք լինէին. որք այնչափ հեռի են ի կենդանուԹենէ, որչափ ճրագ մի՝ որ ի մարդկանէ կազմեալ իցէ լուսատու լինել տան ի գիշերի: Եւ չկենդանիքն զիարդ կարիցեն կենդանեացն պատճառ ծննդեան լինել:

Այլ Թէ չէին կենդանիք, ասեն, և ոչ գնայունք էին. բայց զի գնան, յայտ է՝ Թէ կենդանիք են:

Արդ լուիցեն. եԹէ ամենայն ինչ որ գնայուն է՝ կենդանի իցէ, ապա և ջուրք որ գնան՝ կենդանի համարեացին. և կրակ վասն շարժելոյն՝ կենդանի կարծեացի.

և օդք և հողմք վասն շնչելոյն՝ կենդանի հաշուեցին. և տունկք և խոտոց բոյսք, որ Թէպէտ յամրագնացք են, սակայն աճելովն երևին՝ Թէ գնայունք են. և արդ որպէս ոչ ամենայն գնայուն՝ կենդանուԹիւն մտաւոր և բանաւոր ունի, նոյնպէս և ոչ արեգական, և ոչ լուսին և աստեղք, և ոչ երկինք իսկ՝ ընդ որով նոքա շրջին՝ կենդանուԹիւն ինչ մտաւոր և բանաւոր ունին: Այլ երկինք և երկիր անօԹք ետեղակալք են հաստատեալք յարարչէն, ունել ամփոփ ընդ ինքեամբ զամենայն՝ որ ի միջի նոցա է. և լուսաւորքն իբրև ճրագունք լուցեալք, վասն զխաւարն ի միջոյ մեծի տանս փարատելոյ: Եւ են հարկաւորք բնակաւորք, հրամանաւ արարչին իւրեանց, ի վայելս ամենայն կենդանեաց. և իւրեանց ինքեանք չեն, քանզի ոչ գիտեն՝ Թէ իցեն և Թէ չիցեն: Որպէս և երկինք և երկիր և ջուրք և փայտք և քարինք են վասն որոց եղենն, և իւրեանց ինքեանք չեն. քանզի ոչ գիտեն՝ եԹէ իցեն և Թէ չիցեն, այնու զի չեն մտաւորք և բանաւորք:

Դարձեալ, որպէս ասեն, Թէ յորժամ առիւծն իցէ յաստեղատանն՝ Թագաւոր ծնանելոց է. Թէ այնպէս էր, բազում անգամ բազում Թագաւորաց պարտ էր ծնանել. զի ոչ մի միայն ծնանի՝ յորժամ առիւծն յաստեղատանն իցէ, այլ բազումք:

Եւ եթէ արդարև առիւծն էր պատճառ ծննդեան Թագաւորաց, ապա ոչ Թագաւորի որդի Թագաւոր լիներ, այլ որ ուրուք և դիպէր ծնունդն մտանելոյ առիւծուն յաստեղատունն: Իսկ եթէ տեսանեմք՝ եթէ Թագաւորի որդի Թագաւոր լինի, որպէս ԴաւԹայ որդի Սողոմոն ի հօրն աԹոռ նստաւ, և նորա որդին ի նորա աԹոռ. և մի ըստ միոջէ կարգ Թագաւորացն Յուդայ ձգեցաւ մինչև ցմակաբէացիսն: Նոյնպէս զաստրեստանեայցն և զբաբելացւոցն՝ որդի ի հօրէ առնուին կարգաւ զԹագաւորուԹիւնն: Որպէս և ի Սասանայն ումեմնէ՝ սասանականքն որդի ի հօրէ կարգաւ առին մինչև ցայսօր զԹագաւորուԹիւնն սասանականացն. և չըգտաւ առիւծն յերկինս մտեալ յաստեղատունն, զի զԹագաւորուԹիւնն յայլ ազգ

ուրեք կարասցէ փոխել յերկրին արևելից:

ԺԵ. Եւ յայտ է՝ Թէ որպէս Թագաւորութեանն չէ աստղն պատճառ, նոյնպէս և ոչ զօրութեանն, և ոչ մեծատուն առնելոյ. մանաւանդ իսկ զի տեսանեմք զմեծատունս աղքատացեալս, և զաղքատս մեծացեալս: Մի՛ Թէ զձյն ևս կարիցեն ասել՝ Թէ մի և նոյն աստղ մեծութեան և աղքատութեան կարէ պատճառք լինել, և զօրութեան և տկարութեան. քանզի և զիզօրս երբէք երբէք տկարացեալս տեսանեմք, և զտկարսն զօրացեալս. և զչարսն զզօնացեալս, և զզօնս չարացեալս: Եւ ուր իցէ այն, զոր ասենն, եԹէ որ ինչ ի ճակատագրին գրեալ է հրամանացն, այնմ չէ հնար վրիպել. այլ որ փառաւորն գրեցաւ՝ փառաւոր է, և որ չուառն՝ չուառ. և ուր հրամանքն իցեն և յումմէ հրամանքն, ըստ այնմ և մեռանին. և վրիպել չէ հնար ի սահմանելոյ հրամանէն:

Ո՛ հրաման տկար, և անզօր սահման, զոր և գողքն և աւազակքն կարեն խախտել, յորժամ ի վերայ հասեալ՝ զոմն

յընչից և յարևէ արկանիցեն: Եւ եթէ ի սահմանելոյ ինչ հրամանէ իրքն գործիցին, չէ պարտ՝ ոչ Թագաւորաց մահու հրաման տալ, և ոչ դատաւորաց քերել և սպանանել զմարդասպանն. որք զպատուհասն ի վերայ ածելով յայտ առնեն՝ Թէ ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանացն եղանին մեղքն մեղանչականացն, այլ ի բռնաւորուԹենէ չարագործուԹեանն:

Եւ կամ յորժամ հէն յաշխարհ արշաւիցէ՝ տեռազերծ առնել և կոտորել զմարդիկ, մի զօրս ժողովեսցեն, և մի գունդս առ գունդս կազմեսցեն՝ հանելոյ զհէնն յաշխարհէ. այլ իրաւունս տացեն՝ Թէ հրամանք են աշխարհին ի հինէ կոտորել, մեք ընդէր դառնայցեմք ընդդէմ հրամանացն. այլ գումարելով զզօրսն և հանելով զԹշնամին յաշխարհէ, ցուցանեն՝ եթէ ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանի կոտորածքն գործիցին, այլ ի բռնաւորուԹենէ հինին՝ որ եկեալ ժլատուԹեամբ կոտորէ զաշխարհ, և մերկանայ յընչից և յստացուածոց:

ԺԶ. Բայց զայն ևս գիտել պարտ է՝

Թէ զամենայն ինչ զվնաս, որ ի վնասակարաց գործիցի, յառաջագոյն գիտէ Աստուած:

Եւ եթէ գիտէ, ասեն, զվնասս՝ որ գալոց են ի վերայ մարդկան, ընդէր ոչ արգելուցու:

Եթէ որչափ վնաս արգելու Աստուած ի մարդկանէ՝ այն ոչ ամենեցուն յայտնի է, այլ նմա միայն՝ որ զամենեցուն զիրըննամս ըստ իւրաքանչիւր պիտոյից բաշխէ: Կարճէ երբէք և զվնաս վնասակարացն, զի մի այնպէս երևեսցի՝ թէ չըկարիցէ արգելուլ զվնասսն: Դարձեալ Թուլացուցանէ և վնասակարին՝ յագեցուցանել զկամս իւր յընկերին, զի մի Թուիցի ընդ հարկաւ վարել զբանաւորսն, այլ զի յիւրաքանչիւր գործոց անձնիւր հանդէսք երևիցին:

Եւ կանխաւ գիտէ զամենայն, և կանխագիտութիւնն չէ պատճառ չարեաց: Ֆանզի և ոչ յորժամ տեսանիցէ ոք զընկեր իւր ընդ լպիրծ տեղիս գնացեալ, և ասիցէ՝ Թէ գլորելոց է, նա ինչ եղև պատճառք գլորման ընկերին: Եւ ոչ,

յորժամ ընդ աւազակուտ տեղիս դիմեալ զընկերն ոք տեսանիցէ, և ասիցէ՝ Թէ եղեռն գտանէ, նա ինչ իցէ պատճառք ՚ի նմա: Եւ ոչ, յորժամ զազնուականի ուրուք զորդի յաղակատանս հասեալ տեսանիցէ ոք, և ասիցէ՝ Թէ կորուսանելոց է զինչսն հայրենիս, նա ինչ իցէ պատճառք վատնելոյ ընչիցն: Նոյնպէս և ոչ Աստուծոյ յառաջգիտութիւնն է պատճառք բարեաց կամ չարեաց:

Գիտէ Աստուած կանխաւ զամենայն. այլ է ինչ՝ զոր կամի, և է ինչ՝ զոր ոչ կամի: Կամեցաւ ածել ջրհեղեղ, և ոչ իւր այն կամք էին՝ Թէ ջրհեղեղաւ մարդիկ և անասուն առ հասարակ սատակիցին, այլ անարժան խառնիճն ազգին յանդըգնութիւնն ած զնա յայն՝ առնել զոր ոչն կամէր. որպէս ինքն իսկ ուխտէ մարգարէին՝ Թէ ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ զդառնալն նորա և զկեալ:

Կամէր՝ Թէ չէր յանցուցեալ Ադամայ. և քանզի կանխաւ գիտէր զյանցանելն, յառաջագոյն պատուիրեաց նմա՝ չուտել ի պտղոյ ծառոյն. և զի ոչ անսաց հրամա-

նին, յիրաւի պատժեցաւ: Կանխաւ գի տաց զՅակոբայ՝ Թէ առաքինի լինելոց է, և զԵսաւայ՝ Թէ յանպիտանութիւնս կործանելոց է. և վասն այնորիկ մինչ չև ծնեալ էին, և մինչ չև մի ինչ բարի կամ չար գործեալ էին, ասէ. զՅակոբ սիրեցի և զԵսաւ ատեցի: Եւ յառաջագոյն հայեցեալ ի նախանձաւորութիւնն Յովսիայ արքայի Յուդայ, ազգ արար կանխագոյն մարգարէին՝ Թէ յառնելոց է ի նոցանէ Թագաւոր, որ զկռապաշտութիւնն որդւոցն Իսրայէլի եղծանիցէ: Եւ յառաջագոյն ծանուցեալ զազնուականութիւնն Կիւրոսի պարսկի, կանխաւ գուշակեաց՝ ԵԹէ արձակելոց է զգերիս ժողովրդեանն: Եւ յայտ է՝ Թէ կանխաւն գիտել առաւելութիւն է սքանչելի էութեանն:

ԾԷ. Զբարին կամել և ոչ զչար՝ բարերարութիւն մարդասէր բնութեանն էր. յառաջագոյն հայեցեալ ի հեստութիւն Փարաւոնի, ասէ. ես խստացուցից զսիրտն Փարաւոնի:

Եւ Թէ նա խստացոյց, ասեն, ընդէր եհար հարուածովք զնա և զերկիրն եգիպտացւոց:

Այլ Առաքեալ մտանէ ջատագով Տեառնըն իւրոյ՝ Թէ ոչ նա խստացոյց զՓարաւոն, այլ ինքն անձամբ զանձն: Եւ ասելն Աստուծոյ՝ Թէ ես խստացուցի, այնպիսի ինչ է՝ որպէս ոք յորժամ զընկեր իւր կամ զծառայ մեծարիցէ, և նա հպարտացեալ արհամարհիցէ զմեծարիչն. և և նա ասիցէ՝ Թէ զի՞ դնեմ նմա մեղ, ես անձամբ արարի ինձ Թշնամանս՝ զի ածի ի պատիւ զանարժանն: Նոյնպէս և զԱստուծոյն իմանալի է՝ Թէ ես ներելովն իմով եղէ պատճառք խստանալոյն նորա, զի ոչ յառաջնումն սատակեցի զանդրանիկն նորա:

Այլ կամեցաւ, ասէ, Աստուած ցուցանել զբարկութիւնն իւր, և յայտնի առնել զզօրութիւն իւր, զոր ած բազում երկայնմտութեամբ ի վերայ ամանոցն կազմելոց ի կորուստ: Ուստի յայտ է՝ Թէ երկայնմտութիւնն Աստուծոյ եղև պատճառ խըստութեան սրտին Փարաւոնի, այնու զի զվերջին հարուածան յառաջնումն ոչ ած ի վերայ նորա:

Այլ զի չէր քարացուցեալ Աստուծոյ

զսիրտն Փարաւոնի, այնու իմանալի է՝ զի մերթ հաւանէր արձակել զժողովուրդն, և մերթ չհաւանէր: Եւ անօթս կազմեալս ի կորուստ ինքեանք զանձինս արարին, և ոչ Աստուած, զորմէ ասէն Առաքեալ՝ եթէ կամի, զի ամենայն մարդիկ կեցցեն, և ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն: Եւ ոչ ապաքէն և նոքա յամենայն մարդկանէ էին:

Եւ ոչ որպէս ընդդիմակաց կողմն ասէ՝ եթէ ոչ ըստ կամել է, և ոչ ըստ ընթանալ, այլ ըստ Աստուծոյ ողորմելոյն. զի որում կամի՝ ողորմի, և որում կամի՝ խըստանայ: Եւ ըմբերանեալ զդիմակաց կողմնն Երանելւոյն, ասէ. դու ով ես, ով մարդ, որ պահանջես պատասխանի յԱստուծոյ. եթէ և այնպէս ինչ էր, դու ով էիր՝ որ համարս պահանջէիր յԱստուծոյ. մի՞ թէ ասիցէ կաւն ցբրուտն՝ թէ ընդէր այդպէս ստեղծեր զիս: Բայց զի ոչ այնպէս է, նորին իսկ ի նմին թղթի գըրեալ՝ ասէ. թէ որում կամիք, ընծայեցուցանէք զանձինս ձեր ի հնազանդութիւն, եթէ արդարութեան, և եթէ հնազանդու-

Թեան մեղաց: Եւ առ Տիմոթէոս գրեալ՝ ասէ. եթէ ոք սրբէ զանձն իւր, եղև նա անօթ կազմեալ պիտանացու ի գործ տեառն իւրոյ: Եւ մարգարէն ասէ. եթէ ախորժեսջիք և լուիջիք ինձ, զբարութիւն երկրի կերիջիք:

Եւ այսու ամենայնիւ և այլովք բազմօք յայտ է՝ եթէ ոչ նա անօթս բարկութեան կազմէ ի կորուստ, և ոչ անօթս ողորմութեան ի փառս, այլ ինքեանք զանձինս կամ ի կորուստ կամ ի փառս: Եւ զի չիք ակնառութիւն առ ի յԱստուծոյ, ասէ. մինէ Հրէից միայն Աստուած իցէ՝ և հեթանոսաց ոչ. այո՝ և հեթանոսաց. զի նոյն Աստուած է՝ որ արդարացուցանէ զթլփատութիւնն հաւատովք, և զանթլփատութիւնն նովին հաւատովք: Եւ դարձեալ՝ Թէ զորս կոչեաց ոչ միայն ի Հրէից, այլ և ի հեթանոսաց: Եւ այլուր՝ Թէ մի է Տէր, և մի հաւատ, և մի մկրտութիւն, և մի Աստուած ի վերայ ամենեցուն և ընդ ամենեսեան, և ամենայնիւ:

Դարձեալ՝ յառաջագոյն ապառնացեալ գերութիւն ժողովրդեանն, ուխտէր՝ Թէ

ես խօսեցայ, արդ արարիչ և ոչ դարձուցիչ: Եւ ոչ Թէ իւր այն կամք էին, այլ նոցա ամպարշտութիւնն ած զնա յայն՝ որ ոչն կամէր: Եւ եԹէ ի նմին հեստուԹեան յետ ապառնալեացն՝ նոցա չէր ադուացեալ, ոչ մատնէր զնոսա ի ձեռն Թշնամեացն: Լաւ համարէր զիւր բանն շրջել, քան զնոսա ի ձեռս այլազգեաց մատնել. որպէս ի նինուէացւոցն ապաշխարուԹիւնն հայեցեալ, ոչ կործաննեաց զքաղաքն:

Դարձեալ և զԵրեմիա յառաջագոյն նըկատեալ՝ ասէ, մինչ չև նկարեալ էիր յորովայնի, ծաննեայ զքեզ: Ծաննեայ զքեզ, ասէ. զի ցուցցէ՝ եԹէ յառաջագոյն գիտէր Թէ որպիսի ոք լիներելոց է. և զրոշմեաց զնա ընդ սուրբս այնու՝ զոր ասէ, Թէ մինչ չև ելեալ էիր յարգանդէ, սրբեցի զքեզ, և մարգարէ ազգաց ետու զքեզ:

Նոյնպէս և զՍամուէլ և զՅովաննէս և զՊօղոս. որպէս և ասէ իսկ՝ Թէ ընտրեաց զիս յորովայնէ մօր իմոյ աւետարանել զՈրդին իւր ինև. և զամենայն իսկ սուրբս, որպէս ասէ Առաքեալ՝ Թէ

զորս յառաջագոյնն ճանաչէր, յառաջագոյն սահմանեաց կերպարանակից լինել պատկերի Որդւոյն իւրոյ: Եւ դարձեալ՝ Թէ ընտրեաց զմեզ յառաջ քան զլինելն աշխարհի:

Եւ զի բարեաց կամեցող է Աստուած, ուսուցանէ Տէր մեր յասելն՝ Թէ այս են կամք Հօր իմոյ, որ յերկինս է, զի ամենայն որ տեսցէ զՈրդի և հաւատասցէ ի նա, ընկալցի զկեանսն յաւիտենից: Եւ դարձեալ՝ Թէ իմ կերակուր այն է, զի արարից զկամս Հօր իմոյ. և այս են կամք հօր իմոյ, զի զամենայն զոր ետ ցիս Հայր՝ ոչ կորուսից ի նմանէ, այլ յարուցից զնա յպւուրն յետնում:

Արդ կամի՝ զի ամենեքեան որ հաւատան յՈրդի, մի կորիցեն. այլ զի յարիցեն յաւուրն յարուԹեան: Եւ գործն յարուԹեան յետ ազգաց բազմաց լինելոց է: Բայց Աստուած զբարւոք կամն և ունէր ի բնէ, և ունի. և ոչ են եկամուտ ի նա կամքն, այլ բնակաւորք ըստ անճառ բարերարուԹեանն: Եւ որպէս յառաջագոյն ասացաք, իւր կամքն միշտ բարեա-

խորժք, և կամի՝ զի և իւր բանաւոր արարածքն ցանկացօղք բարեաց և գործօնեայ արդարութեան լինիցին:

Բայց քանզի գիտէ՝ Թէ կէսք զան ըստ կամաց նորա, և կէսք ոչ զան, վասն այնորիկ զկիսոցն առաքինութիւն՝ վասն զայլս ի բարւոք նախանձ յորդորելոյ՝ անդստին յորովայնէ քարոզէ. նոյնպէս և զայլոցն զանպիտանութիւն. իբր ոչ Թէ ինքն զոմն յորովայնէ անպիտան ստեղծանիցէ, և զոմն պիտանի: Եւ Թէ այնպէս ինչ էր, զի՞ պիտոյ էր զպիտանին գովել և զանպիտանն պարսաւել, Թէ ինքն արարիչ է պիտանութեանն և անպիտանութեան. նա և ոչ մեղադիր պարտ էր լինել անպիտանութեանն, Թէ իւր զնա այնպէս ստեղծեալ էր յորովայնէ:

Եւ արդ յայտ է՝ եԹէ ասելն Աստուծոյ, Թէ զՅակոբ սիրեցի և զԵսաւ ատեցի, կանխաւ գիտել է՝ Թէ սա սիրելի լինելոց է յիւրոց բարուց, և նա ատելի: Եւ զի յիւրոց բարուց եղև ատելի Եսաւ, ասէ Առաքեալ. մի՛ ոք պոռնիկ կամ պիղծ իբրև Եսաւ. և մի՛ ոք արմատ դառնու-

Թեան ի վեր երևեալ զայլս նեղիցէ: Եւ յայտ արար՝ Թէ յիւրոց կամաց եղև այնպիսի Եսաւ, և ոչ յԱստուծոյ ստեղծուածոց. որպէս և այլուր ասէ՝ Թէ արար Աստուած զմարդն ուղիղ, և նոքա խորհեցան խորհուրդ չարութեան: Եւ մարգարէն ասէ. ես տնկեցի զքեզ որթ վայելուչ, և զինքդ դարձար ինձ ի դառնութիւն որթըդ խոպանացեալ:

ԺԸ. Ուստի յայտ է՝ Թէ Աստուած զգործուածն ամենեցուն գեղեցիկ գործէ. և ի բարութիւն և ի չարութիւն դառնալոյ զանձնիշխանութիւնն արար կամակար, զի յոր կողմն և կամիցի՝ կարող իցէ դառնալ. և ըստ գործոցն և զհատուցումն նոյնպիսի առնուցու. և մի իբրև զանատուն վարիցի, որոց ոչ գործք ինչ բարիք կան, և ոչ հատուցման ակնկալութիւն, այնու զի անատուն է, և չգիտէ ընտրել զչար ի բարւոյ խորհրդիւ, բայց ի բնական բարուցն. որովք յիշատակօք միայն վարի յօգտակարն, և խորշի ի վնասակարէն:

Յորս են և ազգմունք ինչ բնականք՝

որովք հանդերձելոց իրիք իրաց ազդ լինիցի նոցա. որպէս ձիոյն՝ ի սմբակէն վարելոյ. և եզինն՝ ձմերանի ընդ ալուց կողմն նստելոյ, և մօտ ի գարունն ընդ դրաց կողմնն դառնալոյ. և ծիծառան՝ յառաջ քան զաշունն ի ջերին տեղիս ի ձմերոց երթալոյ. և խորդոյն՝ իմանալ յառաջագոյն զձմերունս կարևորս, և վաղ ի մարմանդ տեղիս փութալոյ. և ճայիւ՝ վաղագոյն տարմատարմ շրջելոյ. և աղաւնեաց՝ համագունդ երամ երամ խաղալոյ. և ագռաւուց՝ ի ծմակաց վաղագոյն ի ջերին տեղիս գնալոյ. և անգեղջ՝ ի հեռաստանէ զգիշոյ ականելոյ դիտաւորութեան:

Եւ այլոցն ևս ամենայն անասնոց և Ծոչնոց. որպէս և մրջեան՝ յամարանոյն պատրաստելոյ զկերակուր, և ընդ երկու զհատն կտրելոյ՝ զի մի բուսանիցի. և ի ջեր ժամանակս հանելոյ զկտիկն յորջէ անտի և ցամաքեցուցանելոյ. և մեղուաց՝ զդուրս մեղուանոցացն յառաջ քան զցուրտն ականամոմով խնելոյ. և արջոյ՝ յառաջագոյն քան զձմեռն ի բայոց մտանելոյ. և էրէոյ՝ կանուխ ի լե-

բանց ի դաշտ դիմելոյ. և եղջերուաց՝ զըտակաւ զժամանակ խառնիցն իմանալոյ. և իշավայրաց քինացելոյ՝ զարու յաւանակս ի մատաղութեան կտրելոյ: Եւ այս ամենայն ազդեցութիւնք բնականք են յանասունսն, և ոչ խորհրդականք, որ յարարչէն նոցա տնկեալ են ի նոսա՝ առ ի յօժարելոյ յօգտակարն և խորշելոյ ի վնասակարացն:

ԺԹ. Եւ ոչ միայն յանասունսն են բըննական ազդեցութիւնք, այլ և ի մարդկան, որ խօսունք և իմաստունք են: Որպէս յորժամ ակն խաղայցէ, բնական ազդեցութեամբ վասն զնորոգ ոք տեսանելոյ լինի՝ ասեն՝ նշանակ, որք այնմ ատէպ միտ դնեն: Յորժամ յերանս կամ յայլ անդամս միս խաղայցէ, նշանակ հեծանելոյ ուրուք է՝ ասեն, կամ հանդերձս ազնիւս ագանելոյ, կամ սիրելւոյն պատահելոյ, կամ գան ըմպելոյ: Նոյնպէս և յորժամ ոտն կծիցէ կամ ձեռն, մին՝ ասեն՝ ճանապարհի գնալոյ նշանակ է կամ անձրևի, և միւսն՝ առնլոյ ինչ յումեքէ կամ տալոյ: Նոյնպէս և փնչելն,

և լեզուին կծել, և ունկանն հարկանել, և ըմբանին կծել, ոչ եթէ յայսոյ իմեքէ լինի, այլ ի բնական ազդեցութենէ անտի՝ զոր տնկեալ է արարչին յանդաման: Զի յորժամ ի խորհրդական զգուշութենէն զեղծիցի, բնական ազդեցութեամբն պատսպարեսցի:

Եւ յօրանջելն և ձգտել, որպէս կարծեցին ոմանք, ոչ ի դիւէ լինի՝ այլ ի մեղկութենէ և ի ծուլութենէ մարմնոյն: Ուստի զատէպ յօրանջելն և ձգտելն՝ հմուտ բժիշկք ի ժխերելոյ մաղաոց ասեն, զոր և փորձն իսկ յայտ առնէ. զի յորժամ ստէպ ոք յօրանջիցէ, սարսափիւն գայ զոսկերօքն և քստմունք գնան ընդ անդաման:

Եւ ոչ փնչելն ի հրեշտակէ, այլ կամ ի ցրտոյ՝ կամ վասն այլ իրիք բնական ազդեցութեան: Նա և յոգոցն հանել՝ երբեմն յիշատակաւ լինի, և երբեմն առանց յիշելոյ զոք: Եւ զի բնական ազդեցութիւնք են և ոչ ի դիւաց, յայտ անտի է՝ զի և յանասնոց բնութիւնս գտանին նոյնք: Եւ յոգոցն հանել՝ յորժամ ոչ զոք կամ զինչ

ինչ բարի կամ զկարիս յիշելոյ լինիցի՝ բնական ազդեցութիւն է, առ ամփոփելոյ զոմն ընդ երկիւղիւ արարչին, և ճանաչելոյ զիւրոյ բնութեանն տկարութիւն: Եւ յորժամ յիշատակաւ լինիցի, կամ առ սիրոյ սիրելւոյ լինի, կամ առ անարժանս ինչ և զվնասս աշխարելոյ: Որպէս յորժամ ի լրջեաց ծուլայցէ, գիշերական երազովքն ամփոփի ընդ երկիւղիւ:

Ի. Եւ երազոցն այլ և այլ պատճառք են: Է ինչ՝ զոր ցերեկ ընդ բերան ածիցէ մարդն, ի նոյն և ի դադարել մարմնոյն և ի բունն զբաղնուն միտքն. և է ինչ՝ զոր բնաւ չիցէ ածեալ զմտաւ, և տեսանէ յերազի: Եւ այնր երկու պատճառք են:

Կամ հաստատուն ինչ տեսանել իբր ընդ հայելի օրինակաւ՝ յԱստուծոյ շնորհացն ազդեցութենէ, վասն ի լաւութիւնս զմարդն յորդորելոյ, և ոչ յայտ յանդիման ճշմարտութեամբ. որպէս Յովսեփայ և Դանիէլի մեծամեծ իրաց տեսիլք յայտնեցան:

Եւ մի իմն ի հակառակորդէն. քանզի նա անմարմին է, որպէս շունչ մարդոյն

անմարմին. և ածեալ կերպարանս կերպարանս առաջի նկարէ, մերթ զկանաց՝ վասն ի ցանկութիւն գրգռելոյ, և մերթ զահագին գազանաց և զսողնոց՝ վասն զարհուրեցուցանելոյ. որպէս և Ցոբն ասէ՝ Թէ և երազովք զարհուրեցուցանես զիս: Եւ բազում անգամ ի կանաց կերպս եղեալ, զարս խաբէ յերազի. և է երբէք՝ յարանց կերպս դարձեալ, զկանայս յանցուցանէ: Իբր ոչ եթէ արուական և իգական անդամք կայցեն նորա, այլ խտղըտեալ զաման ցանկութեանն՝ տայ հեղուլ ի բաց զարուժիւնն: Եւ ոչ, յորժամ ի մարդ մտեալ իցէ, և յարուական կամ յիգական բարբառս պատճառիցի, պարտ է հաւատալ՝ Թէ արուժիւն կամ իգուժիւն գոյէ նորա: Եւ ոչ, յորժամ ցուցանէ՝ Թէ ի գանէ կամ ի սրոյ երկնչիցի, հաւատալի է. զի նմա գան՝ Աստուծոյ սաստն է, և սրբոց շնորհք՝ զոր ի Հոգւոյն սրբոյ ունիցին: Կամ ի յարժնութեան կամ ի քաղցրաբուն հանգստեանն ցուցանէ՝ Թէ ի գանէ և ի սրոյ երկնչիցի, զի զմարդիկ յայն ապաստան արարեալ՝ ծուլա-

ցուցանիցէ խնդրելոյ յԱստուծոյ զօգնականութիւնս. զոր և Տէրն իսկ յայտ արար ասելովն, եթէ այս ազգ ոչ ելանէ՝ եթէ ոչ պահովք և աղօթիւք:

Եւ ոչ ամենայն Թալանալ և ցնորել մարդկան ի դիւէ է, այլ է՝ որ ի մաղձոյ է, և է՝ որ ի մաղասէ, և է՝ որ յուղղոյն անանալոյ, և է՝ որ ի ստամոքսէ խանգարելոյ, և է՝ որ յորովայնէ խստանալոյ, մինչև ցփրփրել անգամ և զաչս յեղեղուլ:

ԻՍ. Այլ յուղղոյն անանալոյ՝ և ի մտաց իսկ անկանի մարդ, և խօսի ընդ որմս, և կազի ընդ հողմս: Ուստի բժիշկք յամառին՝ Թէ բնաւ չիք դև որ ի մարդ մտանիցէ. այլ ցաւք են այն, և մեք դարմանովք կարեմք բժշկել:

Այլ մեք զայն ոչ ասեմք. քանզի ճըշմարիտ է մեզ բան աւետարանին՝ եթէ բազում դևք, իբրև տեսանէին զՅիսուս, աղաղակէին և ելանէին ի մարդկանէ. և նա սաստէր ի նոսա և ոչ տայր խօսել նոցա. հանդերձ այլովք նոյնպիսեօք: Եւ լուանոտքն որք ասին, ոչ եթէ լուանոյ

ՙվնասեալ՚ այնպիսիք կոչին, այլ դաս ինչ է դիւաց՚ որ ըստ լուսնոյ յայտնին:

Եւ փորձել այնչափ իշխէ սատանայ, որչափ հրաման առնու: Եւ յայտ ի Յոբայ փորձանացն է. զի եթէ ոչ նախ առ հրաման յԱստուծոյ, ոչ ժառեցաւ փորձել զնա. և ի խոզից երամակէն, յոր ոչ իշխեցին մտանել դևքն՝ եթէ ոչ առին հրաման ի Տեառնէ:

ԻԲ. Այլ են ոմանք՝ որ վիճին, եթէ բնաւ իսկ սատանայ ոչ փորձէ զմարդ:

Այլ յանդիմանին յԱռաքելոյ, որ ասէ՝ Թէ բազում անգամ կամեցայ գալ առ ձեզ, և խափանեաց զիս սատանայ: Եւ դարձեալ ասէ՝ Թէ ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ և ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս և ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ: Եւ յաւետարանին ասէ՝ Թէ սատանայի իսկ արկեալ էր ի սրտի Յուդայի մատնել զնա: Եւ դարձեալ՝ Թէ ընդ պատառոյն եմուտ սատանայ: Դարձեալ. խնդրեաց սատանայ խարբալել զձեզ իբրև զցորեան·

Եւ փորձելոյն այնչափ տայ նմա իշխանութիւն, որչափ մարդն հանդուրժել կարէ. որպէս երանելի Առաքեալ ասէ՝ Ոչ հաւատարիմ է Աստուած, որ ոչ արկցէ զձեզ ի փորձութիւն՝ առաւել քան զկար ձեր, այլ արասցէ ընդ փորձութեանն և զելս՝ զի համբերել կարասջիք: Եւ Տէր մեր ուսուցանէ յաղօթսն ասել մեզ՝ Ոչ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէ: Զի ցուցցէ Ոչ և աղօթիւք կարեմք ապրել ի փորձանաց չարին:

ԻԳ. ԵԹէ այդպիսի իցէ, ասեն, փորձելոյ վասն հաստատեալ է զնա Աստուծոյ:

Այլ մեք ի վերագոյնսն իսկ բազում վկայութեամբ զրոց սրբոց ցուցաք, Ոչ ոչ ի չարչարել և ի փորձել արարեալ է զնա Աստուծոյ. այլ և նովաւ՝ որ ի չարութիւնն կործանեցաւ, գործ բարւոք գործէ Աստուած. Ոչպէտ և չարն ոչ այնպիսի մտօք մատչի փորձել. այլ համարի յաղթել, և զտանի պարտաւորեալ: Թուլացուցանէ ըստ չարեաց կամաց նորա փորձել զառաքինիս. և մտեալ ի փորձութիւնն նորա՝ իբրև ի բովս, զը-

տին և ընտրին իբրև զոսկի սուրբ ելեալ ի հալոցաց:

Արդ եթէ չարեաց արբանեակ արարեալ էր զնա Աստուծոյ, ոչ յաւուրն Աբրահամ՝ հոգի սուտ լինէր ի բերան մարգարէից ատոց. այլ նմա պարտ էր հարկանել զայն սպասաւորութիւնն: Եւ ընդէր հոգի՝ որ ոչ դաւանէ զՏէր Յիսուս՝ չիցէ* յԱստուծոյ, որ զԱստուծոյ սպան ոչ խափանէ. և ընդէր մարդասպան կոչիցի, որ կեցուցիչն է փորձութեամբք. և ընդէր որք ոչն հաւատան ի Տէր Յիսուս՝ որդիք չարին կոչէին, եթէ նա Աստուծոյ բանիւ իցէ փորձիչ: Եւ եթէ չարին կամարարի Աստուծոյ որդիք իցեն Հրեայք, ընդէր և ոչ Աբրահամ այնպէս անուանիցի. և ընդէր սուտ և մարդասպան անուանիցի չարն, եթէ ի ճշմարտութեան կայցէ և ոչ ի ստութեան:

Եւ գրեացուք՝ Թէ Հրեայն յանձնէ խօսիցի սուտ, նա ընդէր կոչիցի հայր Հրէին՝ որ ոչ սուտ առնէ զբնութիւնն, այլ որ-

---

* Իցէ:

պէս եղևն՝ այնպէս խօսի : Եւ ընդէր ասիցէ Առաքեալ՝ Թէ հնազանդելոց է վրկչին մերում հանդերձ մահուամբ և սատանայ, և անկանելոց է յիշխանութենէ և ի պետութենէ իւրմէ՝ որ աստուածանալն անձամբ կամեցաւ : Եւ ընդէր կապիցի և ի տանջանս մատնիցի . ոչ ապաքէն՝ զի իւրովք կամօք զԱստուծոյ սպասն խնդրէր առնուլ ի մարդկանէ, և ի կռապաշտութիւնս ձգէ, և դիւթութեամբք և հմայիւք և քաւդէութեամբ վրիպեցուցանէ զմարդիկ յԱստուծոյ ճըշմարտութենէն: .

Եւ Թշնամի կոչի՝ վասն զորումն ի մէջ ցորենոյ սերմանելոյ . ուստի յայտ է՝ եթէ ոչ բնութեամբ է Թշնամի, այլ կամօք : Եւ եթէ բնութեամբ էր նմա չճանաչելն զԱստուած Հայր, զՈրդին զիարդ կարէր ճանաչել և աղաղակել՝ Թէ դու ես Որդին Աստուծոյ: Եւ դարձեալ զառաքելոցն նորա ասել՝ Թէ արքն այնոքիկ ծառայք են Աստուծոյ բարձրելոյ :

Եւ յայսմ ամենայնէ յայտ է՝ եթէ ոչ է բնութեամբ չար, այլ կամօք . և ոչ չար

և չարչաբիչ արարեալ է զնա Աստուծոյ, այլ չարսկամ բարուքն նորա առաքինեցուցանէ զարդարս. և նորա ոչ ինչ զոյ յայնմ շնորհ:

ԻԴ. Եւ ոչ լուսաւորքն, որպէս յառաջագոյն ասացաք, կենդանիք ինչ են և պատճառք բարեաց կամ չարեաց, այլ միայն յոր կարգեցանն՝ զայն սպասաւորութիւն հարկանեն: Որպէս ասաց Մովսէս, Թէ արար Աստուած զլուսաւորսն մեծամեծս, և եդ զնոսա ի հաստատութեան երկնից՝ լուսատու լինել յերկիր: Ուստի յայտ է՝ Թէ վասն լուսատու լինելոյ միայն արարան, և ի նշանս և ի ժամանակս և յաւուրս, յամիսս և ի տարիս: Ոչ իբրև զկենդանիս, այլ իբրև զլուսաւորս լուսատու լինել՝ որք ի ներքոյ երկնից, և զնշանս աստուածգիտութեան ցուցանել, և զանձրևաց և զօդոյ փոփոխմանց: Որպէս և Տէր մեր ասէ. յորժամ տեսանիցէք ընդ առաւօտս զերկինս կարմրացեալ, ասէք՝ Թէ անձրև լինելոց է, և լինի. և յորժամ հարաւ շնչիցէ, ասէք՝ Թէ խորշակ մեծ լինելոց է, և լինի:

Ֆանզի ընդ ծագել արեգական, օդոյն զխոնաւութիւն ջուրց առեալ՝ զճառագայթիւք արևու արկանէ, և քանզի չև ևս է Ծանձրացեալ և ամպացեալ օդն, սակաւիկ մի արգելլոյն զնշոյլսն՝ կարմըրացուցանէ միայն զարևն, և ոչ մթացուցանէ. ուստի երևի՝ Թէ անձրևի նշանակ է:

Նոյնպէս և լուսին ի խոնաւութենէ օդոց նեղեալ, ջանայ յիւրմէ զխոնաւութիւնն ի բաց պարզել. ուստի մերձեալ խոնաւութեանն, և ի նա չհասեալ՝ բակ առեալ ծրանայ շուրջ զնովաւ. որով յայտ առնի անձրևաց նշանակ: Եւ այն ոչ միայն ի լուսնի, այլ և ի ճրագի՝ որ նուազագոյն լոյս է՝ ևս երեի:

Իե. Եւ ոչ երկինք շրջին, զորմէ ասեն արտաքին իմաստունքն՝ Թէ մերթ ի շրջելն ծածկեն զլուսաւորսն, և մերթ յայտնեն: Եւ եթէ զամենայն օր շրջիցին՝ զիմրդ զարևն աւուր աւուր ի նոյն արևելս ածիցեն, և զլուսին յամսեան հազիւ ի նոյն տեղիս: Եւ այլ ևս աստեղք են, որ ի տարւոջ հազիւ մի անգամ հասանեն ի

նոյն տեղի. և են, որպէս ասենն, յերկոտասան ամ ի նոյն տեղի. և է, որ ի տարւոջ և ի կիսում. և է, որ յերեսուն ամի:

Այլ ի փորձ իրացն այլազգ յայտ առնի: Զի աստեղքն, որք զցայգ յերկինս են, և զցերեկ անդէն գտանին. Թէ երկինք շրջէին, ոչ ի նոյն շաւիղս՝ յորս ցայգն տեսանէաք՝ ի նոյնս և զցերեկն գտանէին. այլ քանզի ընդ նոյն շաւիղս գնան, որպէս և տեսանեմք իսկ և զլուսին և զաստեղս ի նոյն շաւիղս, յայտ է՝ Թէ նոքա գնան, և երկինք կան անշարժ ետեղակալք: Որպէս և աստուածատուր իսկ գիրք հաստատութիւն կոչեն զերկինս: Եւ որ ինչ հաստատութիւն է, չէ շարժուն:

Իսկ այլոց ի գրոց պատճառս առեալ, ասեն. ի նոյն իսկ գիրս գրեալ է՝ Թէ եղ զնոսա ի հաստատութեան երկնից. ուստի յայտ է՝ Թէ բևեռեալք են, և ոչ գնայունք:

Այլ Թէ այնպէս իցէ, յորժամ զԱդամայ ասէ՝ Թէ եղ զնա ի դրախտին փափկութեան, բևեռեալ համարեցին, և մի

գնայուն: Իսկ եթէ զԱդամայ շրջելն՝ եդ կոչեն աստուածատուր գիրք, յայտ է՝ Թէ և զլուսաւորացն զգնացս՝ եղ անուանեն գիրք:

Մանաւանդ զի և ի բազում իսկ տեղիս գտանեմք զգնացս լուսաւորացն. որպէս յորժամ ասիցէ Յեսու որդի Նաւեայ, Թէ կայցէ արեգակն հանդէպ ձորոյն Գաբաւոնի, և լուսին դէպ դաշտին Էլոնայ: Եւ չասաց՝ Թէ երկինք դադարեսցեն ի գնացից իւրեանց, այլ լուսաւորք. ուստի յայտ է՝ եթէ երկինք ետեղակալ են, և լուսաւորքն գնայունք: Եւ առ Եզեկիաս ասէ. դարձցի շողն անդրէն յետս զտասն աշտիճանօք աքազեան ապարանիցն: Որով երևի՝ Թէ արեգակն դարձաւ յետս, և ոչ երկինք: Եւ յԵկկղեսիաստէան գրեալ է՝ Թէ ծագէ արեգակն, և մտանէ արեգակն, և ի տեղի իւր ձգի. ինքն ծագեալ անդ գնայ առ հարաւով. և պատի առ հիւսիսեաւ. զի ցուցցէ՝ Թէ ցերեկ առ հարաւակողմամբ գնայ ընդ արևմուտս, և զցայդ առ հիւսիսեաւ դառնայ յարևելս՝ ընդ լերանց ստորոտովք, որպէս ասեն իմաս-

տունք. և ոչ ընդ ծով, որպէս ասեն, և ոչ ի ներքոյ երկրի. զի ի ներքոյ երկրի ոչինչ է, որպէս ասէ Յոբ՝ Թէ ձգեաց զերկիրս ի վերայ ոչընչի. և յԱտրիան ասի՝ Թէ կացոյց զերկիր ի վերայ ոչընչի: Եւ ընչի իմիք յոչընչի չէ հնար գնալ, և ոչ ցամաքական բնութեան ընդ խոնաւութիւն ջուրց:

Այլ, ասեն, մեք իսկ աչօք տեսանեմք, զի ի ծովէ ելանէ:

Եւ զայն ոչ գիտեն՝ Թէ վասն զի ցամաք ուրեք ի ծովէ անտի ոչ երևի, յայն սակս Յուի՝ Թէ ի ծովէ անտի ելանիցէ: Որպէս յորժամ Թէ յարևմուտս ոք մօտ իցէ, և լեառն ինչ յարևելից կողմանէ կայցէ, Յուի նմա՝ Թէ ի լեռնէ անտի ելանիցէ արեգակն: Եւ յամենայն տեղիս, որ ընդ անբաւ ինչ ոք ուրեք կայցէ, Յուի նմա՝ Թէ անտի ուստեք ի մօտէ ելանիցէ արեգակն: Նոյնպէս և նոցա՝ որ մօտ առ ծովուն կայցեն, քանզի ոչ կար է ակնբաց ի ցամաք գործել, Յուի՝ Թէ ի ծովէ ելանիցէ. որ ոչ ի ծովէ անտի ելանէ, այլ ի ծագաց երկնից: Որպէս՝ և Դաւիթ ի

Հոգւոյն սրբոյ ուսեալ, ասէ՝ Թէ ի ծագաց երկնից են ելք նորա, և հանգիստք նորա մինչև ի ծագս նորուն:

Այլ և ցօղ սաստիկ, ասեն, արկանէ յաշխարհին. ուստի յայտ է՝ Թէ ի ծովէն ելանէ:

Եւ զայն ոչ գիտեն՝ Թէ զօդոյն, որ ցայգ առնու ի խոնաւութենէ ջուրց, հասեալ ջերմութեան ճառագայթից արեգականն՝ շրթեցուցանէ ի բաց զտամկութիւնըն. ուստի ոչ միայն անդ, այլ յամենայն երկրի ընդ արևածայրս ցօղ աննկանի:

Եւ եթէ երկինք շրջիցին, գիարդ զԿռոնայն և զայլոց աստեղաց պատճառաւորաց ասիցեն յաստեղատունան մտանել, որոց մտանելն ապաքէն գնալով լինիցի, և ոչ առանց գնացից:

ԻԶ. Այլ և երկիր, ասեն, ի միջոցի կայ: Եւ տան օրինակ ինչ այսպիսի՝ Թէզիփամփուշտ, յորժամ փչելկամիցիս, ընկեա ի ներքս հատ մի կորեկան. և փուքն՝ որ ի փամփշտին արգելու՝ առնու զկորեկահատն և ի միջոցի ունի, ոչ ի վերտայ զալ և ոչ ի խոնարհ ձգել: Նոյնպէս, ասեն,

և օդ՝ որ է ի մէջ գնդին երկնից՝ փակեալ կայ, և ունի զաշխարհս ի հաստատածի. ոչ ի վեր տայ վերանալ և ոչ ի խոնարհ հակել:

Նախ յիւրեանց իսկ բանից յանդիմանին. զի ասեն՝ Թէ որ ինչ Թեթև է, ի վերին կողմն գնայ. և որ ինչ ծանր է, ի խոնարհ: Որպէս և փորձ իսկ իրացն յայտ առնէ. զի ծուխ և շոգի երկրի՝ և բոց հրոյ, քանզի Թեթևք են, ի վեր կողմըն գնան. և զքար և զերկաթ և զփայտ և զայլ ևս ինչ նոյնպիսիս, որչափ և ի վերոք ձգիցէ՝ ի խոնարհ միտեալ իջանեն: Եւ Թէ զաւակաւ ինչ զծանրութիւնս ոչ կարէ օդն ի վեր առնուլ ունել, որչափ ևս առաւել զայնչափ ծանրութիւն երկրի չէ հնար օդոյ ի վեր ունել, այլ Աստուծոյ բանին՝ որ կացոյց զնա ի վերայ ոչընչի:

Եւ որ երկմտիցէ ոք՝ Թէ զիարդ կարիցէ այսչափ ծանրութիւն ի վերայ ոչընչի կալ, հայեցեալ յերկնից հաստատութիւն՝ որ ոչ ի վերայ իրիք կայ, և հաւանեսցի՝ Թէ որ զերկինս բանիւ հաստատեաց ի վերայ ոչընչի, նոյն և զերկիր կացոյց ի վե-

բայ ոչընչի, և նորին հրամանն ունի և զերկոսին անշարժս և ետեղակալս: Ըստ այնմ՝ Թէ ինքն ասաց, և եղեն. հրամայեաց, և հաստատեցան: Եւ կացոյց զնոսա յաւիտեանս յաւիտենից. հրաման եդ, և ոչ անցցէ:

Եւ այլ ևս ասեն: Թէ իվերայ ոչընչի կայ երկիր, գիրդ ասէ Դաւիթ՝ Թէ հաստատեաց զերկիր իվերայ ջուրց. և զարձեալ սլ՝ Թէ ինքն իվերայ ծովու արկ զհիմունս նորա, և իվերայ գետոց պատրաստեաց զնա:

Որ զայդ իԴաւթայ լուաւ, զմիտն իՅորայ և յՅեսայեայ լուիցէ. զի նոքա իվերայ ոչընչի ասեն, և սա իվերայ ջուրց: Արդ ոչ ևՔէ հակառակ ինչ միմեանց են գիրք, այլ զոր միոյն Թողեալ է, միւսն առնու նովին Հոգւով: Որպէս տեսանեմք իսկ՝ զի որ ինչ Մովսէսի չէ ասացեալ, այլ մարգարէք լցին նովին Հոգւով: Մովսէս ասէ. Եստեղծ Աստուած զմարդն հող յերկրէ, և փչեաց ի նա շունչ կենդանի: Եւ փչելն դեռ ևս իմիջի կայ կարծելոյ՝ Թէ իցէ արարած շունչն Թէ չիցէ:

Արդ զայ Զաքարիա մարգարէ նովին Հոգւով վարեալ, և ցուցանէ զարարած շնչոյն: Ասէ. որ հաստատէ զհոգի մարդոյն ինմա. և Եսայիաս ասէ՝ Թէ զամենայն շունչ ես արարի:

Նոյնպէս և ոչ զիրոյ, և ոչ զչրոյ, և ոչ զօդոյ, և ոչ զփայլատականց, և ոչ զորոտմանէ, և ոչ զխաւարէ ճառէ ինչ Մովսէս. զորս յերկուց ի մեծ անօթոցն, յերկնից և յերկրէ, պարտ է իմանալ՝ Թէ ամենայն ինչ որ ի միջի նոցա գտանի՝ հարկ է զի ընդ նովին արարեալ իցէ. ըստ այնմ՝ Թէ արար Աստուած զերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսա:

Իէ. Այլ զի մի պատուօք ինքնակացութեան տգիտաց կարծիցին, որոց արարածն ի Մովսէսէ ոչ ճառեցաւ, առ ի հաստատելոյ զպատճառն պատճառախնդրացն՝ այլովք մարգարէիւք նոյն Հոգի ընծայեցուցանէ զարարածն նոցա:

Նախ Դաւիթ իսկ, որով զամենայն իմանալի զօրութիւնան և զերեւելի արարածս իշխարատրութիւն արարչին կոչէ յորժամ ասիցէ. օրհնեցէք զնա երկինք և

երկիր և հրեշտակք և զօրութիւնք և հուր և հոգմք և մրրիկք՝ որ առնեն զբան նորա : Եւ որ ի պաշտօն մտանեն, և զարբանեկութիւնն հարկանեն, յայտ է՝ թէ արարածք են :

Եւ ձիւն և սառն և կարկուտ և մրրիկք՝ թէ յայլմէ արարչէ էին, ոչ կոչէր զնոսա Հոգին ի փառատրութիւն, այլ իբրև զօտարոտիս մեկուսի դնէր : Բայց նա տեսանեմք աւանիկ՝ զի ոչ զնոսա միայն, այլ և զվիշապս և զգազանս և զխաւար և զփայլատակունս, զոր ի չարէ դնեն, ի նոյն փառատրութիւն նորին Հոգւոյ կոչեցեալ և Դաւթաւ և երեք մանկամբքն ի հնոցի անդ ընծայեցուցանէ. զի ցուցցէ՝ թէ յումմէ արարեալ են, ի նորին և ի փառատրութիւն յիրաւի կոչին :

Եւ ոչ որպէս Մարկիոնն դանդաչէ՝ թէ արդարոյն արարածոց պարտ է օտարին բարւոյ պաշտօն մատուցանել վասն բարերարութեան. զոյոյ անհամութիւնն ի դէպ ժամանակի յանդիմանեացուք :

ԻԸ. Եւ արդ թէպէտ յայնմանէ իսկ յայտ է՝ թէ որ ինչ ի փառատրութիւն

արարչին կոչի, նորա արարած է, այլ և զմիոյ միոյ իսկ ինոցանէ զարարած մարթի իգրոց ցուցանել :

Նախ զհրեշտակացն, որպէս ասէ Դաւիթ՝ Թէ արար զհրեշտակս իւր հոգիս, և զպաշտօնեայս իւր բոց հրոյ : Ապա և զհրոյ, և զայլոցն ևս մի ըստ միոջէ. զփայլատակունս իւր յանձրևս արար : Եւ փայլատակունք ոչ ևթէ այլ ուստեք են, ևթէ ոչ իբնութենէ հրոյ : Եւ զխաւարէ ասէ. եղիր զխաւար, և եղև գիշեր : Եւ զորոտանէ և զհողմոյ միանգամայն ասէ Ամովա՝ Թէ որ հաստատէ զորոտումն և հաստատէ զհողմ, Տէր ամենակալ անուն է նորա : Եւ այսպէս զոր միոյ մարգարէի Թողեալ իցէ՝ միւսոյն լնու Հոգին սուրբ :

Արդ ևթէ Դաւիթ ասէ՝ ևթէ իվերայ ջուրց է երկիր, և Յոբաւ և Եսայեաւ՝ Թէ ի վերայ ոչընչի կայ, ոչ ինչ է ընդ այն զարմանալ, և ոչ զմարգարէութիւնն հակառակ միմեանց համարել. քանզի և այն ճշմարիտ է, և այս հաստատուն : Եւ առ օրինակ ի մարմնոյ. որոյ իվերայ մորթ և միս է՝ և ի միջի երակք և խողովակք արեան, և

ի ներքոյ դարձեալ նոյնպէս մոթ և միս. և է մարմին և իվերոյ քան զերակս արեանն և ի ներքոյ քան զերական: Ըստ նմին օրինակի և երկիր իվերայ ջրոց է: Ֆանզի ի միջի իւրում ունի զջուրս, և ի ներքոյ քան զջուրս. և իվերայ ոչընչի հաստատեալ կայ ետեղակալ, և ունի յինքեան զամփոփ զլոյծ բնութիւն ջրոցն: Եւ երկոցունց մարգարէութեանցն մի և նոյն դիտաւորութիւն է, և չիք ինչ այլաբանութիւն ի միջի: Ֆանզի ոչ այլ և այլ Հոգի ետուն զմարգարէութիւնն, այլ նոյն և մի Հոգի, որ արժանի արար զմին պատմիչ առնել այլոց իրաց, և զայլսն մնացեալոցն ինամանէ:

Արդ զի երկինք ոչ շրջին, զի ամենայն ինչ որ չէր և եղև՝ արարած է և ոչ ինքնակաց, առաջին բնութեանցն օրինակք և գրոց վկայութիւնք բաւական էին հաւանեցուցանել զմտավարժս: Բայց քանզի՝ ի նմին յամառութեան կան՝ զամենայն ինչ կենդանի և շնչաւոր համարելով, ոչ հեղգասցուք ըստ մերում կարի և այնմ ևս առնել պատասխանի:

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ.

—

ԵՂԾ ԿՐՕՆԻՑ ՅՈՒՆԱՑ ԻՄԱՍՏՆՈՑՆ

Ա. ԼՈՒՍԻՆ, ասեն, քան զարեգակն երեսուն օր անցեալ ընդ ամենայն աստեղատունսն, այսինքն ընդ ամենայն երկինս, հասանէ ի նոյն տեղի. և արեգակն ի տարւոջ: Եւ երկինք զմի տիւ և գիշեր առածեալ զինքեամբք, շրջին ի նոյն տեղի: Եւ եւթն աստղ միայն է գնայուն, և այլն ամենայն բեւեռեալ են յերկինս. և որ գնայուն աստեղքն են՝ արեգակն և լուսին, և այլ ևս հինգ աստեղք, ոչ եթէ յարեւելից յարեւմուտս գնան՝ այլ յարեւմտից յարեւելս:

Եւ տան օրինակ ինչ՝ որ ոչ նման է. եթէ յորժամ անիւ շրջանակիցի, և մրջիւն մի ի խեցին գնայցէ յարեւմտից կողմանէ ընդ արեւելս, վասն անուին արագագոյն ընդ արեւմտից կողմն շրջելոյ քան զի՝ թէ մրջիւնն յարեւելից յարեւմուտս կոյս ընթանայցէ.

որ ոչ յարեւելից յարեւմուտս կողմն գնայցէ՝ այլ յարեւմտից յարեւելս, և անիւն ստէպ շրջելովն այնպէս երեւեցուցանէ:

Եւ երկինք, ասեն, որչափ ի վեր են՝ դոյնչափ ի խոնարհ են, և դոյնչափ յամենայն կողմանց շուրջ գերկրաւ, և գերկիրս շուրջ ջուր պատէ, և զջուրն և զերկիր՝ օդ, և զօդն և զջուր և զերկիր՝ հուր: Եւ լուսնի չիք իւր լոյս առանձինն, այլ յարեգակնէ գայ ի նա լոյսն. և յայտ անտի է, ասեն, զի յորմէ կուսէ արեգակն իցէ, յայնմ Թերէ սկսանի ի նմա լոյս ծնանել, և ըստ հեռաւորութեան արեգականն՝ սակաւ գայ ի նա լոյսն. և ըստ տակաւ տակաւ մերձենալոյն՝ յաճախէ ի նա լոյսն. և յորժամ մօտ հասանէ ի նա՝ լնու. և յորժամանցանէ զարեգակամբ՝ սկսանի տակաւ նուազել. և որչափ ի բացն հեռանայ՝ այնչափ պակասէ ի նմանէ լոյսն, մինչև ամենեւին նուազէ. և յորժամ միւս անգամ հանդիպի, ծագէ ի նմա սակաւիկ ինչ ի լուսոյն վասն հեռաւորութեան. և որչափ մերձենայ,

այնչափ առ սակաւ սակաւ աճէ ի նա
լոյն:

Եւ լուսին, ասեն, ի ներքոյ է քան զա-
րեգակն և քան զամենայն աստեղս. և
քանզի ի ներքոյ է, յորժամ կշիռ դէպ
արեգական պատահիցէ՝ յայնժամ խաւա-
րի արեգակն: Եւ պատճառս փոփոխմանց
տարերաց չորից բնութեանցն զաստեղս՝
իբրև զկենդանիս ինչ՝ դնեն: Զայս.
ամենայն ասեն հայթայթանօք, զի զեր-
կինս և զլուսաւորսն կենդանիս և աս-
տուածս կարծեցուսցեն:

Ե. Արդարև, որպէս երանելին Առա-
քեալ ասէ, Թէ իմաստութեամբն Աստու-
ծոյ ոչ ծանեաւ աշխարհ զԱստուած: Եւ
զինչ զարմանք են ընդ նոցա, Թէ զերկինս
վասն անչափ մեծութեանն, և զլուսաւորս
վասն առաւել պայծառութեանն աստ-
ուածս կարծէին, յորժամ ի փայտս և ի
քարինս և ի գազանս և ի ճճիս անգամ աս-
տուածս խնդրէին, զորս իւրեանց իսկ
բնութեան բարքն կշտամբեն. այնու զի
արարչախնդիր և աստուածախոյզ են, և
անկեալք ի վիշտ ճշմարտէն՝ ի բազում

ոտնատեցին, և ոչ ուրեք եղև կայ և հաստատութիւն : Զի խնդրելն զԱստուած, զովութեան արժանի էր . և ոչ զմին ևեթ՝ այլ զբազումս մուծանել, անհնարին ամպարշտութիւն է :

Գ. Եւ առաւել Յունաց իմաստունքն դարովին. զի հասեալ ի վերայ իմաստութեանն, չծանեան իմաստութեամբն զարարիչն : Քանզի դնեն և նոքա մի ինչ ինքնակաց պատճառ ամենայնի, որոյ ոչ յումեքէ եղեալ, այլ ինքն անձամբ ինքնակաց առաջին գտեալ. և երկրորդ աստուած և արարիչ դնեն զմիտս . և երրորդ զշունչ, զոր ոգի ամենայնի կոչեն :

Զերկուան ի միջէ պատճառէ անտի դնելով, ցուցին՝ Թէ մերձեցան ի դրունս ճշմարտի գիտութեանն. և ի նոցանէ այլ անթիւ իմանալիս երեւելիս աստուածս ծննդեամբ ստեղծանելով, անձամբ անձին փակեցին զդրունս հաւատոյ գիտութեանն՝ զի իբրև զարեգակն և զճառագայթս դնեն զԱստուած և զաստուածան իմանալիս երեւելիս. և բնաւ իսկ զաշխարհ մշտնջենաւորակից նմա. և

յամենայնի, զնորա ոգին իբրև շունչ ամենայնի, և յերկինս, և ի լուսաւորսն և ի հուր և յօդսն և ի ջուրս և յերկիր, մինչև ցքարինս և ցխայտս և ցծառս և ցարմատս խոտոյ անգամ: Եւ այնու կենդանութեամբ, ասեն, ամենայն արարածք զնորա բնութենէն կախեալ կան, որպէս ճառագայթք արեգական զանուէն կախեալ կան: Եւ ինքն մի է և բազում, և բազում է և մի. որպէս արեգակն մի է և բազում, զի մի անիւ է և բազում ճառագայթք: Եւ զայս ոչ ամենեքին այսպէս ասեն, այլ են բազում կրօնք փիլիսոփայից:

Դ. Պիւթագորեանքն և պերիպատիկեանքն՝ միութիւն և խնամակալութիւն ասեն, և չզոհել աստուածոց: Եղ կրօնս Պիւթագորասի՝ զընչաւորաց միս չճաշակել և իգինւոյ ժուժկալել: Եւ ի լուանոյ և ի վեր զամենայն ինչ որ է՝ անմահ համարել, և որ ինչ նորա իններքոյ՝ մահկանացու: Եւ փոփոխումն շնչոց ի մարմնոց ի մարմին մինչ ցանասունս և ցճճիս անգամ: Եւ լուծեան կրօնս սահմանեաց. և յե-

տոյ զիւր անձնն աստուած անուանեաց .

Իսկ պղատոնեանքն , աստուած և հիւղ և իդոս , որ առաջին՝ նիւթ է , և երկրորդն՝ առանձինն ինչ ուրուք : Եւ զաշխարհս՝ արարած և եղծանելի : Եւ զշունչ՝ անապար և անմահ և աստուածական , որոյ երեք մասունք են՝ բանական , ցասնական և ցանկական : Եւ զկանայս հասարակաց ամենեցուն համարել , և մի ումեք մի կին առանձինն ունել , այլ զոր արքն կամիցին և կանայքն ախորժիցեն , այնց ընդ այնս լինել : Եւ փոփոխմունս շնչոց յայլ և այլ մարմինս մինչև ցճճիս և ցորդունս անգամ : Միանգամայն և աստուածս բազումս ի միջէ ելեալ սահմանէ :

Իսկ ստոյիկեանքն մարմին զամենայն ինչ եղին , և զերեւելի աշխարհս աստուած համարին : Իսկ ոմանք ի հրոյ էութենէ համարին ունել ամա զբնութիւն : Եւ աստուած զմիտս սահմանեցին , իբրև Թէ շունչ ամենայնի իցէ տարերն երկնից և երկրի . մարմին նմա՝ զամենայն ինչ որ է՝ եղին , և աչս՝ զլուսաւորսն : Եւ զմարմինս ամենեցուն կորստական , և զշուն-

չըս փոփոխելիս ի մարմնոց ի մարմինս:

Իսկ եպիկուրեանքն ասեն. անհատ և անբաժին մարմինք էին զառաջինն, և անտի եկաց ամենայն ինչ: Եւ վախճան յաւուրեան զցանկութիւն տահմանեցին, Եւ թէ ոչ Աստուած գոյ, և ոչ խնամակալութիւն՝ որ վարիցէ զամենայն: Այս են կրօնք փիլիսոփայից:

Ե. Բայց հեթանոսութեան սկիզբն ի Սերուբայ ժամանակաց անտի եղև. զի որ լաւ ոք եկեալ յաշխարհ մեռանէր, վանս յիշատակի քաջութեանն զպատկերն երանգօք ի նկարու հանէին. և անտի ուսեալ տխմարաց՝ տակաւ ի պաշտօն առնոյին: Եւ կռոց և դրօշելոց հանգամանք՝ առ Թարայիւ հարբ Աբրահամու, և անտի իւրաքանչիւր ոք իւրով արուեստիւ ըզնոյն դրօշէր. դարբինն՝ դարբնութեամբ, հիւանն հիւանութեամբ, արծաթագործն և պղնձագործ և քարակուռ և բրուտ՝ իւրաքանչիւր արուեստիւ: Եւ անտի կարգեալ հասանէր յեգիպտացիս և ի բաբելոնացիս և ի փռիւգացիս և ի փիւնիկեցիս գործ դրօշագործութեան և խորհուրդք նորին.

և ապա ի Հելլէնս, որ են Յոյնք, առ կեկրոպեաւ. և ևս յետոյ առաւել ատիք առ Կռոնաւն և Բէաւ և Դիաւ և Ապողոնիւ և առ այլովք բազմօք, զորս մի ըստ միոջէ աստուածս անուանէին:

Եւ Հելլէնք կոչին Յոյնք՝ յառնէ միոջէ, որում Հեղինոս անուն էր յելլադացւոց աշխարհին: Բայց այլք ասեն՝ եթէ ի ձիթենւոյն, որ յԱթէնս բուսաւ իւրովի. վասն զի ձիթենի յունարէն ելէա * կոչի:

Բայց Յոյնք ի Յաւանայ, որ էր մի յառաջնորդաց աշտարակագործութեանն, վասնորոյ Մերովպս ամենեքին կոչին յաղագս բարբառոյն բաժանելոյ. քանզի բաժանումն յունարէն մերիսմոս ** կոչի:

Եւ առաջին կրօնք՝ խուժականք և ակիւթականք և հեթանոսականք կոչէին, մինչև եկն Աբրահամու աստուածպաշտութիւնն և աղաւաղեաց զայն:

Եւ յուդայութիւն ի Յուդայէ, որ է հրէութիւն, ի չորրորդէ որդւոյն Յակոբայ. յորմէ Թագաւորութիւն էր, և կալաւ ա-

---

* ἐλαία. ** μερισμὸς.

նունն զամենայն ազգն յուղայական:

Եւ ի վախճանի հրէութեան, քրիստոնէութեան անուն ի Քրիստոսէ. որ նախ յԱնտիոք անուանեցաւ աշակերտելոցն:

Զ. Արդ ի խնդրելն փիլիսոփայից զԱստուած ի բնական օրինաց՝ որ ի միտան տնկեալ է, որպէս յառաջագոյնն ասացաք, գովութեան արժանի է. բայց ի բազում աստուածան անկանել, և զաշխարհս նմա մշտնջենաւորակից դնել, անհնարին ամպարշտութիւն է: Եւ ի դէպ ելանէ նոցա առաքելական՝ բանն՝ եթէ ծանեան զԱստուած, և ոչ իբրև զԱստուած փառաւորեցին:

Զի Աստուծոյ փառաւորութիւնն այն էր, թէ յարարածոցն մեկնեալ էր զպատիւ արարչին. որով և արարածքն իսկ իւրաքանչիւր շարժմամբք և փոփոխմամբք զարարչէն քարոզեն: Արդ եթէ աստեղքն ըստ նոցա բանդագուշանացն աստուածք իցեն, և երկինք և արեգակն և լուսին՝ որք անխոսքն և անմռունչ են, զինչ աւելի իցէ պատճառն քան զպատճառաւորսն: Եւ մանաւանդ յորժամ զնորին իսկ զմիտ-

սըն և զշունչ, Թէ մարթիցի Աստուծոյ շունչ ասել, ամենայն արարածոց շնչաւորաց և անշնչից բնութեամբ ինորա էութենէն դնեն. որ անհնարին ամպարշտութեան է, զԱստուծոյ զիւրոյ էութեանն կենդանութիւն՝ հոգևորաց և շնչաւորաց և անշնչից առ հասարակ համարել. և ոչ առնել արարած կենդանութիւն ի հրեշտակս և ի դևս և ի մարդկան, որ բանաւորքն և մտաւորքն են. և յայլ շնչաւորան՝ բնական կենդանութիւն ի չորից հիւթոց խառնեալ և յօդեալ, որք յորժամ քակտին, և կենդանութիւնն ինոյն չորեքին հիւթան լուծանի:

Են ոգիք հրեշտակաց և դիւաց, և շունչք մարդկան: Արդ և յիւրեանց բանիցն իսկ ոչ ամաչիցեն, որք զշունչն անարար անմահ և աստուածեղէն յԱստուծոյ բնութենէ անտի ասեն. և դարձեալ տանջանս և պատիժս շնչոցն յանցուցելոց դնեն, որ յետնոյ հայհոյութեանն է՝ եթէ էութիւնն Աստուծոյ ի մասունս բաժանիցի և ի բազում շունչս կոտորիցի. և դարձեալ զիւրոյ զկէս բնութիւնն միւս կէսն տան-

ջիցէ, և կէան ի փառս և կէան յանարգանս, և մի Թերին յանոյշս և միւս Թերին ի դժոխս :

Եւ դարձեալ ասեն. Թէ ոչ կենդանուԹիւն ինչ է յամենայնի, զիարդ իցէ զի ամենայն ինչ շարժի. և սերմանք և տունկըք արկեալք յերկիր բուսանին. և յէգս մարդկան և յանասնոց անկեալ սերմանք գան ի ծնունդս և յաճումն. զորմէ և ոչ մեք յուրաստ ինչ եմք, վասն փորձոյ իրացն զարդեանցն յայտ առնելոյ :

Այլ խնդիր այն է՝ Թէ այն կենդանուԹիւն ոչ Աստուծոյ էուԹեանն կենդանուԹիւն է, այլ արարած կենդանուԹիւն այլազգ ի բանաւորն և ի մտաւորս, և այլազգ յանասունն և յամենայն շնչաւորն և այլազգ ի բնականն՝ որպէս ի սերմանս և որ յէգս մարդկան և անասնոց անկանին : Յորոց մարդկանն առաւել և պատուականագոյն է. յորում և բնական կենդանուԹիւն է ըստ մարմնոյն, և բանաւորն սքանչելի ըստ շնչոյն : Զի մարմինն և նոցա ի չորից հիւԹոցն կայ. և ոգին ոչ ի չորից հիւԹոց յօդելոց, այլ ի

պարզական և իսուղական բնութենէ. և այլոց անասնոց ոչ նոյնպիսի, այլ ի բնական և յազդեցական բնութենէ. և սերմանց ոչ նոյնպիսի, այլ ի բնական և յանշնչական խաղացից :

Է. Նոյնպէս և ոչ ի լուսաւորան շնչաւորութիւն ինչ բանաւոր է, այլ բնական և խաղացական շարժմունք. ուստի ոմանք և հրեշտակս վարիչս եդին նոցա : Այլ մեք զգրոց սրբոց զհետ երթիցուք, որ զանձրևացն ասէ՝ Թէ չև ևս էր Աստուծոյ տեղացեալ յերկիր : Եւ ոչ որպէս ոմանք դանդաչեցին՝ Թէ սատանայ ունէր իշխանութիւն շարժելոյ և փոփոխելոյ զօդս, ըստ այնմ զոր Առաքեալն ասէ՝ Թէ ըստ իշխանի իշխանութեան օդոյս այսորիկ. Իշխան օդոյս այսորիկ կոչէ զնա՝ վասն յերկնից անկանելոյ և յօդս Թափառելոյ. և յայտ անտի է զոր ասէ՝ Թէ օդոյ խաւարիս այսորիկ. զի ցուցցէ՝ Թէ ի լուսոյ ի խաւար կործանեալ է, և չէ օդոյն փոփոխիչ՝ մերթ յանձրևս, մերթ ի ձիւն, մերթ ի կարկուտ :

Այլ զի Աստուծոյ գործ է այն, և ոչ

սատանայի, ասացէ Դաւիթ Հոգւովն սրբով ի մօտոյ՝ Թէ հանէ զամպս ի ծագաց երկրէ, և զփայլատակունս յանձրևս արար. և հանէ զհողմս յըշտեմարանաց իւրոց. և դարձեալ՝ Թէ դնէ զձիւն իբրև զասր, և զեղեամն իբրև զփոշի ցանեաց. և արկանէ զսառն իբրև զպատառս. հանդերձ այլովքն: Եւ մի մարգարէն ասէ՝ Թէ կոչէ զջուր ծովու, և հեղու զնոսա ի վերայ երեսաց երկրի: Եւ Յոբ ասէ՝ Թէ ո՞ ծնաւ զշիթս անձրևի, և յորովայնէ ո՞վ ելանեն սառամանիք, և զեղեամն յերկինս ո՞ ծնաւ, որ իջանէ իբրև զջուր ծորեալ, զի ասիցէ՝ Թէ իմ գործ է, և ոչ այլ ուրուք:

Նոյնպէս և զլուսաւորան շարժել՝ նորա բանին գործ է, և ոչ այլոյ ուրուք. և ոչ միայն եւԹն աստեղքն գնայունք են և այլքն առանց գնացից, այլ ամենեքեան գնայունք՝ կէսքն յամրագնացք, և կէսքն արագագնացք. և ոչ յերկինս բևեռեալ են, որպէս յառաջագոյնն ասացաւ, Թէ իբրև զշրջընչանն շրջիցին, և զնոսա մերԹ յայտնեսցեն և մերԹ ծածկեսցեն: Եւ որ առա-

ւել ծաղուն արժանի է, Թէ արեգակն յարևմտից յարևելս գնայցէ. և ընդէր ոչ զարևմուտս արևելս կոչիցեն, և զարեւելս արևմուտս:

Այլ բնաւ իսկ, ասեն, ոչ ուրեք մտանէ արեգակն. և զի ոչ մտանէ՝ անտի յայտ է, զի ցայգ ի նորա լուսոյն ի լուանի ամանն լոյս ծագէ. քանզի ինքն երթեալ հեռացեալ յայլ կողմանս երկնից գըտանի:

Եւ Թէ ասիցես՝ Թէ նա յերկինս իցէ ցայգ, խաւարս որ լինի՝ ուստի իցէ:

Ասեն, յերկրիս ստուերէ լինիցի:

Այդ որ ի վեր յերկինս խաւարն լինի, ուստի իցէ. ոչ ապաքէն յայտ է՝ Թէ ուրեք ծածկի ցայգ. որպէս և ի մտիցն է տեսանել: Զի իբրև ի վերուստ ի խոնարհ իջանէ, և դարձեալ յելանելն՝ իբրև ի ներքուստ ի վեր ելեալ համբառնայ:

Եւ ի զուր է ճամարտակելն նոցա, զի այնչափ մեծութիւն երկնից տան քան երկրի. զի աստուածատուր գիրք զերկինս Թզաւ ասեն և զերկիր քլաւ. և ոչ աւելի զՄիզն քան զբիլն գտանեմք:

Ը. Դարձեալ և լուանի՝ Թէ ոչ իւր առանձինն իցէ լոյս, նախ նոցա բանն ստի՝ զոր ասեն, եԹէ ի յաճախելն յամենայն իմիք՝ աճէ հիւԹն որ ինմանէ, և ի լնուլն՝ լնու, և ի պակասելն՝ պակասէ: Որպէս փորձ իրացն իսկ յուղիղս ամենայն մսեղեաց ցուցանէ, և ի ծառս եւ ի տունկս խոնաւուԹիւնն: Եւ յԵրպտոն տեղիք ինչ են ծովուց, որոց ջուրն ըստ աճել լուանին՝ աճէ, և ըստ լնուլն՝ լնու, և ըստ պակասելն՝ պակասէ: Եւ նոքա այսչափ ժամերտեալք՝ մինչև զամենայն մարդկան աչս կամին ունել, որ ցայգ ի մտանել արեգականն՝ առաւել պայծառացեալ զլոյս լուանի տեսանեն:

Զիմարդ արուագոյն քան զարեգակն զչանձնաւոր լուսինն ասիցեն. զի նա, ասեն, յերեսուն աւուր կատարէ զընԹացսըն, և արեգակն ի տարւոջ: Զորս փորձ իրացն յանդիմանէ, և աստուածատուր գիրքն, որ ասէ՝ ԹԷ արար երկուս լուսաւորս մեծամեծս, և եդ զնոսա ի հաստատուԹեան երկնից: Եւ զի զառաւել պայծառուԹիւն արեգականն ցուցանիցէ, ասէ. արար զլուսաւորն մեծ՝ յիշխանուԹիւն

տուընչեան, և զլուսաւորն փոքր՝ յիշխանութիւն գիշերոյ, և զաստեղս : Ուստի յայտ է՝ Թէ յիւրաքանչիւր իշխանութիւնս կարգեալ են, և ոչ մի ի միոչէ առնու զլոյսն :

Եւ զաճելն և նուազել լուսնի՝ իբրև ընդ պատենիւք իմն մտանել. և ելանել ասեն իմաստունք : Եւ նշանս անտի տան. զի է երբէք՝ յորժամ յաճմունան իցէ և լնլոյն, շուրջ զանօթովն ծանրանայ, որպէս Թէ ընդ սակաւ ինչ փեռեկումն ծերպից՝ նշոյլք երևեսցին :

Եւ դարձեալ խաւարելոյ արեգականն ԵԹԷ լուսնին պատահել պատճառ իցէ, յորժամ լուսինն մԹանայցէ՝ նմա զինչ պատահիցէ : ԵԹԷ զաստղ պատճառ պատահելոյն դնիցեն, ահա ոչ տեսանեմք այնչափ մեծ աստղ յերկինս՝ որ պատահելոյ լուսնին՝ ծածկել կարիցէ զլուսինն. և ոչ աստղ ցածագոյն զոյ քան զլուսինն՝ Թէ ի ներքոյ նորա հանդիպեալ զնա խաւարեցուսցէ :

Նա Թէ և զարեգական լոյսն արգելուլ կարէր լուսինն, ապաքէն զիւր լոյսն

ծագէր յերկիր, զի գոնեայ իբրև զլուսնակայ երևէր տիւն և ոչ ամենևին խաւարչուտ :

Թ. Այլ ճշմարիտ է բան գրոյն, որ ասէ՝ Թէ դարձուցից զարեգակն ի խաւար, և զլուսինն յարիւն : Զի ցուցցէ՝ Թէ Տէր է լուսաւորացն, և լուսաւորելոյ և խաւարեցուցանելոյ, առ ի կշտամբութիւն արևապաշտացն և լուսնապաշտացն :

Եւ չէ հնար լուսնի յերկիր իջանել. որպէս կախարդաց տեսեալ ի ժամանակի հրամանաւ Աստուծոյ զլուսնոյն արիւնագոյն լինելոյ զկերպարանն՝ դիւի նմանել լուսնի բարբանջեն, Թէ զլուսին իջուցանիցեն. որում չէն մարթ լինել, Թէ որ քան զբազում աշխարհս մեծ է՝ Թէ ի կալ մի փոքրիկ ամփոփիցի, եւ կՀիցի անստինն :

Եւ քանի՛ անՀիւ բիւրուց կախարդաց են յերկրի. եՀէ իւրաքանչիւր ոք ինոցանէ իջուցանել կարէր զնա, ոչ երբէք տային նմա ելանել յերկինս : Այլ զի ոչ երբէք իջանէ՝ յայտ անտի է, զի ոչ զիջանելն ոք տեսանէ զնորա, և ոչ զամբառնալն : Եւ եՀէ կացեալ միտ դնիցես, ան-

դէն անդէն մեռցեալ անօթն լուսաւորի առ սակաւ սակաւ, մինչև ամենեւին յարդարի: Զի թէ իջանելոյ ինչ հնար գոյր, թէպէտ և զիջանելն ոք ոչ տեսանէր, սակայն զհամբառնալն ամենեքեան տեսանէին: Այլ լուսաւորացն այնչափ ինչ է, որպէս աստուածատուր գիրք ասեն՝ թէ եղիցին ի նշանս և ի ժամանակս և յաւուրս և ի տարիս:

Արդ եթէ լինին ինչ ի նշանս կամ ջերմոց կամ ցրտոց աստեղք, ոչ եթէ իբրև զկենդանիս ինչ լինիցին, այլ իբրև Աստուծոյ կարգեալ յայն՝ զի մի դատարկք ինչ յարարածոցն Աստուծոյ իցեն: Եւ Յունաց իմաստունքն այնու դարովելի են, զի Ծողեալ զպատճառն՝ պատճառաւորացն պաշտօն մատուցանիցեն. որպէս երանելի Առաքեալն ասէ՝ թէ սպասաւորեցան և պաշտեցին զարարածս և ոչ զարարիչն:

Ժ. Եւ դարձեալ, ոչ որպէս ասենն է՝ եթէ զերկիրս ջուր պատիցէ, այլ ընդ երկիր և ի վերայ երկրի են ջուրք. և ըստ երկիր անդր ոչինչ է, և ոչ եթէ ջուրք: Եւ վկայեացեն նոցա Հերակլի արձանքն՝

յորս գրեալ է, ասեն, Թէ յայսմ վայրէ ոք անդր մի՛ ժտեսցի երթալ :

Եւ օդ ընդ ջուրս և ընդ երկիր խառն է. և զի ընդ ջուրս օդ խառն է՝ ի զեռնոցն յայտ է, որ ի ջրեան զօդոյն կենդանութիւնն ծծեն: Եւ զի ընդ երկիր նոյն օդ խառն է, յորժամ անձրև լեալ իցէ և արև տայցէ, ի գոլորշոյն՝ որ ի սրտէ երկրին ի վեր ցոլանայ՝ յայտ յանդիման երեւի : Եւ զի ընդ օդս հուր խառն է, ի փայլատականցն՝ որ ի շփելոյ ընդ միմեանս հողմոյն և ամպոց արձակին՝ յայտ յանդիման ցուցանին : Եւ դարձեալ, Թէ յապակի սպիտակ՝ ջուր արկեալ յարևու ունիցիս, լուսաւորութեան արևուն մտեալ ընդ սպիտակութիւն ապակւոյն, և ընդ յատակութիւն ջրոյն օդով Թափանցանց անցեալ՝ հուր ծնուցանէ : Եւ զի ընդ ջուրս հուր խառն է, ի քարանցն հանելոյ ի ջրոյ՝ զոր ընդ միմեանս շփիցեն և հանիցեն հուր՝ յայտ յանդիման ցուցանի. և զիշերի, յորժամ առ ծովեզեր կայցես և զջուրն ժքթիցես, նշոյլք լուսոյն հատանին :

Եւ զեռունքն որ ի ջրեան ի ներքս են,

իշորից հիւծոցն յօդեալ են, յերկրէ և ի ջրոյ, յօդոյ եւ ի հրոյ, որպէս և ամենայն մարմնաւորք՝ որ ի ցամաքին են: Զի այնպէս կազմեաց Աստուած զաշխարհ. նախ զչորս հիւծան մեկնեալս արարեալ, ապա նոքօք յօդեաց զամենայն. և միոյ արարչի գործ է ամենայն ինչ, և նոյն վարէ և տածէ զբնաւ:

Ժ.Ա. Եւ ոչ, որպէս գլուխ փիլիսոփայիցն նոցա Պիւթագորաս և պերիպատիկեանքն ասեն, մի միութիւն՝ պատճառ ամենայնի, և իննամակալութիւն. զոր ոչ իննամանէ ասեն, այլ Թէ զօրութիւն ինչ ինչ իցէ առանձինն իննամակալութիւնն: Եւ որպէս պատճառ ամենայնի ի միջէ միութենէ տայ՝ և զիննամակալութիւնն ի իննամանէ դնէր, գեղեցիկ և գովութեան արժանի կարգէր. բայց զի յայլմէ զպատճառան կարգէ, և յայլմէ զիննամակալութիւնն, պարսաւանաց արժանի է և ոչ յարգանաց:

Եւ դարձեալ՝ զի աստուածոցն ոչ հրամայեաց գոհել, այնու գովելի է. բայց զի ոչ յայտնի քարոզեաց՝ Թէ մի Աստուած է

և ոչ բազումք, այնու կարի դարովելի :

Գովելի և առաւել գովելի, զի վասն կարեաց և ցանկութեանց յաղթելոյ՝ ի կեբակրոցն կրօնաւորեցաւ. բայց զի փոփոխմունս ոգւոց ի մարմնոց ի մարմինս ետ, այնու յոյժ եպերելի է : Որպէս թէ արդարոցն մեռելոց ոգիք յայլ ի սուրբ մարմինս փոխիցին, կամ ի մարդկան կամ յանասնոց սրբոց. և այն նոցա իբրև ընդ հատուցման բարեաց գործոց լինիցի : Եւ մեղաւորացն ոգիք յաղտեղի մարմինս փոխիցին, կամ ի մարդկան կամ ի գազանաց և ի ճճեաց և ի սողնոց. և այն նոցա ընդ հատուցման չարեաց գործոց լինիցի :

Եւ զմիան չուտել՝ եթէ վասն զկարիս մարմնոցն խափանելոյ հրամայէր, բարւոք և յիրաւի առնէր. ապա եթէ իբր ի պղծոյ իմեքէ արարածոց հրամայէր հրաժարել, վատթարագոյն : Այլ յայտ են պատճառքն՝ ուստի զմիան շնչաւորացն հրամայէր չուտել. որպէս թէ հոգի աստուածեղէն իցէ ի մեղիսն, և վասն այնորիկ չիցէ պարտ ուտել զմիս կենդանեացն : Վասն որոյ և մոգքն նախ յազեն,

և ապա սպանանեն զանասունն, զի յանզգայ ելանիցեն շունչքն ի մարմնոց անտի : Եւ զայն ոչ գիտեն՝ Թէ երկուս մահ սպանանեն. մի յազելովն, և միւս ևս փողոտելովն :

Նոյնպէս և Պիւթագորաս ոչ հրամայէ անասունս զոհել դից, որպէս Թէ չիցէ պարտ զոհել աստուածս աստուածոց : Քանզի հոգի Աստուածեղէն ասէ յանասունն. և յայտ անտի է՝ զի երկիր պագանել հրամայէ, եւ զոհել ոչ :

Կարի անարժան գործ էր, և ի լուանոյ ի վեր զամենայն ինչ անմահ համարել : Յայտ առնէ, Թէ զայն ամենայն աստուածս կարծէր. և անտի և ի խոնարհ մահկանացուս դնելով, ցուցանէր՝ Թէ հուրդ և օդ և երկիր կենդանիք ինչ իցեն, և մեռանիցին. որոց ոչ զկենդանութիւնն զգացեալ, և ոչ զմահու ազդումն առնուն, որ շնչաւորացն է և ոչ անշնչոց :

Եւ հինգամեայ լռութիւնն, զոր նոր յաշակերտութիւն եկելոցն սահմանեաց, Թէպէտ և մեծի ժուժկալութեան օրինակ էր, քանզի և ոչ հարցանել ինչ իշխէին՝ բայց

միայն լսել, այլ ոչ ինչ կարի յօգուտ էր: Զի Թէ յառաջ քան զհինգամեայ զժամանակն վճարէր ոք ի նոցանէ, Թէպէտ և կարի քաջ ի լսելոյն իմաստնանայր, ոչ ինքն վայելէր յիմաստութեանն՝ քանզի ոչ իշխէր խօսել, և ոչ այլ ոք՝ վասն զի ոչ լսէր զիմաստութիւնն:

Եւ որ անհնարին յիմարութեանն է, յետոյ՝ ասեն՝ զիւր անձնն աստուած անուանեաց. որ յառաւել հպարտութենէն դիպեցաւ նմա. զի ոչ եկն ըստ բանի իմաստնոյն՝ Թէ որչափ ի մեծութիւն հասանիցես, ի խոնարհութեան կալջիր զանձն:

ԺԲ. Իսկ Պղատոն, որ աստուածն և հիւղ և իդոս դնէ էութեամբ, ցուցանէ Թէ կերպարանաց արարիչ է Աստուած, և ոչ բնութեանց: Ուստի և աղանդացն առեալ նովին դանդաչեն՝ Թէ որպէս Աստուածն էութեամբ էր, նոյնպէս և հիւղն և իդոսն՝ որ է առանձինն ինչ ուրուք. որպէս Աստուծոյ արուեստգիտութիւնն՝ առանձինն էր և հիւղեայն նիւթն, և ի կերպարանս ևեթ կարաց ածել զհիւղն՝ որ խառն ի խառն վարէր, և ոչ ի չգոյէ ի գոյ ած

զամենայն՝ որպէս և կարող ամենայնի. որ տկարութիւն արկանէ զԱստուծով, Թէ կարօտ եղև յայլմէ նիւթ մուրանալ. որով ոչ ինչ առաւել քան զարուեստագէտսն գտանի, Թէ իբրև զնոսա կարօտ նիւթոյ իցէ: Եւ զաշխարհ արարած և եղծանելի ասէ. և երբեմն նա և այլքն մշտնջենաւորակից Աստուծոյ:

ԵԹէ արարած և եղծանելի է, զիարդ մշտնջենակից Աստուծոյ իցէ. և ԵԹէ մշտնջենակից իցէ, որպէս ասեն՝ Թէ որպէս ստուեր իրիք ոչ երբէք հեռանայ յիմեքէն՝ նոյնպէս և ոչ աշխարհս երբէք զատ յԱստուծոյ, Թէ այնպէս իցէ, զուր է ասելն՝ Թէ արարած եղծանելի է աշխարհս. բայց Թէ զայն ևս իշխիցեն ամպարշտել՝ Թէ որ պատճառ ստուերին է, իմիջոյ բառնալոց իցէ: Ապա Թէ այն ոչ լինիցի, քանզի և չլինի իսկ, և ոչ ստուեր իմիջոյ բառնալոց է. և տարապարտ են դանդաչանքն:

Եւ շունչքն, Թէ վասն զիյԱստուծոյ էուԹենէն իցեն՝ անարարք և անմահք իցեն, երեք մասունքն ի նոսա ուստի իցեն՝

բանականն և ցանական և ցանկական : Զի Թէպէտ և մինն է յԱստուած, զի նա է աղբիւր ամենայն բանաւորութեան, այլ ի ցասմանէ և ի ցանկանալոյ ի վեր և ազատ է Աստուած. քանզի առանց կաթեաց և առանց մասանց է աստուածականն :

Եւ եթէ ինքն՝ որպէս ասեն՝ լաւութեանց վասն կոյս վճարեցաւ յաշխարհէ, այլոց զիմարդ հրամայէր զկանայս հասարակաց համարել, և ոչ իւրում կնոջ եւթ սկել :

Եւ զաստուածեղէն շունչն ընդէր և նա իբրև զառաջինան փոփոխելիս ի մարմնոց՝ ի մարմինս համարէր, մինչև ի տղունս անգամ և ի ճճիս : Որոյ հայհոյութիւնն ի բուն իսկ գնայ, ըստ նորա ամպարշտութեանն. որպէս թէ զկեան յիւր յինքեան ունիցի, և զկեան իւր ի տղունան և ի ճճիս տանջիցէ. որ ոչ նորա է, որ անբաժին և անքանակ և անհատ և առանց մասանց է :

Եւ եթէ, որպէս դանդաչեն, բազում աստուածք ի միջէ Աստուծոյն ելեալ իցեն,

ընդէր ոչ բազում աշխարհք իցեն, և ոչ բազում երկինք, և ոչ բազում արեգակունք, և ոչ բազում երկիրք : Այլ Թերևս զաստարկս աստուածս ենան յիւրմէ, և զաստարկք աստուածքն ոմ պիտոյ իցեն :

ԺԹ. Իսկ աստղիկեանքն մարմնապիշք հայեցեալ յերևելի աշխարհս, զամենայն ինչ մարմին կարծեցին, և զերևելի աշխարհս աստուած համարեցան. Որք առանդամիտք գիտեն ի փիլիսոփայից, ոչ ինքեանք զիմանալի ինչ զմտաւ կարացին ածել, և ոչ յայլոց ուսանել կամեցան, եթէ է ինչ զօրութիւն՝ որ զերևելիսս շարժէ, և զշարժիչն պարտ է Աստուած իմանալ և ոչ զշարժունսն :

Իսկ ոմանք ի նոցանէ ի հրոյ էութենէ աւելն զբնութիւն աշխարհիս, վասն զարեգակն առաւել զարմանալի համարելոյ, և զբնութիւն հրոյ աստղագոյն իմանալոյ: Եւ հայեցեալ ի միտս թէ զամենայն է մօքն նկատել մարթեն, վասն այնորիկ զմիտս աստուած համարեցան, իբրև ըզշունչ երկնից և երկրի և ամենայնի որ ի նոսա. և աչս զլուսաւորսն, որք ըստ

անարժան անմտութեանն՝ և ոչ պատուխանի առնելոյ արժանի են :

Եւ զմարմին իբրև զայլան կորստական համարին, և զշունչն փոփոխելի ի մարմնոց ի մարմինս, զոր և ոչ նոքա յայտնի կարեն առնել, և ոչ այլքն աւագագոյնք քան զնոսա : Զի ամենեքեան առասպելս արկանեն. և Եպէտ և կէսքն հասին ճշմարտութեանն, չկացին ի ճշմարտութեանն :

ԾԴ. Իսկ եպիկուրայքն բնաւ ինքնակաց իսկ համարին զաշխարհս : Որպէս Թէ նախ հոդամաղք ընթանային, որպէս յորժամ շողն ընդ երդ մտանիցէ, և հոդամաղք իմն երևին ի շողն, այնպիսի՛ սեռն՝ մարմինք անհատք և անբաժինք էին զաւաջինն, և անտի Ժանդրացեալ յօդեցաւ ինքն աշխարհս : Եւ Թէ ոչ Աստուած և ոչ խնամակալութիւն ինչ է, որ վարիցէ զաշխարհս : Զորս և փիլիսոփայքն ինչ յընչաց բերեն, և ամենևին չհամարին զնոսա աղանդս : Զորոց և Առաքեալ ասէ, Թէ առանց Աստուծոյ շրջէին յաշխարհի : Որոց այնքան կամակորյամառութիւն եղև, մինչև յայնչափ ի բազում ի նախատաց փի-

լիսուիայիցն աստուածոց և ոչ մի աստուած ըմբռնել: Տեսանեա՛ զի զործ ստահակութեան այնչափ բռնացեալ ըմբռնելեացն, մինչև անաստուած հանել յաշխարհէ:

ԺԵ. Առ Սերուքաւ եղև, ասեն, սկիզբն հեթանոսութեան: Ուստի յայտ է՝ թէ ցայն վայր աստուածապաշտք էին, և եկեղեցի Աստուծոյ ի սկզբանէ աշխարհի էր: Զորմէ և Դաւիթ ի Հոգւոյն սրբոյ ուսեալ, մատուցանէր աղօթս՝ թէ յիշեա զեկեղեցի քո զոր ստացար ի սկզբանէ:

Բայց թէպէտ և հեթանոսութիւնն եմուտ յաշխարհ, այլ աստուածպաշտութիւնն ոչ ամենևին պակասեաց: Եւ յայտ անտի է, զի գնացեալ Աբրահամ ի հեթանոսացն եկն աստուածպաշտաց պատահեաց. Մելքիսեդեկայ քահանայի Աստուծոյ բարձրելոյ, և քահանայ ոչ երբէք անուանի՝ եթէ ոչ ժողովուրդ գուցէ նորա. և Աբիմելեքայ՝ որ Աստուծովն ևեթ խօսէր ընդ Աբրահամու, և ոչ դիւօք: Եւ բարեկամքն Յոբայ և Եղիուս Աստուծով միայն ամենակալաւ խօսէին ընդ նմա:

Եւ այնպէս ոչ եթող երբէք Աստուած զաշխարհս առանց վկայութեան. որպէս մարգարէն առ հրէութեամբն ասէր իբրև յերեսաց Աստուծոյ՝ Թէ յամենայն տեղիս արկանեն խունկս և մատուցանեն պատարագս անուան իմում: Զի ցուցցէ՝ Թէ յամենայն դարս աստուածապաշտք գտանէին, որք յանդիմանէին զհեշմակապատսն:

ԺԶ. Այլ, ասեն, ընդէր յամեաց գալուստն Քրիստոսի, և կորեան այնչափ ազգք առանց աստուածպաշտութեան:

Եթէ չէր աստուածաքարոզս աստուածպաշտութեանն յամենայն դարս առաքեալ, Թերևս գոյր մուտ այնպիսի բանից. բայց զի ոչ երբէք դադարեաց ի վկայութիւն տալոյ, անճանց մեղ դիցեն չհաւանողքն, և մի Աստուծոյ:

Զեկն Քրիստոս ի տղայութեան աշխարհի. զի տղայոցն կաճն պիտոյ էր, և ոչ հաստատուն կերակուր. և ոչ յեռանդան երիտասարդութեանն, յորժամ ելեալ զեղոյր մոլորութիւն դիւապաշտութեանն: Այլ նախ կրթեաց քարոզովքն և մարգարէիւք՝ իբրև կաճամբ, և ապա եկն

տալ զկատարեալ վարդապետութիւնն, իբրև հաստատուն կերակուր: Քանզի և ոչ տղայոյ ոք հաստատուն կերակուր տայ, և ոչ մեծամեծ խորհուրդս յայտնէ, և ոչ աւազ բանս խօսի, մինչև ի կատարեալ չափ հասակին հասանիցէ:

Որպէս Առաքելոյ՝ առեալ զինքեամբ զերեսս ամենայն մարդկութեան, ասէ. մինչ տղայն էի, իբրև զտղայ խորհէի. այլ իբրև եղէ այր, զտղայութեանն խափանեցի: Զի ցուցանիցէ՝ Թէ ի հասուն հասակի եկն յաշխարհ ի կատարեալ գիտութիւնն, որպէս յայսմ աշխարհի մարթի հասանել գիտութեան: Այլ ի վայելումըն կատարելոյ գիտութեանն, և զանձն և զայլս անդր հրաւիրեաց ասելովն՝ Թէ այժմ փոքր ի շատէ գիտեմք, այլ յորժամ եկեսցէ կատարումն՝ դէմ յանդիման տեսանեմք:

Ուստի յայտ է՝ Թէ առ ամենայն կարող է Աստուած, և յամենայնի բաւական: Կարող էր ևս վաղ յառաջին յաւիտեանն առնել զաշխարհ. այլ այնպէս կամեցաւ՝ զի ոչ կարի վաղ առնիցէ, և ոչ յոյժ անա-

գան, այլ յորժամ դէպ և պատշաճ իցէ: Զի մի վաղն առնելով՝ լեալքն վնասիցին, կարծեալ Թէ մշտնջենակիցք նորա իցեն. և մի դարձեալ անագանն առնելով՝ կարծիք տկարութեան լինիցին և առաջին և միջին և վերջին խորհրդոցն:

Նա և զմարդն, զոր ժառանգ ամենայնի կամեցաւ առնել, ոչ նախ քան զժառանգութիւնն արար. այլ նախ զերկինս և զերկիր, զջուրս և զհուր և զօդ և զբոյս և զտունկս, զգազանս և զանասունս և զՁուկս: Նախ զտունն, և ապա զտնակալն. նախ զտաճարանն, և ապա զբնակիչն. նախ զծառայն, և ապա զտէրն. զի մի, յորժամ յետոյ լինիցին՝ որոց իշխանն եղև, կարծիս վնասու առնուցու՝ Թէ իւր արարածք իցեն: Այլ յորժամ նախ զնոսա արարեալս տեսանիցէ, ծանուցեալ առնուցու ի միտ՝ Թէ է ինն զօրութիւն, որ արար և ետ զնոսա ընդ ձեռամբ նորա. և զպատիւ փառաւորութեանն մի անձին առնել խորհիցէ, այլ իւրում տիրարարին՝ որ ձրի նմա զայն շնորհեաց:

Նոյնպէս և զգալուստ Որդւոյն իւրոյ

յայնմ ժամանակի պատշաճեաց, յորում գիտէր Թէ յօգուտ լինելոց է: Եւ եթէ բժիշկ ըստ պէսպէս հիւանդութեանց՝ ազգի ազգի դեղս ախտացելոցն մատուցանել, զի որ սկզբան ցաւոյն դէպ իցէ՝ զայն ի սկզբանն մատուցանեն, և որ յընդմիջելն զայն ի միջոցի, և որ ի պառաւել ցաւոյն՝ զայն հուսկ յետոյ, որչափ ևս առաւել ամենահինարն՝ յորմէ ամենայն հանգամանք հնարողութեան բաշխեալ են, ի դէպ ժամանակի առնէ զոր առնէ. ոչ առաջին և երկրորդ և վերջին խորհրդով, այլ միանգամայն ըստ կամելոյն՝ զգործն արդեանցն կատարէ: Եւ ոչ յետոյ ծնանի ի նմա կամելն. այլ իրրև կանխագէտ գիտէ զամենայն, մինչ չև ինչ լեալ իցէ, Թէ որպէս պարտ իցէ առնել, և յոր ժամանակի, և յոր պէտս: Եւ ոչ խառն ի խուռն ինչ առնէ, Թէ առ ապա զղջանայցէ և եղծանիցէ զտեղծուածն իւր: Եւ ոչ իմիք կարօտանայ, Թէ առնելոյ ինչ յումեքէ կամ յումեքէ ակն ունիցի. այլ բառանդակ յինքեան ունի զամենայն կարողութիւն առնելոյ և հաստատելոյ զամե-

նայն, և անխարխար պահելոյ : Եւ չունի զոք ընդ իւր զովողակից՝ իբրև զեղբայր, կամ իբրև զընկեր, կամ իբրև զօտար ոք գործակից. այլ միայն զիւր զօրութիւնն և զիմաստութիւնն, որ իւրոյ էութեանն ծնունդ է և մշտնջենաւորակից. և զիւրոյ զբնութեանն Հոգին, որ ի նմանէ է և միշտ առ նմա անքակ և առանց բաժանելոյ :

ԺԷ. Եւ յայսմ ամենայնէ յայտ է՝ եթէ ոչ հիւղ ինչ, որ է նիւթ, էր ընդերակաց Աստուծոյ, ուստի ասեն Յունաց իմաստունքն զարարածս արարեալ, և ի նմանէ չարեաց յաշխարհ մտեալ, որպէս ասեն աղանդքն՝ որ ի նոցանէ առին պատճառս զհիւղեայն աստուածացուցանել, դնել աստուած հակառակ Աստուծոյ : Եւ ոչ այլ ոք արարիչ էր չարեաց, որպէս մոգքն խաբին՝ Թէ Խարամանն արար զչարիս. այլ մի միայն Աստուած է արարիչ, և նոյն բարեաց և ոչ չարեաց, և մշտընջենաւոր արարիչ : Զի և մինչ չև արարեալ էր զարարածս ի մտի իւրում ունէր յառաջգիտութեամբ զպայման կազմածոյ

արարածոց: Եւ չէր երբէք յորժամ չէր արարիչ, այնու զի ունէր յինքեան զկարողութիւնն ամենեցուն բաւական լինելոյ:

Եւ բազում պատճառք էին Աստուծոյ, որովք եկն զարարածան առնել: Նախ զճշմարտութեանն խելամտութիւն չէր պարտ դատարկ Թողուլ. զի մի իբրև ըզտկար ոք պարտեալ ինչ զտանիցի՝ առ ի չկարելոյ առնել զայնս, զորոց խելամըտութիւնն յինքեան ունէր կանխակալ գիտութեամբ: Երկրորդ անգամ, քանզի բարերար է բնութեամբ, չէին իրաւունք ըզբարերարութիւնն անօգտակար պահել: Եւ այլ ինչ բազում նման սոցին էր զԱստուածով, վասն որոց կազմածոյ աշխարհի արար սկիզբն:

Որպէս ոք եթէ ճարտարութիւն իրաց ինչ գիտիցէ, եթէ զնուագածութեան և եթէ զբժշկութեան, եթէ զհիւսնութեան. և արդեամբք զճարտարութիւնն չցուցանիցէ, ի զուր ունի զհանգամանս ճարտարութեանն՝ ուստի ոչ ինքն վայելեսցէ, և ոչ այլոց զգիտութիւն արուեստին ցուցանիցէ: Նոյնպէս և որ բարերար ոք իցէ,

եթէ բարերարութեանն վայելելիք չիցեն, ումմ շահ իցէ բարերարութիւնն: Զի բարերարութեանն առաքինութիւն այն է՝ յորժամ այլքն ինմանէ վայելեսցեն. եթէ չիցեն որք վայելիցեն ի բարերարութեանն, զինչ շահ իցէ ի բարերարութենէ անտի:

Նոյնպէս և Աստուծոյ որ զամենայն ճարտարութիւն արուեստագիտութեան ունէր յինքեան, եթէ չէր արարածս արարեալ՝ ի զուր կարծէր ունել զճարտարութիւնն, յորժամ չէին, որք ի ճարտարութենէ անտի երևէին: Նա և ոչ բարերարութիւնն բարերարութիւն ցուցանէր, եթէ արարածս չէր արարեալ՝ որք ի բարերարութեանն վայելէին: Այլ նա այնպէս բարերար է, զի ոչ միայն զառնելն շնորհեաց նոցա, այլ և յուրախութիւնս լաւութեանցն վայելել:

Դարձեալ՝ եթէ չէր Աստուծոյ արարածս արարեալ, և գիտէր իսկ ոք ոչ՝ եթէ բնաւ իցէ Աստուած, յորժամ չէին ի միջի՝ որք զկարողութիւն գիտութեանն ստանային: Ուստի քանզի յիւր գիտութիւնն աճել կամեցաւ, և եթէ է ինքն՝ ցուցանել, յո-

ժարեաց արարածս առ իւրոյ գիտութեանն ընծայեցուցանելոյ, զի վայելիցեն ի բարերարութեանն նորա: Եւ զպէտս աշխարհիս վասն մարդոյ արար ի սպասաւորութիւն ամենայն իրաց կարևորաց. և զմարդն յիւր փառս, զի փառաւորեսցէ զՏէրն և ծանիցէ զբարերարութիւնն:

Եւ այսպէս ոչ երբէք էր Աստուած դատարկ յարարչութենէ. քանզի միշտ ի մտի նկարեալ ունէր զորս առնելոցն էր: Եւ զի չէր ի դէպ կամօքն աեթ և խորհրդօք ունել զկարողութիւնն, վասն այնորիկ առ յայտնելոյ զկաման և զխորհուրդս՝ ած յայտ զարարածս, զի իւր կարողութիւնն երևեսցի և արարածքն ի նորա բարերարութեանն վայելեսցեն:

Արդ մի՛ ոք ինքնակաց զաշխարհս իշխեսցէ համարել, և մի՛ ընթերակաց ինչ Աստուծոյ, զի մի՛ զմեծութիւն զօրութեան նորա խախտիցէ. այլ ամենեցուն նա շընորհեաց զլինելն, որք ոչն էին յառաջագոյն: Ընդէր զզօրութիւնն նորա ի միջոյ բառնալ կամիցին, և արուեստագէտ միայն նիւթոյ իմիք զնա համարիցին, և

ոչ ի չգոյէ ի գոյ ածել զհասակս ամենայնի: Զգոյր ինչ ժամանակակից Աստուծոյ, և ոչ նիւթ ինչ՝ ուստի առեալ զարարածս կազմիցէ. այլ ինքն է ամենայն բնութեանց արարիչ. և ոչ միայն կերպարանաց կազմիչ, և ոչ էութեան էականաց իրիք խառնիչ, այլ գոյանալոյ գոյացելոցըն գոյարար:

Զայսպիսիս պարտին ասել մարդիկ զԱստուծոյ, և այսպիսի պատմութեանց լինել պատմիչք. որով Աստուած փառաւորի, և մարդիկ ոչ վնասին:

Այլ ըստ Աստուծոյ արժանեաց որք արժանաւոր իցեն պատմիչ լինել, բայց եթէ Աստուծոյ բարեկամք՝ որք վասն նորա սիրոյն և զկեանս աշխարհիս արհամարհեցին, և մահու չափ վասն կենդանի յուսոյն՝ որ առ Աստուած՝ գուն գործեալ, մատնեցին զանձինս ի կորուստ մարմնոց, ուստի փրկութիւն ոգւոցն գըտանի:

Եւ արդ ի զուրկ իսկ չանան իմաստունքըն Յունաց զԱստուծոյ ճառել, այնու զի զարարիչն և զարարածս ի միմեանց

ոչ կարացին ընտրել, որք միով դիւացն խաւարեալք՝ ծնունդս բազում և անթիւ աստուածոց մուծանել դանդաչեցին:

Որպէս Եսիոդոս ոմն իմաստուն ի նոցանէն՝ բազում ծնունդս աստուածոց համարէր: Եւ Հոմերոս զրաբանեալ, զնոքին հետ երթեալ, պաճուճեալ բանիւք զնոյնս ճամարտակէ: Եւ այլք բազումք ի փիլիսոփայից առասպելական բանիւք բանդագուշեալք, խոստանան զԱստուծոյ պատմութիւնս կատարել: Որք զԱստուածն ոչ ճանաչեն, և ոչ զարարիչն յարարածոց մեկնել գիտեն, զիմարդ զԱստուծոյ ճառել մտաբերիցեն: Եւ մանաւանդ որ քան զամենեսինն իմաստնագոյն համարին զՊղատոն, որ վասն Աստուծոյ և վասն ոգւոց և վասն արարածոց խօսել յօժարեցաւ:

Եւ արդ ընդ նմա իսկ մարտիցուք գոռութեան բանիւք, որ քան զամենայն փիլիսոփայն աստուածապաշտագոյն երևի Յունաց: Զի նորա առաւել գտանի չծանուցեալ զԱստուած, և ոչ զարարչութիւնն արարածոց: Զի յորժամ զնորա

սեժալոյ կարիան գձձեացուք, և հանցուք զնա յաչաց իւրոցն խաբեցելոց, ապա ցուցցուք Թէ ով Աստուած է, և զինչ նորա արարածք:

Եւ մի ինչ, զորառաւել անճառ համարի Պղատոն, այս է՝ Թէ միշտ էր Աստուած և արարածս ինչ ոչ ունէր. զորոյ զկաման սիրեմ վասն զԱստուածն խնդրելոյ, և զամբարտաւանութիւնն ոչ զովեմ:

ԳԻՐՔ ՁՈՐՐՈՐԴ.

—

ԵՂԾ ԱՂԱՆԴՈՅՆ ՄԱՐԿԻՈՆԻ.

Ա. ՄԱՐԿԻՈՆ մոլորեալ մուծանէ օտարութիւն ընդդէմ աստուծոյն օրինաց, եղեալ ընդ նմա և զհիւղն էութեամբ, և երիս երկինս: Ի միջն, ասեն, բնակեալ է օտարն. և յերկրորդումն օրինացն աստուած. և յերրորդումն զօրք նորա. և յերկրի հիւղն, և կոչեն զնա զօրութիւն երկրի:

Եւ այնպէս կարգէ զաշխարհէ և զարարածոց, որպէս օրէնքն ասեն: Այլ և յաւելու՝ Թէ հաղորդութեամբ ընդ հիւղեայն արար զամենայն զոր արար. և որպէս Թէ էգ ոք ինչ և կին ամուսնութեան էր հիւղն: Եւ յետ առնելոյ զաշխարհս եւ ինքն զօրօքն հանդերձ յերկինս. և հիւղն և որդիք նորա մնացին յերկրի, և կալան զիւրաքանչիւր իշխանութիւն, հիւղն յերկրի, և օրինացն աստուած յերկինս:

Եւ տեսեալ օրինացն աստուծոյ՝ Թէ գեղեցիկ է աշխարհս, խորհեցաւ առնել ի սմա մարդ: Եւ իջեալ առ հիւղն յերկիր, ասէ. տուր ինձ ի կաւոյդ քումմէ, և չինէն տամ ոգի, և արասցուք մարդ ըստ նմանութեան մերում: Տուեալ նմա հիւղեայն յերկրէ իւրմէ, ստեղծ զնա և փչեաց ինա ոգի, և եղև Ադամ իշունչ կենդանի. և վասն այնորիկ անուանեցաւ Ադամ, զի ի կաւոյն արարաւ: Եւ ստեղծեալ զնա և զամուսինն նորա, և եդեալ ի դրախտին՝ որպէս և օրէնքն ասեն, գայլին հանապազ պատուիրէին նմա, և ուրախ լինէին ի նմա իբրև յորդւոջ հասարակաց:

Եւ տեսեալ, ասէ, աստուծոյն օրինաց որ տէրն էր աշխարհի՝ Թէ ազնուական է Ադամ և արժանի սպասաւորութեան, հնարեցաւ՝ եթէ գիմրդ կարասցէ գողանալ զնա ի հիւղեայն, և յիւր կողմն միաբանել: Առեալ զնա ի մի կողմն, ասէ. Ադամ, ես եմ աստուած և չիք այլ ոք. և բայց չինէն այլ աստուած քեզ մի լիցի. ապա Թէ ունիցիս զոք այլ աստուածս բայց չինէն, գիտասջիր զի մահու մեռա-

նիցիա: Եւ իբրև ասաց զայս ցնա, և յիշատակեաց նմա զանուն մահու, զահի հարեալ Ադամայ՝ սկսաւ տակաւ զանձն մեկնել ի հիւղեայն:

Եւ եկեալ հիւղեայն՝ պատուիրել նմա ըստ սովորութեանն, տեսանէր՝ զի ոչ անսայր նմա Ադամ, այլ խորհեալ ի բաց մերժէր, և չմերձենայր առնա: Յայնժամ հիացեալ իմիտս իւր հիւղեայն, իմացաւ՝ Թէ տէրն արարածոց նենգեաց նմա: Ասէ. յականէ աղբերն պղտորեալ է ջուր նորա. զինչ է այս, չև ևս բազմացեալ Ադամայ ծննդովք, և գողացաւ զնա անուամբ աստուածութեանն իւրոյ յինէն: Որովհետև ատեաց զիս, և ոչ պահեաց ընդ իս ըզդաշնն, ես արարից աստուածս բազումս, և լցից նոքօք զաշխարհ գոյիւ իւրով, զի խնդրիցէ՝ Թէ ով իցէ աստուած, և ոչ գտանիցի:

Եւ արար, ասեն, կուռս բազումս և անուանեաց զնոսա աստուածս, և ելից նոքօք զաշխարհ: Եւ ընկղմեցաւ անուն աստուծոյ, որ տեառնն արարածոց, իմէջ անուանց բազում աստուածոց, և ոչ ու-

թեք գտանէր: Եւ մոլորեցաւ ծնունդ նորա նոքօք, և ոչ պաշտէր զնա, զի ձգեաց զամենեսին առ ինքն հիւղն, և ոչ ետ Յոյլ և ոչ միւմ ի նոցանէ պաշտել զնա: Յայնժամ, ասեն, բարկացաւ տէրն արարածոց, զի Յողին զնա և անասցին հիւղեայն. և մի ըստ միոջէ, որ ելանէին ի մարմնոց իւրեանց, արկանէր զնոսա առ ցասման իգեհեն. և զՀոգամարկ ի գեհեն վառն ծառոյն. և այնպէս արկանէր գայր ի գեհեն զամենեսին, մինչև ցքսան և ինն դար:

Եւ տեսեալ, ասեն, աստուածոյն բարւոյ և օտարի, որ նստէր յերրորդ երկինս, Թէ այնչափ ազգք կորեան և տանջեցան ի մէջ երկուց ննջաւորաց՝ տեառնն արարածոց և հիւղեայ՝ ցաւեաց նմա վասն անկելոցն ի հուր և տանջելոց: Առաքեաց զորդի իւր երթալ փրկել զնոսա, և առնուլ զնմանութիւն ծառայի, և լինել ի կերպարանս մարդոյ ի մէջ որդւոց աստուծոյ օրինացն: Բժշկեսջիր, ասէ, ըզբորոտս նոցա, և կեցուսջիր զմեռեալսն նոցա, և բացջիր զկոյրս նոցա, և արասջիր ի նոսա բժշկութիւնս մեծամեծս

ձրի. մինչ զի տեսանիցէ զքեզ տէրն ա-
րարածոց, և նախանձիցի, և հանիցէ
զքեզ ի խաչ: Եւ ապա ի մեռանելն քում
իջցես ի դժոխս, և հանցես զնոսա անտի.
զի չեն սովոր դժոխք՝ ընդունել ի միջի
իւրեանց զկեանս: Եւ վասն այնորիկ ե-
լանես ի խաչ, զի նմանեսցիս մեռելոց.
և բացցէ դժոխականն զբերանն իւր՝ ընդ-
դունել զքեզ. և մտցես ի մէջ նորա, և
Յափուր արասցես զնա:

Եւ իբրև եհան զնա ի խաչ, ասեն, էջ
ի դժոխան, և Յափուր արար զնա: Եւ
հանեալ զոգիան ի միջոյ նորա, տարաւ
յերրորդ երկինան առ հայրն իւր: Եւ տէ-
րըն արարածոց զայրացեալ, առ ցաս-
մանն էցել զպատմուճանն իւր և զվարա-
գոյր տաճարին իւրոյ. և խաւարեցոյց
զարեգակն իւր, և զգեցոյց Յուխա աշ-
խարհին իւրում, և նստաւ ի սուգ առ
տրտմութեանն:

Ապա երկրորդ անգամ իջեալ Յեսու
կերպարանօք աստուածութեան իւրոյ առ
ոչն արարածոց, դնէր դատ ընդ նմա
լան մահուն իւրոյ: Եւ տեսեալ տեառն

աշխարհի զաստուածութիւնն Յեսուայ, գիտաց՝ Թէ գոյ այլ աստուած արտաքոյ քան զնա : Եւ ասէ ցնա Յեսու. դատաստան կայ իմ ընդ քեզ, և մի ոք լիցի դատաւոր ի միջի մերում, այլ քո իսկ օրէնքն՝ զոր գրեցեր : Եւ իբրև եղին զօրէնան ի միջի, ասէ ցնա Յեսու. ոչ դու գրեցեր յօրէնադ քում՝ Թէ որ սպանանիցէ, մեռցի. և որ հեղու զարիւն արդարոյ, հեղցեն զարիւն նորա : Եւ ասէ. այո ես գրեցի : Եւ ասէ ցնա Յեսու. արդ տուր զքեզ ի ձեռս իմ՝ զի սպանից և հեղից զարիւն քո, որպէս սպաներ դու զիս և հեղեր զարիւն իմ. զի արդար եմ իրաւամբք քան զքեզ, և երախտիս մեծամեծս արարի յարարածան քում: Եւ սկսաւ համարել զերախտիսն, զոր արար յարարածս նորա :

Եւ իբրև ետես տէրն արարածոց՝ Թէ յաղԹեաց նմա, և ոչ գիտէր զինչ խօսիցի, քանզի յիւրոց օրինացն պարտաւորեցաւ և չգտանէր տալ պատասխանի, զի եղև մահապարտ փոխանակ մահուանն նորա, ապա յողոքս անկեալ աղաչէր զնա՝ Թէ

փոխանակ զի մեղայ և սպանի զքեզ յանգետս, քանզի ոչ գիտացի՝ Թէ աստուած իցես, այլ մարդ համարէի զքեզ, տուեալ քեզ ընդ այնր վրիժուց՝ զամենեսեան որ կամիցին հաւատալ ի քեզ՝ տանել յո՛ և կամիցիս: Ապա Թողեալ զնա Յեսուայն՝ յափշտակեաց առ զՊաւղոս, և յայտնեաց նմա զգինան, և առաքեաց զնա քարոզել՝ Թէ գնոց գնեալ եմք մեք. և ամենայն որ հաւատայ ի Յեսու՝ վաճառեցաւ յարդարոյ անտի բարւոյն:

Այս սկիզբն է աղանդոյն Մարկիոնայ. Թող զայլ բազում Թարմատարսն. և զայս ոչ ամենեքին գիտեն, այլ սակաւք ի նոցանէ. և աւանդեն զուսումն միմեանց ի բերանոյ. ասեն, օտարին՝ գնովք գընեալ է զմեզ ի տեառնէն արարածոց, և Թէ ոպէս կամ ւ գնեալ իցէ. զայն ոչ ամենեքին գիտեն:

Ե. Պատասխանի. արդարև որպէս երանելին Առաքեալ ասէ, Թէ իմաստութիւն աշխարհիս այսորիկ յիմարութիւն է առաջի Աստուծոյ: Ձինչ առեալ կամ զինչ կցկցեալ կամ ոյր բանիւ խօսին:

Թէ ճշմարիտ է նմա օրինացն աստուած, յորմէ զարարածս ամենայն դնէ, ապա օտարին՝ զոր նմա պոզօղ մուծանէ՝ չէր պարտ նորա արարածոցն ցանկանալ, Թէպէտ և ի տանջանս էին կամ ի հանգըստեան: Զի Թէ աստուած էր, և իւր իսկ արժան էր արարածս առնել, և ոչ այլոյ արարածոց ցանկանալ: Այլ զի ոչ ինչ արար, յայտ է՝ Թէ բնաւ և էր իսկ ոչ: Զի Թէ էր իբրև զԱստուած, պարտ էր նմա զամենայն կարողութիւն յանձին ունել. և Թէ ինքն յանձնէ իմաստութիւն ինչ այնպիսի ոչ ունէր. գեԹ յարարիչն աշխարհի նայեցեալ՝ իցիւ ուսանել ի նմանէ զարուեստն: Բայց եԹէ նմա նմանօղ չկարէր լինել, գոնեայ հիւղեայն լիցի նմանօղ, որ ընդ գետինն քարշէր՝ և եղև հաղորդ արարչութեան արարչին: Այլ յայտ է Թէ մտաց բարբաջանք են ապականդըն, և ոչ ճշմարտութիւն:

Արդ նախ զաստուածն օրինաց և զհիւղն նմա հաւասար դնել՝ ի փիլիսոփայից գողացեալ դնէ. որք տկարութիւն արկանեն զԱստուծով՝ Թէ չկարաց յոչընչէ ինչ առ-

նել, այլ ի նիւթոյ ընդերակացէ : Եւ Թէպէտ բիւրապատիկ յանուն օտարին և որդւոյն նորա Յեսուայ՝ զոր բարերարն կոչեն՝ ապաւինիցին , չեն ինչ ընդհատ ի հեթանոսաց : Ֆանզի որպէս նոքա աստուածս բազումս ասեն , նմանապէս և սոքա աստուածս զնոյնան քարոզեն . և բազմապատիկ մահապարտք են , զի աբրահամեալք յօրինացն աստուծոյ՝ յօտարի անուն խրախուսեն իբրև զտիրապրուժս. որ և ի մարդկան միջի ոչ պաշտի : Զի ոչ իշխէ արքայից արքայի ծառայ՝ ի կայսր խրախուսել , և ոչ կայսեր ոք ծառայ՝ ի աստանականն խիզախել . ապա Թէ ոչ՝ դլխապարտ գտանի :

Դարձեալ և նոքա ծնունդս աստուածոց բազմաց ասեն . և սոքա յամուսնութենէ օրինացն աստուծոյ և հիւղեայ ասեն աբրահամ զամենայն արարածս . և զինչ աւելի իցեն քան զմոգս , որք յամուսնութենէ դնեն զաստուածան իւրեանց : Արդ ցուցցեն . որ հոգի ետ նոցա զայն օրէնս . զի ի Հոգւոյն սրբոյ , որ ի մարգարէս և յառաքեալս խօսեցաւ , ուրացեալ են :

Գ. Այլ Պաւղոս՝ ասեն, յափշտակեցաւ յերրորդ երկինս, և լուաւ զայս բանս անճառս՝ զորս մեք քարոզեմք:

Նա աւանիկ Պաւղոս ասէ. զոր ոչ է պարտ մարդկան խօսել: Արդ Մարկիոնն, Թէ մարդ ոք իցէ, ապա և նմա անճառ էին բանքն: Որ և մարդ իսկ է, և վատԹարագոյն քան զամենայն մարդիկ. որոյ Թողեալ զճշմարտութիւն Հոգւոյն, և նըստի առասպելս կարկատէ: Եւ այնչափ յանդգնեալ սատանայութեան ոգւովն, մինչև ի պատգամաց Հոգւոյն սրբոյ քաղ հանել. զկէս աւետարանի ընտրել առնուլ՝ և զկէսն իբրև զխոտան ի բաց Թողուլ. նոյնպէս և զառաքելական ԹղԹոցն. և զհին կտակարանս ամենևին ուրանալ, որպէս Թէ յանզգամէ տուեալ իցեն և ոչ ի բարւոյ:

Եւ Առաքեալ ասէ՝ Թէ անպատում են բանքն, զոր լուայ. և Մարկիոնն ասէ՝ ԵԹէ ես լուայ: Արդ առաքելոյն՝ որ անճառ զբանան համարի՝ պարտ է անսալ, Թէ Մարկիոնի՝ որ ի քարշ արկեալ ընդ վայրս զբանան ածէ:

Դ. Դարձեալ Թէ մշտնջենաւոր էր օրինացն աստուած, ապաքէն պարտ էր կանխագէտ և ամենագէտ էանալ. և Թէ չէր կանխագէտ և ամենագէտ, ապա և կատարեալ իսկ չէր: Այն աւանիկ կատարեալ երեւի այնու՝ զի զերկինս և զերկիր ամենայն արար. և ոչ միայն մի երկինս՝ այլ երկուս, և զօրս բազումս: Եւ որ այնմ ամենայնի բաւական եղև, զայն զի՞ ոչ կարէր գիտել՝ Թէ է ոք ի վեր քան զնա, յորմէ կասկած կայր նմա: Եւ եԹէ գիտէր, ընդէր ոչ ամրացոյց զիւր տեղին, զի մի՛ լինէր անդր մուտ հակառակորդին՝ որ կայր և ապստամբեցուցանէր զարարածս նորա ի նմանէ:

Եւ դարձեալ՝ բարին, զոր կոչեն, եԹէ որպէս ասեն՝ բնուԹեամբ բարի էր, և չարուԹիւն ի նմա ոչ գոյր, զի այլոցն բարի խորհէր՝ նմա չար ընդէր խորհեցաւ, առնել զնա սրտառուչ յիւրոցն արարածոց: Զի սա հանապազ առնէ մարդիկ. և նորա միշտ հանեալ ի սմանէ, առնէ զսա Թախծալից. որ ոչ բարւոյ գործ է՝ այլ չարի:

Ե. Դարձեալ, և զոր արդարն ասեն՝ Թէ արդարև արդար էր, յետ բաժանելոյ զիշխանութիւնն, իւր զերկինն երկոսին առնլոյ, հիւղեայ և որդւոցն նորա զերկիր միայն Թողլոյ, զիարդ էր զի միւսանգամ նորա աշխարհին ցանկացեալ, ասէր՝ Թէ տուր ինձ ի կաւոյդ քումմէ, և յինէն տաց ոգի, և արասցուք մարդ ըստ նմանութեան մերում. որ ոչ արդարոյ գործ է՝ այլոյ աշխարհի ցանկանալ, այլ անիրաւի:

Կամ հիւղեայն զիարդ ընդ միտս հաբեալ էր, ընդ մի անգամ բաժանելոյն ի նմանէ՝ դարձեալ հաղորդութիւնս առնել, և անձամբ անձին նենգել և մասնմուտ առնել օտարի յիւր աշխարհին, զի առնիցէ անդ զՈդամն և զամուսինն նորա, որ մերթ ի սա տայր ձեռն և մերթ ի նա:

Բայց և տէր արարածոց զարդարն միայն զիարդ կոչիցեն. զի և յառաջնումն որպէս ասեն, ոչ միայն ինչ արար, այլ հասարակ արարին զինչ և արարին. և յերկրորդումն ի հասարակաց նիւթոյ արարին զմարդն, և երկոքին զոյգ ուրախ

լինէին ի նմա: Զի Թէ՝ որպէս ասեն՝ արդար միայն էր օրինացն աստուած, յայտ է՝ եթէ զարդարութեան և պատուիրանս տայր նմա. և եթէ չար միայն էր հիւղն, հարկ էր՝ եթէ չարեաց ևեթ խրատ տայր նմա:

Եւ հուր էր զի երկոքին ուրախ լինէին ի նմա՝ որ հակառակ միմեանց տային զպատուէրս. մինն զբարեաց իբրև ըզբարի, և մինն զչարեաց իբրև զչար: Զի ոչ արդարոյ, որ բնութեամբ արդար իցէ, մարթի զչար ինչ պատուէր տալ. և ոչ չարի, որ բնութեամբ չար իցէ, ըզբարւոյ խրատ տալ:

Այլ և ուրախ լինել չարին ցաւոտի էր, որ միշտ խաւարին և գժդմագոյն էր. կամ արդարոյ նենգել, որ ի բնէ արդարակորով և իրաւախոհ էր, որում չէր մարթ իւր միայն խորհել զմարդն հաւասարակաց ստեղծուած: Այլ իբրև արդարոյ պարտ էր խորհել՝ Թէ որպէս ի միասինն արարած զնա, առ հաւասարակ արժան է մեզ և վայելել ի նմա: Բայց ոչ իբրև զարդարակորով, այլ իբրև զնենգաւոր և զկասկա-

ծոտ առեալ մեկուսի զմարդն զեղծուցանէր՝ Թէ ես եմ աստուած, և չիք այլ ոք բաց յինէն: Եւ ի դէպ էր Ադամայ ասել՝ Թէ մինչ առնելն կամեցար զիս, զոյր այլ աստուած, յորժամ զհողն խնդրեցեր. և արդ զի խորհելդ զիս քեզ կամիս միայն, որ դու միայն իցես աստուած, և այլ ոք ոչ:

Այլ Թերևս ի համբաւէ մահուանն զարհուրեցաւ՝ զոր Թէ կամէր Թէ չկամէր սակայն կրեաց: Եւ զայն ոչ գիտէր՝ Թէ առնենգելն նենգէ նմա հիւղն, և ընկղմէ զմի անուն նորա ի մէջ բազում աստուածոց՝ զոր առնէր գայթակղութիւն մարդոյն: Եւ այնպիսի վնասու ոչ յետնամեղն եղև պատճառ, այլ որ նախն նենգեաց: Զի Թէ նորա զայնպիսի արուեստ չէր ցուցեալ, հիւղն ոչ իմանայր. այլ ինքն եղև վարդապետ, և իւրոյ նենգութեանն, և հիւղեայ խորամանկութեանն:

Զ. Եւ իբրև տեսանէն՝ Թէ ոչ ոք պաշտէ զնա՝ բարկացեալ արար զնոսա մահկանացուս, և որոց ոգիքն ի մարմնոցն ելանէին՝ արկանէր զնոսա մի ըստ միոջէ ի գեհեն:

Արդ քան զնոսա արկանէր ի գեհեն,

զնա՝ որ պատրեացն զնոսա՝ ընդէր ոչ արկանէր ի գեհեն. մի՛ թէ վասն զի ոչ կարէր յաղթել նմա: Ապա եթէ բռնագոյն քան զնա էր հիւղն, զի՞ ետ ի ձեռս զիւր պատրեալսն նմա չարչարել:

Բայց և արդարն թէ արդարև արդար էր, չէր պարտ այնուհետև զմարդիկ առնել. զի գիտէր եթէ խաբելոց է զնոսա հիւղն: Այլ իբրև արդարոյ արժան էր խորհել՝ թէ զինչ օգուտ է զի ես առնեմ, և այլ հանէ զնոսա յինէն: Նա և տանջել իսկ չէր օրէն զնոսա, զի գիտէր՝ թէ այլոց բանիւ մեղանչեն:

Է. Այլ միւսն ևս, զոր ասեն, ամպարըշտագոյն է քան զամենայն. թէ իբրև ետես բարին՝ որ յերրորդ երկինս նստէր՝ զայնչափ զբաղ և զինն ազգաց զոգիս տանջեալս ի գեհենի, գթացեալ ի նոսա առաքեաց զՅեսու զորդի իւր, երթալ առնուլ զնմանութիւն ծառայի, և ի կերպարանս մարդկան լինել:

Եթէ այնչափ գթած էր, ետ ընդ ետ իսկ ընդէր ոչ յղեաց յորդին իւր՝ երթալ փրկել զնոսա, այլ յետ բաւան և ինն ազ-

գաց այնչափ ոգւոց ի գեհենի տանջելոց:

Այլ նախ՝ երրորդ երկինս ասել ուստի իցէ նմա. զի Մովսէս երկուս երկինս ասէ: Այլ որպէս յամենայնի մոլորեցան հերձուածողք. նոյնպէս և յայսմ. զի ոմն տասն երկինս ասէ, ոմն ևՅն, և Մարկիոն երիս: Եւ ի գրոց սրբոց կամին հաստատել զմոլորութիւնն իւրեանց՝ Թէ երկինս և երկնից երկինս բազմաթար ասեն գիրք:

Ցորժամ ոչ յուշեքէ սանձահարին հարցուածովք, արտաքոյ գրոց սրբոց բարբանջեն. և իբրև վտանգին, ապա ի գիրս ապաւինին: Բայց երկինս և երկնից երկինս յայն սակս գտանեմք ի գիրս, զի յերբայեցւոց լեզու երկին չմարթի ասել, որպէս և ոչ յատորի լեզու՝ ջուր կամ երկին. այլ միշ բազմաբար ասի:

Եւ յայտ անտի է, զի ևՅանանիցն Թարգմանեալ ի յոյն լեզու, ասեն. ի ընկըզբանէ արար Աստուած զերկին և զերկիր, իբրև զմիոյ երկնէ յայտ արարեալ: Եւ յատորի լեզու քանզի չմարթի երկին ասել, ասէ. ի սկզբանէ արար Աստուած զյանՅն երկինս և զյանՅն երկիր. Թէպէտ

և միաբար չմարթի ասել նոցա զմիջէ երկնէն, սակայն յաՅն ասելով՝ որ է տարր՝ իբրև զմիջէ տարերէ միոյ երկնի յայտ առնէ Թարգմանութիւնն: Նա և զերևելի հաստատութիւնս, որ ի ջուրց մեկնեցաւ, երկին Թարգմանեցին ևՅանաասունքն. ուստի յայտ է՝ Թէ վերին երկինն և ներքին՝ երկու երկինք են, ոչ երեք կամ բազումք:

Այլ ասեն, Պաւղոս ասաց՝ Թէ յափըշտակեցաւ այնպիսին մինչև յերրորդ երկինս: Եւ զայն ոչ գիտեն, Թէ չև ևս յայտ է՝ Թէ մինչև ցերրո՛րդ երկինս ասիցէ, կամ Թէ մինչև ցերրորդ ինչ մասն ի բազում մասանց միոյ երկինս ասիցէ. զի բանն ի յոյն լեզու յերկոսին հարկանէ: Եւ մանաւանդ զի առանց արԹերն ասէ որ էն*. զի ոչ ասէ Թէ մինչև ցերրորդ երկինն, այլ Թէ ցերրորդ երկնի** առանձինն ասելոյ: Ուստի տայ ակնարկութիւն, եԹէ ի մասն ինչ երրորդ ի բազում մասանց երկնի յափշտակեցաւ Պաւղոս,

---

* ὀνρανῶν. ** ἕως τρίτου ὀνρανοῦ.

վասն որոյ ածէ զնորին զկնի, Թէ յարիցէ տակեցաւ այնպիսին ի դրախտն: Եւ դրախտն ոչ ևՅէ յերրորդ երկինս իցէ, և կամ բնաւ ի յերկինս ուրեք, այլ յերկրի. զոր և ինքեանք իսկ վկայեն՝ Թէ իբրև արարին զմարդն, ի դրախտի անդ եդին, որ է յերկրի և ոչ յերկինս:

Բայց Թէ և կոչի բարձրութիւն ինչ երկինք, որպէս յորժամ ասիցէ գիր. Թըռչունք երկնից և ցօղք երկնից, և ամպք և հողմք երկնից. ոչ ևՅէ յերկինս իցեն, այլ զի ի բարձրութեանն են՝ երկնից կոչին: Նա և զծառոց անգամ, որք ի սակաւ ինչ բարձրութեան են, ասեմք՝ Թէ երկնաբերձ են. և զծխոյ Թէ յերկին կցի: Ըստ նմին օրինակի և Պաւղոսի զերրորդ երկինսն ասել իմանալի է:

Սկսիր յառաջնմէն, և էջ յերկրորդն, և հաս յերրորդ օդ՝ որ ի զրոց երկին կոչի, և գտանես զոր ինչ երանելին Պաւղոս ասէ. և լուաւ բանս անճառս, զոր ոչ է պարտ ուժեք իսօսել: Թէպէտ և Առաքեալ և անօթ ընտրութեան էր, սակայն էր ընկեր Պետրոսի, լծակից որդւո-

ցըն որոտման և քարոզակից Բառնաբայ, զիաւրդ էր զի նմա միայն պարտ էր լսել և խօսել զբանն անճառս, և իւրոց ընկերացն ոչ. ոչ ապաքէն մի շնորհք էին յամենեսին, և մի և նոյն Հոգի և ի նոսա: Այլ անճառ բանքն ոչ եթէ նմա ճառելիք էին և յայլոց ընկերացն անճառք. այլ ըստ այնմ զոր յառաջնումն Պղպին կորընթացից ասէ. զոր ակն ոչ ետես, և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ այն՝ զոր պատրաստեաց Աստուած սիրելեաց իւրոց:

Ի և զայս իմանալ՝ Թէ ոչ զի ես միայն արժանի եղայ խորհրդոյն, որ տրուպս եմ առաքելոց, այլ Թէ և Պետրոս՝ որ գլուխն է առաքելոց՝ տեսանիցէ, չկարէ ճառել. և Թէ լսիցէ, չկարէ պատմել: Ֆանզի անպատում է և ի վեր քան զմիտս և զլեզու մարդկան, և վասն այնորիկ ասէ Առաքեալ. Թէպէտ և տեսի, չկարեմ պատմել. Թէպէտ և լուայ, չեմ բաւական ճառել:

Դարձեալ, ոյր աստուած ոյր աստուծոյ պարարծոց խնամակալ լինէր, եթէ ի

տանջանս էին և թէ յանդորրու: Կամ զանցանելն զՅեսուայ ի նորա աշխարհին՝ զի ամրդ ոչ ինքն զգայր, և ոչ ոք ի զօրացն նորա, և ոչ այլոց զելանելն նորա անդրէն: Եւ եթէ զնորայն իբրև զաստուածոյ չկարէին իմանալ, և զայնչափ հոգւոց՝ զորս եհան առ նոքօք յիւր երկինսն՝ ըզաօսաւինն զիամրդ ոչ առնուին. և կամ պահապանքն ոգւոցն արգելականաց ընդէր ոչ առնէին ազդ տեառն իւրեանց. այլ յայտ է՝ եթէ անոտի բանք են և անհաւատ պատմութիւնք:

Ը. Եւ եթէ նմանութեամբ միայն եղև մարդ, և կերպարանօք ևեթ էր խաչն և չարչարանք և մահն, ապա և փրկութիւն ինչ ոչ գործեցաւ: Այլ և փրկէր իսկ ընդէր զայլոյ արարածս, զոր իւր չէր արարեալ. որ ոչ բարւոյ գործ է՝ այլ ապիրատի, սպրդել գաղտ մտանել յայլոյ տուն և նենգել նմա:

Բայց զայն ևս հարցցուք. մարմնաւոր ոք էր Յեսուն, եթէ անմարմին: Եթէ ասիցեն՝ թէ անմարմին էր, լուիցեն. զի եթէ անմարմինն եկն, և աստ՝ որ-

պէս ասեն՝ մարմին ոչ զգեցաւ, յայտ է՝ եթէ ոչ ետ ինչ, և ոչ առ. ոչ մեռաւ, և ոչ փրկեաց. և ի զուր է ասելն Մարկիոնի, եթէ արեանն Յեսուայ եմք գինք: Զի ոչ հեղաւ արիւնն նորա, և ոչ նոքա գնեցան, այնու զի կերպարանօքն ասեն զխաչն և զմահն, և ոչ ճշմարտութեամբ: Եւ յանդիմանեն զնոսա Հրեայք, որ ցայսօր պնտեալ են՝ թէ հարքն մեր հանին զՅիսուս ի խաչ: Ուստի յայտ յանդիման ցուցանի, եթէ ոչ կեղծեօք եւ ֆրիստոս ի խաչ, այլ ճշմարտութեամբ: Ֆանզի և ճշմարտի յարութեանն մերոյ՝ կացոյց զիւրոյ անձինն զյարութիւն օրինակ:

Թ. Եւ եթէ, որպէս ասեն, զօրէնս արդարոյն դատաւոր և միջնորդ խնդրեաց Յեսուն, անդստին իսկ յօրինացն բազմապատիկ մահապարտ գտանի՝ զի նախ քան զխաչելութիւնն իւր զբազումս յափըշտակեաց: Եւ ոչ միայն ինքն, այլ և զայլս բազումս ընտրեաց ի նոցանէն, և առաքեաց՝ զի աշակերտիցեն և ձգիցեն առ նա:

Եւ ոչ միայն այնչափ, այլ և զօրու-

Թիւն զգեցոյց նոցա՝ կոխել զզօրս տեառնն իւրեանց, և արկ սուր և բաժինս ի տան նորա, և վառեաց հուր յարարածս նորա. մինչև կարճել և խափանել զօրէնս նորա յաւուրցն Յովհաննու մկրտչի, և աւետարանել զիւր արքայութիւնն, արձակեալ քարոզս բազումս՝ քարոզել, և հնձօղս բազումս՝ հնձել, զոր ոչ ինքն սերմանեաց: Եւ այն մինչ չև մեղուցեալ ինչ ուրուք էր նմա, ոչ ի խաչ հանեալ և ոչ զարիւն նորա հեղեալ, առ աւար ըզտուն նորա, և խախտեաց զԹագաւորութիւն նորա. և նա լռեալ կայր և ոչ ինչ մեղանչէր նմա:

Եւ զիմարդ ասիցեն, Թէ խաչելութեամբն գնեաց զՄարկիոնն. զի ահաւանիկ զայն ամենայն ժողովս բազմաց, մինչ չև ելեալ էր ի խաչ, կորզեաց յինքն:

Այլ, ասեն, զնոսա բժշկութեանց գինս տարաւ. զհիւանդս բժշկեաց, և զբորոտս սրբեաց. զմեռեալս յարոյց, զանդամալոյծս հաստատեաց, և զդևս հալածականըս արար: Եւ իցէ ոք բժիշկ, յորժամ զորդի ուրուք բժշկիցէ, վարձս ոչ առնու,

այլ զբժշկեալն ի գլխովին զինս բժշկութեանն խնդրիցէ : Եւ գրեացուք՝ եթէ բըժըշկեալքն էին ինչ նմա անկ վասն երախտեացն. իսկ զորս ոչն բժշկեաց, ընդէր հրապուրեաց եհան ի տեառնէ իւրեանց. որ ոչ բարւոյ գործ էր, այլ նենգաւորի:

Եւ զօրէնան զիմարդ իշխէր դատաւոր խնդրել՝ որոյ այնչափ վնաս յառաջագոյն քան զմահն իւր արարեալ էր ի տան նորա. մանաւանդ զի և գիտէր իսկ՝ թէ պարտաւորեն զնա օրէնքն, և ոչ արդարացուցանեն: Արդ եթէ յիսրայէլացւոյ կերպարանս եկն ի տուն նորա, տակայն պարտաւորելոց էր: Զի գրեալ էր յօրէնսն թէ ամենայն Հրեայ, որ լուծցէ զօրէնս, սպանցի. և որ ոչ Թլփատեսցի, և ոչ ըզշաբաթս պահեսցէ, մեռցի. և նա ելոյծ զօրէնսն և խախտեաց կրօնսն, մահապարտ էր յօրինացն: Եւ թէ յայլոց ազգացն ի կերպարանս եկն առ նոսա, նախ՝ զօտարազգիսն իսկ կոտորել հրամայեալ էր նոցա, և ոչ խնայել. և ապա՝ ի վերայ եկացն և պանդխտաց հրաման կայր, եթէ

ոչ պահիցեն զկրօնս օրինացն, մահուամբ մեռցին. համայն և այնպէս յօրինացն մահապարտ էր:

Իցէ ոք որ մտանիցէ գաղտ ի տուն ընկերի իւրոյ գեղծել ինչ, և ի բուռն անկեալ՝ չլինիցի մահապարտ: Եւ կամ իցէ ոք, որ մատուցեալ՝ զայլոյ զորդիս կամ զծառայս յապխմակս և ստահակս յօժարեցուցանիցէ հանել, և հասեալ ի վերայ ոչ հանիցեն զայն ընդ կառափն: Եւ կամ իցէ ոք, որ իբրև զդէտ մտեալ՝ զայլոյ զՅագաւորութիւն գաղտ լրտեսիցէ, և ծանուցեալ զլրտեան ոչ սատակիցեն վաղվաղակի:

Նոյնպէս և Յեսուն յառաջ քան զխաչելութիւնն բազում ինչ այսպիսի վնաս գործեաց ի տան արդարոյն. և ըստ օրինացն, զոր դատաւորն խնդրեաց, բազում մահուց պարտական գտանի: Զի օտարոտի մի եկեալ յայլոյ տուն, զայնչափ մեծամեծ աղէտս գործեաց ի նմա. զօրէնսն և զմարգարէսն նորա արգել, և զիւր Յագաւորութիւնն աւետարանեաց:

Արդ ով էր նա՝ որ այնչափ մեծամեծս

կարաց գործել, եթէ ոչ Տէրն ամենայնի որ ասաց՝ Թէ ամենայն ինչ տուաւ ինձ ի հօրէ իմմէ: Ուստի յայտ է՝ Թէ ոչ իբրև զօտար ոք առ յափշտակութեամբ, այլ ի հօրէ տուաւ ի ձեռս նորա, և իբրև զՏէր օրինացն դաղարեցոյց զօրէնսն. և յառաջ քան ի խաչ ելանել եցոյց զԹազաւորութիւնն իւր:

Ո՛ անմիտք. զի ոչ իմացայք, եթէ հայր Յիսուսի է Տէրն ամենայնի, այնու զի զամենայն ետ ի ձեռս նորա. և նա է Տէր աշխարհի, և ոչ զորմէ դուքն կարծեցէք՝ որ չէր իսկ: Զի ամենայն որ արտաքոյ քան զնա աստուած անուանի, չէ նա ի քնէ աստուած: Եւ բազում ինչ և այլ է որով ցուցանի՝ Թէ Տէր մեր յիւրսն եկն և ոչ յօտարոտիս. և ինքն և Հայրն իւր՝ են մի Տէր աշխարհի: Եւ առաւել ի վիրաւորէն, որ մինչ դեռ յերուսաղէմ յերիքով իջանէր՝ վիրաւորեցաւ յաւազակաց, ցուցանի՝ Թէ ոչ օտարոտի ոք էր վիրաւորին Քրիստոս, այլ մերձաւոր և դարմանիչ նորա: Որպէս և ինքն իսկ ասաց ցփարիսացին, Թէ ուղիղ դատեցար:

Եւ յոչխարէն և ի ղրամէն, որ կորուսեալ էին և գտան, յայտ է՝ եթէ յիւրան եկն և ոչ յօտարոտից:

Ծ. Դարձեալ, զմիւս բանն Առաքելոյ, զոր ուղիղ ասացեալ է, խախտեն. Թէ յորժամ խաւխանեսցէ զամենայն տէրութիւնս և զիշխանութիւնս. զի պարտ է նմա Թագաւորել, մինչև դիցին ամենայն Թշնամիք նորա ի ներքոյ ոտից նորա: Եւ ասեն՝ Թէ տէրն աշխարհի խաւխանէ զինքն և զաշխարհ իւր յաւիտեան:

Ո՛ անմիտք. եթէ յիւր ձեռս է շինելն և քակելն, և զայս աշխարհ՝ վասն զի ծերանայ և հնանայ՝ քակիցէ, ընդէր ոչ այլ նոր և գեղեցիկ քան զայս առնիցէ: Թէ մինչ չէրն աշխարհ՝ գիտաց խորհել և առնել բանիս, այժմ զի լուաւ և տեղեկացաւ՝ Թէ գոյ այլ աշխարհ օտարին՝ գեղեցիկ և ազնուականագոյն քան զնորայն, զմէ ոչ առնիցէ լաւագոյն քան զնորայն, այսպէս զի և ընտանիք օտարին նորայոցն ցանկանայցեն՝ վասն գեղեցկութեանն և պայծառութեան: Զի որպէս զառաջ իննկարօղ եղև բանիս առնել,

այնպէս Թէ կամի և այլ ազնուագոյն քան զայն կարօղ է առնել: Եւ որ այնպէսն կարօղ է, ընդէր խափանիցէ զանձն՝ լինել պատուանդան ընդ ոտիւք այլոյ, և ոչ առնիցէ իւր աշխարհ նոր և գեղեցիկ քան զառաջինն, և Թագաւորիցէ ի նմա յաւիտեան:

Բայց Թէ արգելուցու զնա օտարն: Եւ Թէ այնչափ զօրագոյն քան զնա է՝ մինչ զի և արգելուլ կարիցէ, ապա ոչ է տէր ամենայնի՝ որպէս ասէ ինքն, այլ ծառայ այլոյ տէրութեան:

Կամ զայն ուստի՞ ցուցանիցէք՝ Թէ աստուած օրինացն քակելոց է զաշխարհս: ԵԹէ վասն գի գրեալ են ի մարգարէսն նորա՝ ԵԹէ երկինք գալարեսցին իբրև զմագաղաԹ, և երկիր իբրև զմոմ հալեսցի, այլ և զայն գրեալ է ի մարգարէսն՝ Թէ արարից երկինս նոր և երկիր նոր: Ուստի յայտ է ըստ մարգարէուԹեանն, Թէ զայս քակէր՝ այլ նոր առնէր, որպէս և դուք իսկ ձեզէն վկայեցէք:

Բայց և միւսումն ևս՝ արարէք պատասխանի, Թէ ո՞ իցէ որ զիշխանուԹիւն-

սըն և զպետութիւնս խափանիցէ: Եւ եթէ դուք ոչ գիտիցէք յԱռաքելոյ՝ զի Քրիստոս խափանէ զիշխանութիւնան, և դնէ զամենայն Թշնամիս ի ներքոյ ոտից իւրոց: Եւ ոչ այն՝ զորմէ դուքն ասէք, որ չէն իսկ և ոչ արարեալ ինչ նորա, և ոչ առնէ. այլ Տէր մեր և Հայրն իւր, որք կարող են առնել զամենայն, և հնազանդեն զամենայն Թշնամութիւնս ընդ ոտիւք:

ԺԱ. Եւ դարձեալ՝ Թէ ձեռնհաս ինչ ոք էր օտարն, որպէս Մարկիոնն ասէ, ազատել զհոգիսն ի տանջանաց անտի, ընդէր ոչ բնութեամբ իսկ ձեռն արկ և կորզեաց զոգիս տանջանաւորացն յինքն. այլ նախ Քոյլ տայր՝ զի տանջիցին, և ապա հանէր. և զայն ոչ համարձակութեամբ, այլ կասկածանօք և արեան զընոց գնելով:

Այլ, ասեն, վասն ողորմութեան արար. տեսեալ զոգիս տանջանաւորացն նեղեալս ի դժոխս, առաքեաց զորդին իւր՝ փրկել զնոսա: Եթէ փրկեաց զնոսա, վերջինքն զի՞ գործիցեն, որ ի նոյն դժոխս անկանելոց են: Եթէ վասն ողորմութեան ա-

բար՝ զոր արարն, պահեալ իցէ զգալուստ որդւոյն իւրոյ մինչև ի վախճան աշխարհի, և ապա առաքեալ, զի ի վերայ ամենեցուն առնէր ողորմութիւն, և հանէր ի կեանս, քան փութացաւն և առաքեաց ի կէս դարին, և չիք հնար վերջնոցն՝ որ անկան անդր՝ Թէ ելանիցեն. քանզի այնուհետև զգուշացաւ նոցա տանջիչն:

Այլ յոյժ մոլորեալ են, և մոռացան զայն՝ Թէ չիք ծառ չար որ առնիցէ ըզպտուղ բարի. և ոչ քաղեն խաղող ի փշոց, և ոչ Թուզ ի տատասկէ. և իւրն զիւրն ընդունի:

Եւ միւսն ևս զոր ասեն՝ Թէ ոչ ընդունին դժոխք զկեանս, վասն այնորիկ ել ի խաչ, զի իջեալ իբրև զմեռեալ՝ ընկալցին զնա դժոխքն:

Իսկ արդ ոչ ոք առաքիցի անդր կենդանի, կամ մարդիկ յանցաւորք, կամ սատանայ և դևք կենդանւոյն. Թէ այնպէս իցէ, և զնոսա ոչ ընդունին:

Կամ Յեսուն իբրև զմեռեալ յո՞ չոգաւ. մի՞ Թէ ի գերեզմանն երկրի, զոր զիրք դըժոխք կոչեն. և ահա անդ չեն ոգիք, և ոչ

հուրոր տանջիցէ զնոսա: Եւ եթէ ասիցեն, իգեհենն չոգաւ իբրև զմեռեալ, չիք մուտ բանիցն. զի ոչ տայ Թոյլ Ազաբեալ՝ Թէ երկուս մահս մեռաւ, այլ մի՝ զոր մարմնովն կրեաց զխաչին, և հնազանդ եղև մահու խաչին: Եւ ոչ դնէ՝ Թէ այլ ոք դատեաց զնա և արկ ի գեհեն, այլ Թէ Հայր ետ զնա ի մահ: Եւ դարձեալ, Թէ ինքն ետ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց, մահուամբ մարմնոյ, և ոչ տանջանօք ոգւոյ:

ԺՌ. Այլ այնչափ, ասեն, հակառակ են օրէնք արդարոյն՝ շնորհացն Յեսուայ, զի անդ երանութիւն մեծատանց տայ, և եղկութիւն աղքատաց. և աստ երանութիւն աղքատաց, և վայ մեծատանց: Անդ ասէ, մի սպանաներ. և աստ ասէ, Թէ որ բարկանայ ընկերի իւրում տարապարտուց, պարտաւոր է գեհենի: Անդ ասէ, մի շնար. և աստ ասէ՝ Թէ որ հայի ի կին մարդ առ ի ցանկանալոյ, անդէն շնացաւ ի սրտի իւրում: Անդ ասէ, մի երդնուցուս աստ, այլ հաստուաջիր Տեառն զերդմունս քո. և աստ ասէ, ամենևին մի երդնուցուք:

Եւ արդ զիա՛րդ իցեն օրէնքն և շնորհք միմեանց հակառակք: Զի Աբրահամ վասն զօտարս և զաղքատս ընդունելոյ՝ բարեկամ Աստուծոյ կոչեցաւ. և Քրիստոս ասէ՝ Թէ աղքատն ի գոգն Աբրահամու չոգաւ, և մեծատունն ի տանջանս հրոյ: Քրիստոս աղքատաց երանութիւն տայ, և ողորմածաց՝ Թէ ողորմութիւն գտանելոց են. և օրինացն աստուած այնչափ ցուցանէ ողորմութիւն, մինչև զգրաստու Թշնամւոյն անկանելոյ բեռամբ՝ չհրամայէ գանց առնել. Թէ և ի ժողովրդենէ ոք իցէ, և եթէ յօտար ազգաց. և զուլ ի մօր կամն չհրամայէ եփել, և ոչ զհաւ ի ձուոց կամ ի ձագուց վերայ նստեալ՝ ի միասին միանգամայն առնուլ: Անդ ասէ, սիրեացես զընկեր քո իբրև զանձն քո. և աստ ասէ, սիրեացես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և սիրեացես զընկեր քո իբրև զանձն քո. զի զայսց երկուց պատուիրանաց կախեալ կան օրէնք և մարգարէք. և ասէ, ոչ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս, այլ լնուլ զնոսա:

Արդ զիաւրդ հակառակ օրինացն իցէ, որ եկն լնուլ զօրէնս և զմարգարէս: Եւ ասէր ցբորոտն զոր սրբեաց, Թէ երթ մատո պատարագ վասն սրբութեանդ քոյ, որպէս պատուիրեաց Մովսէս յօրէնսն: Եւ ցօրինականն, որ եհարց ցնա, Թէ զինչ ինչ արարեալ՝ զի զկեանս յաւիտենից ժառանգեցից, ասէ. զպատուիրանս օրինացն գիտես: Եւ հարցեալ կրկին՝ Թէ զոր պատուիրանս, ասէ. զմի շնարն, զմի գողանար, զմի սպանաներ: Որով յայտ արար՝ եԹէ ոչ հակառակ օրինացն ուսուցանէր, այլ նմին միաբան:

Դարձեալ, չբարկանալն չսպանանելոյն ոչ եԹէ հակառակ ինչ է, այլ կարի քաջ միաբան. զի Թէ ոչ ոք բարկանայցէ, և ոչ զգործ սպանութեան մտաբերէ: Նոյնպէս և ոչ ցանկանալն չշնալոյն ոչ եԹէ ընդդիմակաց ինչ է, այլ առաւել հաւանագոյն. զի եԹէ ոչ ցանկանայցէ, և ոչ ի գործ շնութեան ժամ: Եւ ամենևին չերդնուլն՝ սուտ չերդնլոյ ոչ եԹէ ընդդէմ ինչ է, այլ յոյժ ընկերակից. զի եԹէ ոչ սովորիցի ոք ստէպ երդնուլ, և ոչ սուտ

երբէք երդնու: Անդ քանզի յանուն կռոցըն երդնուին, ասէ. հաստուածիր Տեառն զերդմունս քո: Ասէ. յիս երդնուցուս՝ որ կենդանի եմ, և մի՛ ի կուռան՝ որ ոչ են կենդանիք: Իսկ աստ զի կատարեալս առնիցէ Քրիստոս զիւր աշակերտեալսն, ասէ. ամենևին մի՛ երդնուցուք, այլ եղիցի ձեր այոն այո, և ոչն ոչ. և Ըէ որ ինչ աւելի է քան զայն, ի չարէ անտի է: Եւ Ըէ որ աւելի քան զայոն և զոչ է՝ ի չարէ անտի իցէ, որչափ ևս առաւել որ սուտ յահաւոր անունն երդնուցու:

Եւ դարձեալ՝ չբարկանալովն և չցանկանալովն, զոր ուսոյցն՝ Յեսու, այնչափ առ աստուածս ունի զօրինացն աստուած, զի զնորա ասացեալսն հաստատէ յաւետարանի. և նոքա մոլին Ըէ հակառակ ուսուցանէ նոցա Յեսուն: Նոյնպէս վասն կերակրոց և ի հնումն և ի նորումս գտանեմք, զի յԱստուծոյ տուեալ են ի դարման: Անդ ասէ. զեն և կեր զամենայն

(*) ուսուցին.

անասուն և զթռչունս ուտելիս. և աստ ասէ՝ Թէ ամենայն ինչ որ մտանէ ընդ բերան մարդոյ, ոչ պղծէ զնա. այլ որ ինչ ելանէ ի բերանոյ անտի, այն պղծէ զմարդն: Եւ յամենայնէն իմեքէ մի ինչ և միան է. և եթէ պիղծ ինչ էին կերակուրքն նախ ինքն իսկ ոչ ճաշակէր ի նոցանէ, և ապա այլոց հրաման տայր ճաշակել:

Իսկ եթէ ոչ ուրեք գտանեմք ասացեալ նորա ի նորումն՝ Թէ զայս ինչ մի՛ ուտիցես, յայտ է եթէ զխտրութիւնս կերակրոցն՝ որք ըստ օրինացն էին՝ դադարեցոյց, այնու զի ընդ մեղաւորս և ընդ մաքսաւորս և ընդ փարիսացիս ուտէր և ըմպէր: Եւ զզատկէն ասէր ցաշակերտան՝ Թէ ցանկանալով ցանկացայ ուտել զզատիկս զայս ընդ ձեզ: Մի՛ Թէ և զզատկէն ասիցեն՝ Թէ ձուկն էր և ոչ գառն. քանզի Քրիստոս զամենայն կերակուրս ուտէր անխտիր, որպէս յայտ է յաւետարանին:

Իսկ Թէ ասիցեն՝ Թէ Քրիստոս յետ յարութեանն եկեր զձուկն և ոչ զմիս, վասն այսորիկ և մեք զձուկն ուտեմք և ոչ զ-

միս, ասելի է՝ Թէ ապա և նոքա այժմիկ մի՛ կերիցեն ձուկն, այլ ի յարուԹեան անդ, որպէս և նա յետ յարուԹեանն կերաւ ձուկն՝ զոր եգիտ առ ձկնորսան:

Այլ զի և ձուկն միս է՝ այն ամենեցուն յայտ է. զի որոյ մարմին և արիւն, ճարպ և ոսկերք են, հարկ է՝ Թէ մսեղէն է և կենդանի: Եւ է ձուկն՝ որոյ իբրև խոզի պառակաց Թամբ ի վերայ կողից կայ. և արիւն այնչափ ելանէ, որչափ յոչխարէ ոչ ելանէ. և կերակուրս ժանտս զայն ուտէ, զոր և ոչ գազանք և անասունք ուտեն: Եւ զձուկն իսկ առաւել պարտ է գազան կոչել, որ զիւր համազգիսն անխըտիր ուտէ. և զի այնչափ սուրբ են անասունքն քան զնա՝ զի ի նոցանէն զոհք և ողջակէզք մատչին Աստուծոյ, և ի ձկանց ոչ ինչ այնպիսի:

Այլ և ի խորհուրդ և յօրինակ մեծի խորհրդոյն՝ որ յայտնելոց էր, ոչխար և արջառ տպաւորէին, և ոչ ձկունք. որպէս զառն՝ որոյ արեամբ փրկեցան անդրանիկք որդւոցն Իսրայէլի յԵգիպտոս, և խոյն՝ որ սպանաւ փոխանակ Իսահա-

կայ, խորհուրդ էին ճշմարիտ զառինն՝ որ բառնայ զմեղս աշխարհի. և երինջն՝ զոր արտաքոյ բանակին սպանանէին յողջակէզ, ըստ որոց օրինակի և Ի֊բիստոս արտաքոյ քաղաքին չարչարեցաւ: Եւ Դաւիթ ասէ. հաճոյ եղիցի Տեառն իբրև զորթ մատաղ, և ոչ իբրև զձուկն փափուկ. զի ձուկն Թէպէտ և գայ յառակ, ի գերեզմանի առակ գայ և ոչ ի կենդանութեան. ըստ այնմ զոր Տէրն ասէ՝ Թէ որպէս եղև Յունան ի փոր ձկանն զերիս տիւս և զերիս գիշերս, նոյնպէս պարտ է որդւոյ մարդոյ մտանել ի սիրտ երկրի, և լինել անդ զերիս տիւս և զերիս գիշերըս: Եւ այսպէս ոչ գտանեմք ի գիրս սուրբս՝ եթէ զձուկն սրբեաց և ետ ի կերակուր, և ի մսոյ հրաժարեցոյց իբրև ի պղծոյ և ի խոտանէ իմեքէ:

Այլ և յօրէնսն գրեալ է՝ եթէ ետու ուտել ձեզ զանասունս և զԹռչունս իբրև զբանջար խոտոյ. բայց միայն մեռելոտի և արիւն մի՛ ուտիցէք, զի շունչ անասնոյ արիւն իւր է: Եւ առաքեալքն ի Պղծին զոր յԵրուսաղեմէ յԱնտիոք գրե-

ցին, զնոյն հաստատեցին՝ Թէ պահել ձեզ յարենէ և ի հեղձուցելոյ և ի մեռելոտւոյ և ի պոռնկութենէ. և չասացին՝ Թէ ի մսոյ: Նա և յօրէնսն զուտելի անասունսն սուրբս կոչէ և զչուտելիսն պիղծս. իբր ոչ ևՒէ պիղծք ինչ բնութեամբ էին, այլ զչախորժականսն մտաց մարդկան պիղծս կոչէ. զի գիտէր, Թէ է ինչ՝ զոր ախորժեն ուտել, և է ինչ՝ զոր ոչ ախորժեն ուտել. և ըստ նմին նմա օրէնս եդ:

Այլ զի չիք ինչ պիղծ ի կերակրոցն, զայն ի Տեառնէն լուիցուք. Թէ չիք ինչ որ մտանիցէ յորովայն մարդոյ՝ Թէ կարիցէ զմարդն պղծել. այլ որ ինչ ելանէ ի մարդոյ անտի, այն պղծէ զմարդն: Եւ Առաքելոյ յառաջագոյն հայեցեալ մարգարէութեամբ ի տարապարտ հպարտութիւն աղանդաւորացն, ասէ. կարճեն ըզկերակուրս, և արգելուն զամուսնութիւն՝ զոր Աստուած ապար ի վխիՒարութիւն հաւատացելոց, որ գոհութեամբ վայելեն, զի սրբի բանիւ Աստուծոյ և աղօթիւք: Իբր ոչ ևՒէ պիղծ ինչ իցէ և սրբիցի. այլ որ նոցա պիղծն կարծէր վասն զոհելոյն,

և զայնմանէ ասէ Առաքեալ՝ Թէ սրբի բանիւն Աստուծոյ և աղօթիւք: Վասն որոյ ի միւսում Թղթին ասէ՝ Թէ յորժամ կոչիցէ ոք զձեզ յանհաւատից և երթայցէք, զամենայն ինչ զոր դնիցեն առաջի ձեր, կերիջիք· և մի խղճիցէք: Ուստի յայտ է Թէ մի ինչ յամենայնէ միսն էր: Եւ դարձեալ՝ Թէ որ ինչ վաճառիցի ի մակեղոնի, որ է ի մսավաճառանոցի, կերիջիք. և մի խղճայցէք:

Այլ առեն, Թէ ասէ Առաքեալ՝ Թէ լաւ է ոչ ուտել միս, և ոչ ըմպել գինի, և ոչ որով եղբայրն իմ գայթակղեսցի. և դարձեալ Թէ ոչ կերայց միս յաւիտեան, որով եղբայրն իմ գայթակղիցի:

Ասացուք. եԹէ ձկամբն գայթակղիցի եղբայրն, ապաքէն և զայն չիցէ պարտ ուտել. քանզի վասն գայթակղուԹեան չէ պարտ ուտել, և ոչ Թէ վասն զի պիղծ ինչ կայցէ ի կերակրոցն: Եւ մանաւանդ գինւով որով բազումքն իսկ զեղխանան. և ոչ այնչափ միսն յանցուցանէ, որչափ գինին զեղծէ զըմպելիսն, և գայթակղեցուցանէ զտեսօղսն: Եւ զինքդ իցէ, զի ի մսոյ պա-

հեն և ի գինւոյ ոչ զգուշանան Մարկիոնքն. զի բանն յերկոցունց վերայ կայ. ասէ ոչ ուտել մխս, և ոչ ըմպել գինի. և զնովիմբ ածեալ զպատճառսն, ասէ, Թէ և ոչ, որով եղբայրն իմ գայթակղիցի կամ տըկարանայցէ: Որով ցուցանի՝ Թէ վասն գայթակղելոյն եղ զայնպիսի միտս ի միջի, և ոչ եթէ զկերակուրսն պիղծ համարէր, որ ասէն՝ Թէ է որ հաւատայ ուտել զամենայն ինչ: Թէ հաւատաս՝ ասէ՝ եթէ բանիւ Աստուծոյ և աղօթիւք սրբին կերակուրքն, կեր և մի խտրեր: Ապա եթէ տկարացեալ ես հաւատովք և խղճես, բանջար ևեթ կեր, և մի գայթակղիր: Եւ յորժամ ոչ հաւատասն ուտել զամենայն իբրև զսուրբ, մի իշխեր դատել զայն որ ուտէն. որպէս և որ ուտէն՝ ոչ պարտի անգոսնել զքեզ իբրև զտկար, որ ոչդ հաւատաս ուտել զամենայն ինչ իբրև ըզսուրբ: Քանզի ոչ եթէ կերակուրքն կացուցանեն զմեզ առաջի Աստուծոյ, և ոչ հանեն յերեսաց Աստուծոյ. այլ կամ հաւատքն կամ խիղճ մտացն և գայթակղութիւն:

ԺԹ. Իսկ ձեր ուխտաւորքն, ասեն, ընդէր են մահատք:

Մեր ուխտաւորքն ոչ վասն այնորիկ հրաժարեն ի կերակրոց՝ եթէ զկերակուրսըն պիղծս համարիցին և ի հիւղեայ իբրև ի չարէ իմեքէ: եթէ վասն պիղծ ըզկերակուրսն համարելոյ ուխտաւոր էին, և ոչ ուխտաւորութիւնն նոցա յուխտաւորութիւն համարէր: Այլ կարճեն զանձինս ի կերակրոց, զի զսրբութիւնն՝ զոր ի մտի եդին պահել՝ դիւրաւ պահիցեն:

Ծոր սակս և հարքն մեր սուրբ եպիսկոպոսք սահմանեցին կանոնս. եթէ ոք հաւատացեալ մին ոչ ուտիցէ, և բանջար ընդ մսոյ եփեալ իցէ, և ի բանջարոյն ոչ կամիցի ճաշակել, նզովեալ լիցի: Ընդէր. նախ՝ զի զԱստուածոյ տուեալ զկերակուրսն ոչ իշխիցէ խոտան համարել. և ապա՝ զի տարապարտ հպարտութեամբն ոչ վնասիցի, որպէս թէ այնու առաւել ինչ իցէ քան զայլ մարդիկ:

Նա և կուսանք սրբոյ եկեղեցւոյ ոչ վասըն այնորիկ պահեն զկուսութիւն, եթէ զամուսնութիւնն տուեալ յԱստուծոյ՝ պղծ-

ծուԹիւն համարիցին, որպէս Մարկիոնն և Մանի և մծղնեայք. զի եԹէ յայն միտս ուխտաւորք էին, ապա և կուսուԹիւնն չէր յանգարի կուսուԹեան. այլ վասն առաւել սիրելոյ զԱստուածն, ի բարւոք արարածոց Աստուծոյ հրաժարեն. զի նմանեալք հրեշտակաց Աստուծոյ, ուր ոչ արուն է և ոչ էգ, ցուցանիցեն և յերկրի զնոյն առաքինուԹիւն. ըստ այնմ՝ ԹԷ են ներքինիք, որ զանձինս իւրեանց արարին ներքինիս վասն արքայուԹեանն երկնից, լինել ի յարուԹեանն հաւասար հրեշտակաց: Եւ Առաքեալն՝ այր հաւատարիմ կոչէ զկուսանսն. բայց հայեցեալ ի բնուԹիւնն՝ չիշխէ յայտ հրաման տալ, այլ ակնարկելով յօժարեցուցանէ. որպէս և Տէրն ակնարկէ, այլ ոչ ստիպէ:

ԺԹ. Այս ամենայն վասն Մարկիոնաց աղանդին ասացաւ, որք զամուսնուԹիւն և զմսակերուԹիւն խոտեն. և ուխտաւորեալք հանդերձ աշխարհականօքն ի կուսուԹիւն, ստեն ուխտեն: Զի առ չժուժալոյ ցանկուԹեանն, արկանեն միւսանգամ զնոսա ընդ ապաշխարուԹեամբ:

Արդ եթէ օրինաց ոչ հաւատայցեն, որ ասէ՝ եթէ Թողցէ այր զհայր և զմայր իւր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքին ի մարմին մի, Յետւայն ընդէր ոչ հաւատայցեն՝ որ զնոյն հաստատէ, և յաւելու՝ Թէ զոր Աստուած զուգեաց, մարդ մի՛ մեկնեացէ: Արդ հաւատացելոց՝ որ զճշմարտութիւնն կամիցին ցուցանել՝ նախ գործ այն է, զի զիրան՝ որպէս և իցեն՝ նոյնպէս խոստովանիցին. և ապա Թէ այրընտիր լինիցին յառաքինութիւնն այն ընդունելի է: Եւ ոչ որպէս նոքա, որք մեծապէս կոտորեն՝ Թէ մեք անդստին իսկ յաւազանէն ուխտաւորիմք ի մսակերութենէ և յամուսնութենէ. և ապա լուծանեն զուխտն, և գան մտանեն ընդ ապաշխարութեամբ:

Եւ եթէ հարցանես՝ եթէ տանջանք գոն բարւոյն. ասեն. ոչ գոն: Եւ եթէ ի տանջանաց կասկած չիցէ, ապաշխարութիւն առ ինչ իցէ. ոչ ապաքէն յայտ է՝ Թէ ի տանջանաց ոչ երկնչին, և ի մեղան անխըտիր են: Բայց որոյ տանջանք չեն, յայտ է՝ Թէ նորա և պարգևք չգոն:

Այլ մեք, ասեն, յայն սակս փախեաք յարդարոյն, զի ահագին սպառնալիս ըսպառնայ յօրէնսն իւր՝ Թէ հուր վառեալ է ի բարկութեանն իմում, և այրիցէ մինչև ի դժոխս ներքինս. և Թէ այս ամենայն պահեալ էր ի գանձի իմում. և այլուր՝ Թէ հրով դատի Աստուած:

Ո՛անմիտք և մոլորեալք. Թէ վասն ահագին սպառնալեացն փախչիցիս յօրինացն Աստուծոյ, յորժամ Յիսուս ևս աւելի սպառնալիս քան զայն սպառնայցէ, հուր անշէջ և որդն անմահ և տանջանս յաւիտենականս, յո՞ ունիցիս փախչել: Եւ յորժամ ի հնում և ի նորումս զնոյն սպառնալիս և զնոյն խոստմունս բարութեանց գտանեմք, ո՞չ ապաքէն յայտ յանդիման ցուցանի՝ Թէ մի տուիչ է հնոյն և նորոյս:

ԺԵ. Այլ և յարութեան մարմնոց չհաւատալ ուստի՞ իցէ Մարկիոնի և Մանեայ և այլոցն նոյնպիսեաց:

Ասեն. Առաքեալ ասաց՝ Թէ մարմին և արիւն զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն, և ոչ ապականութիւն զանա-

պականութիւն. և դարձեալ՝ Թէ ելանել ի մարմնոյս ցանկացեալ եմ և ընդ Տեառն լինել: Որով յայտ է, ասեն, Թէ վասն զի ի հիւղեայ է մարմինս, յայն սակս չառնի արժանի յարութեան:

Եւ Թէ վասն զի ի հիւղեայն է մարմին՝ չառնիցի արժանի արքայութեան, ապա՝ և վասն զի յարդարոյն են ոգիքն՝ մի լիցին արժանի արքայութեան բարւոյն: Այլ յանդիմանէ զնոսա նոյն Առաքեալ՝ անդէն ինձին տեղւոջ. որոյ իբրև մատամբ ցուցեալ զմարմինն, ասէ՝ Թէ պարտ է ապականութեանս այսմիկ զգենուլ զանապականութիւն, և մահկանացուիս այսմիկ զգենուլ զանմահութիւն: Ուստի յայտ է Թէ ոչ զոգիսն կոչէ ապականացուս և մահկանացուս, այլ զմարմինն: Եւ ի միւսում Թղթին ասէ՝ Թէ ամենեցուն մեզ յանդիման լինել կայ առաջի բեմին Քրիստոսի, զի ընկալցի իւրաքանչիւր ոք իւրով մարմնով զինչ և գործեաց յառաջ, եԹէ բարի և եԹէ չար: Տեսանես զի մարմնով հանդերձ ասէ կրել զբարիս կամ զչարիս, և ոչ միայն ոգւով:

Այլ ասեն. ասաց Առաքեալ՝ Թէ ապականութիւն զանապականութիւն ոչ ժառանգէ:

Ո՛վ բանաքաղ Մարկիոն. որ զմին լսէ և զմիւսն առնուգանէ: Եթէ ուղիղ մտօք լսէր զայն՝ Թէ ապականութիւն զանապականութիւն ոչ ժառանգէ, կարէր կալ ի վերայ ճշմարտութեանն: Զի Առաքեալ այնչափ առուգէ գյարութիւն մարմնոյ, մինչ զի և բազում օրինակս ի մէջ բերէ:

Նախ առաջին և բուն զՔրիստոսի յարութիւնն՝ եթէ Քրիստոս մեռաւ ըստ գըրոց և Թաղեցաւ և յարեաւ յաւուր երրորդի: Եւ զեռեղեալ անդէն զտեղեաւն, բազում հանգամանս ցուցանէ վասն յարութեանն հաստատութեան. և առաւել զայն զոր իրրև յունկանէ Մարկիոնի և Մանեայ աղաղակէ և ասէ. եթէ մեռեալք ոչ յառնեն, զինչ գործիցեն այնոքիկ որ վասն մեռելոցն մկրտեցան: Դուք, ասէ, ասէք՝ Թէ մարմինք վասն զի ի հիւղեայն են, ոչ յառնեն. եթէ մարմինքն մահկանացուք ոչ յառնիցեն, հոգիքն կենդանիք վասն մարմնոցն մեռելոց ընդէր դաւանի-

ցեն. և կամ մարմինքն մահկանացուք ընդ ոգւոցն կենդանեաց վասն էր մկրտից՝ն, Թէ որպէս ասէքդ՝ չիցեն յառնելոց մարմինքն մահկանացուք:

Այսպէս իմանալի է բանս, և ոչ որպէս Մարկիոնն դանդաչէ՝ Թէ փոխանակ երախայի մեռելոյ, պարտ է կենդանւոյն մերձաւորի իւրում մկրտել. զի անդ նմա համարիցի: Զոր և առնեն իսկ Մարկիոնքըն: Այլ յանդիմանէ զնոսա բանն տէրունական, որ ասէ՝ Թէ ոք ոչ ծնցի վերստին՝ ոչ կարէ տեսանել զարքայութիւնն Աստուծոյ. և դարձեալ. եԹէ ոք ոչ ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ, ոչ մտցէ յարքայութիւնն երկնից: Որով յայտ է Թէ իւրաքանչիւր ումեք պարտ է մկրտել, և ոչ այլում ընդ այլոյ:

Եւ դարձեալ ի սերմանեացն առակէ յայտնի ցուցանի յարութիւն մարմնոց. Թէ որպէս զսերմն, զոր սերմանես, ոչ այլ ընդ այլոյ գայ, Թէպէտ և բազմապատիկ վայելչութիւն զգենու. այլ ոչ երբէք սերմանեցեր զգարի և հնձեցեր ցորեան. և ոչ սերմանեցեր կորեակ, և հնձեցեր

հաճար. այլ զոր սերմանեցեր, զնոյն հընձեցեր. ըստ նմին օրինակի, ասէ. և մարմինն որ անկաւ՝ նոյն և յառնելոց է:

Դարձեալ, և մարմին և արիւնն ասել Առաքելոյն՝ Թէ զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգէ, և ոչ ապականութիւն զանապականութիւն ժառանգէ, ոչ յայն միտս իմանալի է, յոր Մարկիոնն առնու Թէ վասն զի ի հիւղեայն են մարմինքն, ոչ յառնեն. այլ յայլ երկուս օրինակս:

Մի յայն՝ Թէ մինչ դեռ ի մարմնոյ խորհուրդս և ի գործս իցէ մարդն, շնչաւոր է և մարմին և արիւն. և զի ըստ մարմնոյն ևեթ խորհի և գործէ, չէ արժանի մտանելոյ յարքայութիւն երկնից: Որպէս և ի միւսում Թղթին գրէ Առաքեալ առ աշակերտեալսն՝ Թէ որ մարմնովն են, զմարմնոյ խորհուրդս խորհին. բայց դուք ոչ էք մարմնով, այլ հոգւով: Մի Թէ յորժամ զայս գրեաց առ աշակերտեալսն՝ կէսք էին ի մարմնի, և կէսքն չէին: Ուստի յայտ է Թէ ի մարմնի ամենեքեան էին, այլ ի գործս մարմնոյ և հոգւոյ ոչ բոլորեքեան:

Դարձեալ ի միւս ևս միտս իմանալի է, եթէ ոչ շաղղով և արեամբ ուռուցեալ յառնեն մարմինքն, այլ նորոգեալք յարութեամբն՝ ապականացուք զանապականութիւն ժառանգեն: Որպէս և ածէ իսկ զնովիմբ՝ թէ փող հարկանի, և մեռեալք՝ որ ի Քրիստոս յառնեն անապականացուք և մեք նորոգիմք:

Որով ցուցանի՝ թէ մարմինք նորոգեալք յարութեամբն, ազատացեալ յամենայն կարեաց՝ յառնեն: Եւ ընկղմի մահ ի պարտութիւն, յորժամ ապականեալքն զանապականութիւն զգենուցուն, և մահկանացուքս զանմահութիւն, և սերմանեալք տկարութեամբ՝ զզօրութիւն, և վարեալք անարգութեամբ՝ զփառաւորութիւն: Եւ չիք մարմին՝ որ ի հող մնայցէ. այլ իւրաքանչիւր ոգւոց զանձնիւր մարմին զգեցեալ, յաւան քթթել՝ կայցեն առաջի աթեղ ատենին, ոմանք ի կեանս յաւիտենականս և ոմանք ի պատիժս դատաստանի:

ԺԶ. Մարկիոնս այս ի պոնտացւոց աշխարհէ անտի եղեալ էր, որդի եպիսկոպոսի: Եւ ապականեալ զկոյս մի, զը-

նաց փախստական վան մերժելոյ զնա յեկեղեցւոյ՝ իւրոյ իսկ հօրն: Եւ երթեալ ի Հռոմ խնդրել ապաշխարութիւն յայնմ ժամանակին, և չհասեալ այնմ՝ զրգռեցաւ ընդդէմ հաւատոց: Եւ եղեալ երիս առաջս, ուսուցանէ զբարւոյ և զարդարոյ և զչարէ: Եւ զնոր կտակարանս օտարոտի համարի ի ննոյն. և յայնմանէ, որ ի նմայն խօսէր, զյարութիւն մարմնոյ արհամարհէ: Եւ մկրտութիւն ոչ մի միայն տայ, այլ և երիս յետ յանցանելոյ. և փոխանակ երախայից մեռելոց՝ այլոց ստիպէ առնուլ կնիք: Եւ այնչափ յանդգնեալ՝ մինչև կանանց հրամայէ մկրտութիւն տալ՝ զոր ոչ ոք իշխեաց յայլոց աղանդոցն առնել. ոչ կնիք կրկին և երեքկին տալ, և ոչ զկանայս առ քահանայս ունել:

Նա և նմա իսկ ուստի իցէ քահանայութիւնն, որոյ ապականեալ զկոյս՝ տարագիր եղև յեկեղեցւոյ յիւրմէ հօրէ, մինչև ապաշխարութեան ևս հասանել ոչ եղև արժանի: Եւ յիրաւի չեղև արժանի, զի ի պատգամս Հոգւոյն սրբոյ իշխեաց ձեռն արկանել, զկէսն հատանել ընկենուլ իբ-

ևև զխոտան, և զկէսն ընտրել առնուլ իբրև զպիտոյս: Եւ զայն ոչ գիտէ՝ Թէ յոյժամ ի մարմնոց մատն մի կտրիցէ առնուցու, զամենայն մարմնոյն վկայէ՝ սակաւ ինչ մասնն կարեալ: Առաւել ևս յանդիմանէ զնա կատարիչն օրինաց, որ ասէր՝ Թէ ոչ եկի լուծանել զօրէնս և զմարգարէս, այլ լնուլ զնոսա. և Առաքեալն, որ ասէ՝ Թէ Քրիստոս է խաղաղութիւնն մեր, որ արար զերկոսին ի մի: Որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՎԵՐՋ

ԵԶՆԿԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԽՐԱՏՔ

Ամուսնացեր ես յիւր կամացն որպէս ի Աշնամուոյ զգուշանայ :

Լաւ է յստակ խորհրդով ննջել, քան պիղծ խորհրդով աղօթս մատուցանել, և վարձս ոչ առնուլ և իզուր աշխատել :

Մխեա զմարմինդ նեղութեամբ, և զսիրտդ երկեղիւն Աստուծոյ, զի աներկեղ լիցիս ի մահաբեր նետից սատանայի:

Որ զերկեղածն սիրէ, սիրոյ արձան կանգնէ առ Աստուած, և անհաշտ Աշնամութիւն առ սատանայ:

Ձսէր և զերկեղ բնութիւն աթա քեզ. որ խոբէութեամբ չաշխատիս :

Որչափ զրկիս և աշխատիս և նեղիս, և համբերես, անապական գանձ պատրաստես քեզ յերկինս. ապա Թէ տրտնջես և նեղասրտիս, իզուր աշխատիս և անվարձ լինիս :

Զօրացիր չարչարանօքն Քրիստոսի, և

համբերեա վասն նորա, զի վայելեսցես յանանց բարութիւնն :

Որ գարուն ի հանգստեան կայ, ձմեռն ի սովոյ և ի սառամանեաց սատակի :

Որ աստ զմարմինն պարարէ, ի յաւիտենական հանգիստն ոչ մտանէ :

Հնազանդեա սիրով, աղօթեա յուսով, աշխատեա հաւատով, և պայծառացիս յերկնային հարսանիսն :

Զոր ինչ Աստուած քեզ շնորհ տայ, ի պէտս կարօտելոցն ապաստարեա. զի շնորհքն աղբիւրացին, և դու փառաւորեացիս :

Կրօնաւոր մարմնաւէր՝ խոզի նման է, ի ծովայեալ մեղացն հեղձնու :

Արտասուս լուացումն է մեղաց, և յոգւոց հանելն ապաշխարութիւն. ապա որ զամենայն ժամանակս կրօնաւորական կարգօք անցուցանէ ի սուգ և ի տրտմութիւն, նա զորպիսի՞ զերանական զփառսն ժառանգէ :

Կեղծաւոր կրօնաւոր՝ պատրուակ է սատանայի. ընդ իւրեաւ ունելով զսատանայ՝ զզազրութիւն անպամոյն ծածկէ ,

և նկարակերպ պատրուակօք պատրէ ըզ-
տեսօղան : Սոքա են գայլք գառնզգեստք՝
որոց սպառնացաւ Քրիստոս ընդ անհա-
ւատան դասել :

Որ զեղբայր իւր տեսանէ և տրտում
կայ, յաղթեալ է ի կեղծաւորութենէ. որ
առանձինն նստի և զուարթ կայ, գերեալ
է ի սատանայէ :

Բերանք մեր հոտեալ են ի պահոց, և
լեզուք մեր ընդարմացեալ ի սաղմոսեր-
գութենէ. և զոր Աստուած խնդրէ՝ զայն
ոչ ունիմք, զսէր և զխոնարհութիւն. շըր-
թամբք սիրեմք զԱստուած, և ի զուր աշ-
խատիմք :

Զմիս անասնոյ ոչ ուտեն, և զեղբայրն
անյագաբար ուտեն. գինի ոչ ըմպեն, և
զհոգին արեամբ շաղախեն. զամուսնա-
ցեալսն ատեն, և պիղծ խորհրդով հանա-
պազ պոռնկին. զգեստ գյոռին զգենուն,
և ազահութեամբն այրին. յայնպիսեացն
արժան է փախչել, և ոչ հաղորդութիւն
ունել :

Զպայծառութիւն աչաց շլացուցանէ
ծուխ, և զպարծանս կրօնաւորի ընտե-

լութիւն մանկանց. եթէ զերկինս բանայ, մի մտաներ. եթէ հրեշտակական վարս ունի, մի հաւատար:

Մանուկ կրօնաւոր, որ ոչ է առ ոտս ձերոց, անջան որս է սատանայի:

Մանկագոյն կրօնաւորի մի ասեր զծածուկն քո, զի մահ է նորա:

Կրօնաւոր ուրախամիտ դև է գերգեսացի:

Մի սիրեր զյազուրդ կերակրոց կամ զըմպելեաց. ապա Թէ ոչ՝ զմարմինդ քաղաք պոռնկութեան շինես և ամրոց սատանայի:

Գինի զբազմութիւն ախտից զարթուցանէ, և զերկիւղն Աստուծոյ հալածէ:

Մի սիրեր զեղբայրն փափուկ կերակրովք կամ ըմպելեօք կամ պատուական հանդերձիւ կամ դատարկութեամբ, զի մի զկայենին ժառանգեսցես զպատիժն:

Մի տրտմեցուցաներ զոք, և մի տըրտմիր յումեքէ:

Մի բարկանար աշակերտի մեղուցելոյ, զի հիւանդն ոչ Թէ յիւր կամաց հիւանդանայ:

Աստուածսիրութիւն է առանձինն յանդիմանել :

Մի ինանաւատի լինիր յեղբայրն խրատու պատճառաւ :

Չվէրն՝ կակուղ դեղն բժշկէ, և զախտս բարեգործութիւնն :

Աշխատութիւն գոհութեամբ՝ առանց պսակի ոչ լինի :

Կրօնաւոր պճնող ասպնջական է դիւաց :

Որ մարմնական ընչից ցանկայ, պոռնկութիւն է :

Եթէ վան Աստուծոյ հալածիս, մի խէթ պահեր :

Յորժամ աղօթես՝ ընտրեա զխորհուրդըդ, և ապա սաղմոսեա :

Թէ Աշնամուոյն չաղօթես որպէս քեզ, ապա լաւ է չաղօթել :

Եթէ առնուս ինչ յումեքէ, յաւել ի սովորական աղօթան :

Դևք յինչան ժողովին, և հրեշտակք ի բաշխելն :

Ընչասիրութիւն լծակցութիւն է կռապաշտութեան :

Աղօթք ի սուրբ սրտէ զպատարագի փրկութիւն գործէ :

Մի՛ խնդրեր զհամեղութիւն կերակրոց:

Ջհրիստոս նա տեսանէ, որ զինչան ատէ :

Կրօնաւորի բերդ ամուր է անզբաղութիւն :

Եղբայրասէր կրօնաւոր ազգակցութիւն ունի առ Ջհրիստոս :

Խաղաղասէր կրօնաւոր ջահ պայծառ է եղբայրութեանն :

Որ ոխս ունի ընդ եղբօրն, դաշնաւոր է սատանայի. որ խեթիւ ննջէ՝ բարկացուցանէ զԱստուած :

Երիկունն, երբ ի մահիճան ելանես, համարեա՝ թէ ի գերեզման ես իջեալ :

Թող զխորհուրդս և զբանս՝ որ անոտիս ընթանան, և բևեռեա զքեզ ընդ երկիղն Աստուծոյ, և աժ զմտաւ զօրն դատաստանին :

Որ զեղբայրն ի մարմնաւոր կերակրոյ զրկէ, չէ ցանկացօղ սեղանոյն Ջհրիստոսի:

Որ փութայ առնուլ ինչ յուժեքէ, ոչ ունի յոյս առ Ջհրիստոս :

Եթէ խնդրէ ոք ի քէն և տաս, գոհացիր զԱստուծոյ՝ զի դու առաւել շահեցար քան զնա :

Մի՛ լինիր ծաղրածու և կատակերգակ, զի մի՛ ժառանգեսցես զանվախճան զլացն :

Խոնարհութեամբ և յուսով հնազանդել, և գիտութեամբ աշխատել՝ կատարելութիւն է :

Այլ են առաքինութիւնք, և այլ ընտրութիւնք :

Զհաց աւուրն քրտամբք հրամայեաց քեզ ուտել, և դու զկեանն յաւիտենից քնով կամիս ժառանգել : Եւթանասուն ամ է կարգեալ զկենաց քոց, և զայն ցաւօք և հեծութեամբ. դու զհազարամեայ օրն առանց ցաւոց կամիս ժառանգել :

Աշխատելոցն հրամայեաց զհանգիստն, և ոչ որդնապարար մարմնասիրացն :

Նահանջեա զտրտմօղ բարդ չորակերութեամբ, և զխստութիւն սրտիդ կակղեա տքնութեամբ, և զգիճութիւն մարմնոյդ ցամաքեցո աշխատութեամբ, և ապա կարես բառնալ զխաչն Քրիստոսի : Ուստ և

գթիրտ քո՝ սիրել զեղբայրն. և այնպէս սիրեա զմարմին քո, որպէս զնենգաւոր եղբայր:

Որ զերկիղածն ատէ, և զաներկիղն սիրէ, մի չարիք են:

Եթէ ցաւակցութեամբ չսիրես զեղբայրն, մի՛ կար ընդ նմա:

Նեղեա զմարմինդ գիտութեամբ գրոյ վկայութեամբ:

Են առաքինութիւնք՝ որ ոչ են հաճոյ Աստուծոյ, և այն չարին խաբէութիւն է:

Զփափկութիւն և զհանգիստ ատեա:

Որ պէտս ունի յեղբարցն, նմա տուր:

Վաղիւն երթալոց ես ի հայրենիան, անդ հանգիր:

Յորժամ աղօթես, ծանիր թէ ընդ ո՛ւմ խօսիս, կամ զինչ խնդրես. և զխորհուրդդ ի քեզ հաւաքեա:

Յորժամ առաքէ քեզ Աստուած փափուկ կերակուր, կամ մաքուր հաց, կամ միրգ, զԲրիատոսի մասն կարօտեալ եղբօրն տուր նախ քան զքո ճաշակելն, զի Բրիատոս քեզ սեղանակից լինի:

Յորժամ նստիս ի սեղանն, խոնարհեցո

զգլուխդ մի այլ ինչ տեսաներ, բայց միայն զքեզ. և ճաշակեա զոհութեամբ:

Մի խնդրեր զհամեղութիւն կերակրոց և զյագենալն, այլ միայն՝ որ զվտանգն բառնայ:

Հանդերձ քո մի լիցի առ ի պճնել, այլ միայն առ ի պէտս մարմնոյդ, որպէս զայն՝ որ զմեռեալն ծածկէն: Ապա թէ զաւելորդն, և զանպատշաճն սիրես, զրկիս յերկնաւոր զարդուէն:

Եթէ հիւանդ ես կամ աշխատեալ, մի իշխանութեամբ վարիր:

Եթէ առնեն քեզ սէր, զոհացիր զԱստուծոյ. և եթէ ոչ առնեն, մի տրտնջեր, և մի տրտմեցուցաներ զանձն ուրուք. այլ նեղեա զքեզ առաւ մի լռութեամբ. զի որ պատերազմի, ժուժկալութեան պէտք են:

Զմտաւ ած զոր դատաստանին, զոր պատրաստեալ է Աստուած:

Այս կեանքս պատերազմ է:

Որ լաւն է, և զուարթ երևի:

Զայն խնդրեացուք, զոր Քրիստոս խոս-

տացաւ տալ՝ Թէ ուր եան եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի :

Ծերութիւն և հիւանդութիւն պատերազմ է ժամանակեայ. զի մարմնոյ զօրութիւն պակասեալ է, վտանգն բազմացեալ, և հանգիստն սակաւ. և կամ բնաւ իսկ ոչ. և սատանայ բորբոքէ զբոց ցասմանն, և ատել տայ զկարգն, հայհոյել զառաջնորդն, տրտնջել զեղբարցն. ասա պէտք են սիրոյ և գթութեան, երկայնամիտ լինել, և զմարտիրոսական առնուլ պսակ :

Որ բարկանայ եղբօրն, և չէ վասն Աստուծոյ, հրեշտակ անողորմ հանդիպի նմա :

Որ իսաղմոսելն ծիծաղի, կամ մարմնական խօսքերէ իմէջ, արտաքոյ լիցի սրբութեանցն՝ մինչև առողջասցի :

Լաւագոյն է զձեռն համբառնալ առ Աստուած. յորժամ աղօթեսցէ. բայց առաւել կարևոր է, որ իպէտս եղբարցն ապաստաւորեսցէ :

Զձեռս յորժամ յաղօթս համբառնաս՝

հանդէպ երեսացդ կալ, և զգուշացիր յօտար խորհրդոց :

Եթէ հաւատացեալ ես յեղբայրն, հնազանդեա նմա. ապա Թէ ոչ, իսովորականէն մի՛ ելաներ :

Պարտ է կրօնաւորին արեամբ չափ հակառակ կալ ընդդէմ մարմնական ցանկութեանց. և այնպէս պատարագ լինել Աստուծոյ :

Ֆրիատոս ասաց. ես եմ ճանապարհ և ճշմարտութիւն և կեանք. և որ կամի գալ առ իս, ուրասցի զանձն իւր, և առցէ զխաչ, և եկեսցէ զկնի իմ: Եւ որ ոչ ուրանայ զանձն իւր, ոչ կարէ բառնալ զխաչն Ֆրիատոսի, և չէ իճշմարտութենէն. և որ ոչ է իճշմարտութենէն, չկարէ ժառանգել զկեանան յաւիտենից, այլ ի ստուերի կայ և ի խաւարի շրջի :

Եւ որ զիւր կամն պաշտէ, զաշխարհական գործ ոչ կարէ վճարել, Թող Թէ զհոգևորն, Թէպէտ և մեծական վաստակօք անցուցանէ զիւր զկեանան, չկարէ հասանել կրօնաւորական կարգի: Իսկ հնազանդն՝ Թէպէտ և պղերդ և ծոյլ, կրօ-

նաւոր է, ծառայութեամբ ի տան Աստուծոյ է:

Անգործ մեղու՝ լաւ է քան զժիր պիծակ:

Որ զինքն ուրացեալ է, և իւրում պատուիրանին մտեալ՝ բառնալով զխաչն Քրիստոսի, չէ պարտ ընտրողութիւն առնել հրամանաց առաջնորդին՝ այլ անսալ երկիւղիւ. զի և Պետրոս չօգտեցաւ ինչ ընտրութեամբն: Եւ եթէ Թերի ես յառաջնորդն, մի կար ընդ նմա. զի կորուսանես զոգիդ քո: Երբեմն տրտնջես, երբեմն նըզովես, երբեմն դիմաբանես, առ այլս չտրախտանես, զէր և գինազանդութիւն բառնաս յեղբարցն, զամենեսեան յամպարշտութիւն ուսուցանես. այնպիսւոյն վիրաւորութիւնն դատապարտութիւն է:

Տգէտ և անընտրող առաջնորդ՝ ի բժըշկելն խոցէ, և յուղղելն խորտակէ. ի սիրոյ տեղ՝ առելութիւն ցուցանէ, և յառելութեան՝ զէր. և խառնախնդրելով զեղբարսն անխաւսակ հանէ:

Որ սիրն եղեալ է և զրոյր շինուածն

յինքն հաստատեալ, եթէ խորտակի՝ զամենեսեան իվայր կործանէ: Այսպէս և առաջնորդն, եթէ ոչ ըստ կամացն Աստուծոյ վարի, զամենայն եղբայրութիւնն ատտանայի մատնէ. և փոխանակ առաջնորդութեանն՝ կորստեան պատճառ լինի: Մեծ հեթանոս և անբժշկելի չարիք է այնպիսի առաջնորդութիւնն. զի մարդիկ յօրինակն առաւել հային, քան ի շշմարտութիւնն:

Որ զմի ոք ի փոքրկանց գայթագղեցուցանէ, չէ արժանի գերեզմանի. իսկ որ բազմաց կորստեան պատճառ լինի, զնա զինչ ասես. ոչ ապարէն գործակից եղև սատանայի, և ընդ նմա տանջելոց է ի գեհենին:

Հոգևոր առաջնորդ՝ աստուածային հուր է, զապականարար ախտն այրէ, և զգիճութիւն ցամաքեցուցանէ, և կրօնաւորական հանդիսիս փոքէ որպէս զոսկի ի բոխս, և անապատ սրբութեամբ զեղբարսն Աստուծոյ ընծայէ. և ինքն ըստ հաւատարիմ ծառային Քրիստոսի ի վերայ տան բաղաքաց:

Առաջնորդ ազգի, որ է կռապաշտ, աւազակապետ է: Աւազակք բազումք կան յաշխարհի, և չեն ամենեքեան սպանողք. իսկ նա յամենայն աւուր սպանումբիւն գործէ: Ոչ գնարմինն միայն սպանանէ որպէս զաւազակն. այլ աստանայի գործակից լինի, և զհոգին կորուսանէ՝ որ նման հաւատացեալ: Նա զամենայն չարիս դիւրաւ գործէ, և զբարին ոչ երբէք:

Եթէ ամենայն եղբարցն հիւանդութիւնն քեզ ոչ ցաւէ, մի լինիր առաջնորդ:

Եթէ զանարժանն ըստ պիտոյիցն ոչ յադիմանես, մի լինիր վարդապետ:

Զվարդապետն քաջասիրտ սուրբ վարքն առնեն:

Ֆաղցր է մեղր, բայց ախտալից մարմնոյ վնաս առնէ. օգտակար է խրատ և յանդիմանութիւն, բայց որ զդէմս յարևմուտս է հաստատեալ՝ նմա անօգուտ է:

2776

0014993

2013

2001

2001

ՀՀ Ազգային գրադարան
գրամատուն գիրքերու

NL0014993